


ԿԱՐԵՆ ՄԱԹԿՈՍՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՅԱՆ

ՎԱՆՔԵՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
ԵՎ
ՁԵՌԱԳՐԵՐ

ԱՐՅԱԿ

ՎԱՆՔԵՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
ԵՎ
ՁԵՆԱԳՐԵՐ





Հ Բ Ա Մ Ա Ն Ա Ի

Ն . Ս . Օ . Տ . Տ . Գ Ա Ր Ե Գ Ն Ի Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ի

Վ Ե Հ Ա Փ Ա Ռ Ե Ի Ս Ր Բ Ա Չ Ն Ա Գ Ո Յ Ն
Կ Ա Թ Ո Ղ Ի Կ Ո Ս Ի Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

Կ Ա Յ Ո Ղ Ի Կ Ո Ս Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ա Ս Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ
ԹԱՄԱՐԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՌՅԱՆ

ՎԱՆՔԵՐ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
ԵՎ
ՁԵՌԱԳՐԵՐ



2025




ՆՎԻՐՎՈՒՄ Է ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՕԾՄԱՆԸ

CATHOLICOSATE OF ALL ARMENIANS

KAREN MATEVOSYAN
TAMARA MINASYAN

ARTSAKH

MONASTERIES,
CHURCHES,
AND MANUSCRIPTS



КАТОЛИКОСАТ ВСЕХ АРМЯН

КАРЕН МАТЕВОСЯН
ТАМАРА МИНАСЯН

АРЦАХ

МОНАСТЫРИ,
ЦЕРКВИ
И РУКОПИСИ

Holy Etchmiadzin | Св. Эчмиадзин

2025

ՀՏԴ 94(479.25):271.72:09
ԳՄԴ 63.3(5Հ)+86.373.2+76.1
Մ 151

Տպագրվում է
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական խորհրդի և
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Մաթևոսյան Կարեն, Մինասյան Թամարա
Մ 15 Արցախ. վանքեր եկեղեցիներ և ձեռագրեր / Կ. Մաթևոսյան, Թ. Մինասյան.–
Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ., 2025.– 164 էջ:

Գրքում ներկայացվում են Արցախի վանքերն ու եկեղեցիները՝ որպես հայ ձեռագրական մշակույթի կարևոր կենտրոններ: Տեղի վանական գրչատներում (Խաղավանքում, Դաղիվանքում, Գանձասարում և մյուսներում) ստեղծված ձեռագրերից բացի, այս երկրամասի վանքերում ու բնակավայրերում պահպանվելու շնորհիվ են մեր օրերը հասել հայկական հնագույն ամբողջական մատյան Վեհամոր Ավետարանը (7-րդ դ.), Հռոմկլայի Ավետարանը (1166 թ.), Անիի մանրանկարչության եզակի նմուշ՝ Հաղբատի Ավետարանը (1211 թ.), բացառիկ նկարազարդմամբ՝ Թարգմանչաց Ավետարանը (1232 թ.), Գանձասարի Կարմիր Ավետարանը (1237 թ.) և այլն: Ներկայացվում են նաև որոշ վանքերի պատմությանն ու եկեղեցիների հարդարանքին վերաբերող հարցեր:

Նախատեսված է հայոց պատմությամբ, մշակույթով և արվեստով զբաղվող մասնագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94(479.25):271.72:09
ԳՄԴ 63.3(5Հ)+86.373.2+76.1

ISBN 978-9939-59-347-0

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2025
© Մաթևոսյան Կարեն, 2025
© Մինասյան Թամարա, 2025



ՆԱԽԱԲԱՆ



այոց բազմադարյան պատմության միջնադարյան ժամանակաշրջանը չափազանց հարուստ է մշակութային ժառանգությամբ, ճարտարապետության և

արվեստի, ինչպես նաև՝ ձեռագրական մշակույթի հուշարձաններով: Հայերեն ձեռագիր գրքերի ստեղծման կարևորագույն կենտրոններից են եղել Հայաստանի հյուսիսարևելյան Արցախ և Ուտիք նահանգները: Միջնադարում այստեղ գրչատներ են գործել խոշոր վանքերում, սակայն բազմաթիվ ձեռագրեր են գրվել նաև տարբեր բնակավայրերում՝ «ընդ հովանեալ» տեղի եկեղեցիների ու սրբավայրերի:

Սույն գրքում ներկայացվում է Արցախը՝ իր վանքերով ու եկեղեցիներով, որպես հայ միջնադարյան հոգևոր և մշակութային խոշոր կենտրոններից մեկը, որն անքակտելիորեն կապված էր Հայաստանի մյուս շրջանների հետ: Երկրամասի հարյուրավոր վանքերն ու եկեղեցիները դարեր շարունակ եղել են գրավոր մշակույթի կենտրոններ, որտեղ ստեղծվել են մատենագրական երկեր, ընդօրինակվել ու նկարագրողվել են ձեռագիր մատյաններ: Միաժամանակ, տեղի գրչատների ձեռագրերից բացի, այս անառիկ երկրամասի վանքերում ու բնակավայրերում պահպանվելու շնորհիվ են մեր օրերը հասել հայկական հնագույն ամբողջական մատյան Վեհամոր Ավետարանը (7-րդ դ.), Անիի մանրանկարչության եզակի նմուշ Հաղբատի Ավետարանը (1211 թ.), Թարգմանչաց Ավետարանը (1232 թ.), որի բացառիկ մանրանկարների մեծ մասն ստեղծվել են Արցախում՝ 1305-1311 թթ., Կիլիկիայի Հայոց Կեռան թագուհու պատվիրած մի Ավետարան (1283 թ.), կաթողիկոսանիստ Հռոմկլայից հայտնի հնագույն Ավետարանը (1166 թ.) և այլ արժեքավոր ձեռագրեր:

Պատմական հանգամանքների բերումով, ավելի քան մեկ հազարամյակ Հայկական թագավորությունների (Երվանդունիներ, Արտաշեսյաններ, Արշակունիներ) մաս կազմելուց հետո, Արցախը 5-րդ դարում ներառվել է Սասանյանների ստեղծած Առան (Աղվանք) վարչատարածքային միավորի՝ մարզպանության մեջ: Քրիստոնեության ընդունումից հետո Աղվանքը եկեղեցական առումով կապված էր Հայոց եկեղեցու հետ և ընդունում էր նրա ավագությունը: Աղվանքի եպիսկոպոսները, հետագայում նաև կաթողիկոսները, ձեռնադրվում էին Հայոց կաթողիկոսի կողմից:

7-րդ դարի հայ հեղինակ Մովսես Կաղանկատվացու «Աղվանից աշխարհի պատմություն» երկը ինչպես բուն Աղվանքի, այնպես էլ Արցախի և Ուտիքի պատմության վաղ շրջանի գլխավոր սկզբնաղբյուրն է: Այդ երկի միջոցով մեզ են հասել տեղի հայագիր դպրության ուշագրավ հատվածներ, ինչպես՝ Վաչագան Գ Բարեպաշտ թագավորի կանոնները, նրան նվիրված «Վաչագանի վեպը», Ջևանշիր իշխանի աղոթքը,

նույն իշխանի մահվան կապակցությամբ գրված ողբը, որը հայոց այբուբենի տառերով ծայրակապ (աքրոստիկոս) է, և որի հեղինակը շնորհալի բանաստեղծ Դավթակ Զերթողն է:

Այս տարածաշրջանում, որը սկզբնաղբյուրներում երբեմն կոչվում է նաև «Հայոց Արևելից կողմանք» կամ «Փոքր Սյունիք», ստեղծվել և մեզ են հասել աստվածաբանական, դավանաբանական, թարգմանական, պատմական, մեկնողական, ուսումնական, ծիսական, բնագիտական և այլ բնույթի բազմաթիվ ձեռագիր մատյաններ: Այստեղ ստեղծվել են նշանավոր հայ հեղինակներ Մովսես Կաղանկատվացու, Մովսես Դասխուրանցու, Հովհան Մայրազունցու, Համամ Արևելցու, Դավիթ Ալավկաորդու, Մխիթար Գոշի, Վանական վարդապետի, Կիրակոս Գանձակեցու և նրանցից ոմանց աշակերտների աշխատանքները, որոնց բնօրինակները չեն պահպանվել, սակայն հայտնի են դրանց բազմաթիվ ընդօրինակությունները:

Բարեբախտաբար, նշանակալից թիվ են կազմում նաև Արցախից և հարակից շրջաններից մեր օրերը հասած ձեռագրերը, որոնք, հիմնականում, 13-18-րդ դարերից են և վկայում են այս երկրամասերում հայ գրավոր մշակույթի ու արվեստի անցած ուղու և ուրույն զարգացման մասին: Արցախի ձեռագրական արվեստն այս գեղատեսիլ երկրամասերի պատմական ու մշակութային հարուստ ժառանգության՝ քրիստոնեական ճարտարապետական ու քանդակագործական բազմաթիվ հուշարձանների, խաչքարերի և միջնադարյան այլ շինությունների ներդաշնակ մասն է:

Արցախում ստեղծված կամ երկար ժամանակ այստեղ պահված ձեռագրերի մեծ մասն այժմ պահպանվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, մյուսները գտնվում են աշխարհի տարբեր գրադարաններում, թանգարաններում, անհատների հավաքածուներում, իսկ որոշ մատյանների ճակատագիրն անհայտ է:

Վերջին տասնամյակում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը մի քանի կարևոր հրատարակություն է իրականացրել՝ նվիրված Արցախի և Ուտիքի գրչության կենտրոններին և ձեռագրական ժառանգությանը¹: Սույն գրքում մասամբ օգտագործվել են այդ ուսումնասիրությունների արդյունքները և նյութերը, որոնք լրացվել ու հարստացվել են պատմական, հիշատակարանային, վիճակագրական նոր տեղեկություններով և համապատասխան վերլուծություններով: Փոխվել է նաև ներկայացման ձևաչափը, մեծ տեղ է հատկացվում ոչ միայն ձեռագրերի ստեղծման, այլև՝ ձեռագրապահպանման երևույթին ու միջավայրին: Հասկանալի է, որ գրքում մենք չենք անդրադառնում Արցախի բոլոր վանքերին ու եկեղեցիներին, այլ հատկապես նրանց, որոնց ձեռագրական մշակույթի վերաբերյալ բավարար չափով փաստական նյութեր են հայտնի և որոնք պատմական և մշակութային որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Գիրքն օժտված է նաև հարուստ պատկերներով, որի համար շնորհակալություն ենք հայտնում լուսանկարների բոլոր հեղինակներին, իսկ ձեռագրերից արված լուսանկարների համար՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությանը:

Յավոք, 2023 թ. իրադարձությունների՝ հայրենի բնօրրանից Արցախի ողջ հայ բնակչության բռնագաղթի հետևանքով այժմ վտանգված է տեղում մնացած հայկական հազարավոր մեծ ու փոքր պատմամշակութային հուշարձանների գոյությունը, որոնք ոչ միայն հայ, այլև համաշխարհային մշակութային ժառանգության կարևոր արժեքներ են:

¹ Թ. Մինասյան, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, նույնի՝ Ուտիքի գրչության կենտրոնները, Երևան, 2020, Կ. Hakobyan, T. Minasyan, V. Torosyan, Manuscript heritage of Artsakh and Utik, Yerevan, 2022, վերահրատարակությունը ֆրանսերեն՝ Կ. Hacobian, T. Minassian, V. Torossian, Le Patrimoine Manuscrit de l'Artsakh et de l'Outilik, Érévan, 2022: Նշված գրքերը լույս են տեսել Կ. Մաթևոսյանի խմբագրությամբ:





ԽԱՂԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Խաղավանքը (Խաղարի վանք, Խաթրավանք) առաքելական շրջանում Արցախ աշխարհում քրիստոնեությունը տարածած երեք առաքյալներից մեկի՝ Խաղի

կամ Խաղայի անունով է: Նա և մյուս երկուսը՝ Եղիշեն (Եղիշա) և Գաղին, ավանդաբար համարվում են Քրիստոսի 72 աշակերտներից, և նրանց բոլորի մասին ասվում է, թե Աղվանք և Արցախ են եկել Թադեոս առաքյալի հրամանով, որից հնարավոր է ենթադրել, որ գուցե վերջինիս աշակերտներն էին: Այդ մասին հայտնում է Վանական Վարդապետը (13-րդ դ.). «Եւ Եղիշէ եւ Խաղա երկուք յԵօթանասանիցն են եւ գնացին ի կողմանս Ադուանից՝ հրամանաւ Թադէոսի եւ անդ կատարեցան»²:

Վանքը Վերին Խաչենի հոգևոր-եկեղեցական կենտրոնն էր, սկզբնապես եղել է Մեծ Կողմանք կամ Մեծ Կվենք գավառի³ առաջնորդանիստը և մեծ դեր է կատարել նաև մշակութային առումով: Խաղավանքը գտնվում է Վաղուհաս գյուղից մոտ 7-8 կմ արևմուտք՝ Թարթառ (Տրտու) գետի (Կուրի վտակ) աջ կողմում, ձորերով շրջապատված ու դժվարամատչելի, անտառածածկ մի լեռնաբազկի վրա⁴ (*նկար 1*):

Վաղ միջնադարում հիմնադրված վանքը 12-րդ դարում դառնում է Վերին Խաչենի կամ Ծարի իշխանության հոգևոր կենտրոնը և տոհմական տապանատունը: Վախթանգ իշխանի մահից հետո, երբ Հաթերքի իշխանության տարածքը բաժանվեց Ներքին և Վերին խաչենցիների միջև, և Հաթերքի համբավավոր առաքելադիր Գաղիվանքը դարձավ Ծարի իշխանության հոգևոր կենտրոնն ու տոհմական տապանատունը, Խաղավանքը դարձյալ մնաց եպիսկոպոսանիստ և գլխավոր տոհմական տապանատուն (*նկար 2*):

Սելջուկների գործած ավերածություններից հետո (1139 և 1143 թթ.) վանքի վերականգնումը կապվում է Վախթանգյան տոհմից Հովհաննես եպիսկոպոս Խաչենցու անվան հետ: Վիմագիր արձանագրություններում ու ձեռագիր աղբյուրներում նա հիշվում է որպես «Հովհաննես Խաչենցի» կամ «Հովհաննես Խաչենի գավառից»: Պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ նա Սարգիս ամիրսպասալարի որդիների՝ Չաքարեի և Իվանեի դաստիարակն էր՝ «սնուցող նոցուն իշխանացն» և Չաքարեի խոստովանահայրը՝ «Չաքարե խոստովանութեամբ որդի էր նորա հոգետը»⁵: Չաքարեն նրան Սանահինի (1170-80-ական թթ.), ապա Հաղբատի (1180-ական թթ.) վանահայր է նշանակում: Իր գործունեության ընթացքում Հովհաննեսը վերակառուցեց եկեղեցիներ Սանահինում, Հաղբատում ու Խաչենում և պատմության մեջ մնաց որպես բարերար-շինարար, գրչության արվեստի և գիտության հովանավոր:

Նրա առաջնորդության տարիներին Հաղբատում, Մանահինում ու Խաչենում ստեղծվեցին արժեքավոր ձեռագրեր: Խոսելով Հովհաննեսի գործունեության մասին՝ Կիրակոս Գանձակեցին նրան անվանում է «առաքինի և սուրբ այր», իսկ Հաղբատավանքի մեծ գավթի՝ նրա կատարած շինարարության մասին պատմում է մեծ ակնածանքով⁶: 1195-1204 թվականներին Հովհաննես Խաչենցին վերակառուցում է Խաղավանքի Սբ. Աստվածածին գլխավոր եկեղեցին, որը վնասվել էր երկրաշարժից (1139 թ.) և սելջուկ-թուրքերի ասպատակություններից: Այս քառասյուն եկեղեցու գմբեթն ինքնատիպ է, քանի որ ունի հայկական եկեղեցիների համար անսովոր, սակայն գավիթներում կիրառված ձև (*նկար 3*): Մասնավորապես այդպիսին է Մանահինի 1181 թ. կառուցված գավթի գմբեթը⁷: Եկեղեցու սյուների խարխուլներին քանդակված են ավետարանիչների խորհրդանիշները (*նկար 4*): Վանքն ընդհանրապես հարուստ է վիմական արձանագրություններով և խաչքարերով: Դրանց մեջ դասական հարդարանքով աչքի են ընկնում եկեղեցու և զանգակատան միջև դրված՝ 1219 և 1220 թվականների զույգ խաչքարերը (*նկար 5*): Հովհաննես եպիսկոպոսի գործունեության գլխավոր ձեռքբերումներից մեկն այն է, որ եկեղեցաշինության հետ մեկտեղ նա այնտեղ մեծաքանակ ձեռագիր մատյաններ ու խաչեր է հավաքում՝ հիմնելով յուրատիպ մատենադարան: Նաև՝ հին ու նոր այգիներ է նվիրում վանքին, ապա բոլորը Հաթերքի տեր Վախթանգի միջնորդությամբ ընծայում իր ավագ եղբայր Հասանին ու նրա որդիներին՝ այդ մասին վիմագիր թողնելով:

- 1 Թարթառ գետի աջակողմյան անտառածածկ լեռնալանջը և Խաղավանքը (*լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.*)
- 2 Խաղավանքի եկեղեցին և զանգակատունը հյուսիս-արևմուտքից (*լուսանկարը՝ Չրայր Բազէի, 2016 թ.*)





3

«Ի ՈՃԳ (1204) քուխ, ես տէր Յոհանէս շինեցի զեկեղեցիս եւ ժողովեցի զխաչ եւ զգիրք որ ի սմա, եւ արկի զՋոթացն այգին եւ զմատաղիսն՝ բազում աշխատութեամբ: Եւ ետու զվանքս իւր ամէն սահմանաւ իմ աւագ աղբարս Հասանայ եւ իւր որդեացն՝ Հաթերքոյ տեառնն միջնորդութեամբ»⁸: Ապա շարունակվում է արձանագրությունը նույն գրով, բայց արդեն՝ Հովհաննեսի ավագ եղբայր Հասանի անունից. «Յանուն Աստուծոյ այս իմ գիր է Հասանայ. որ երբ իմ աղբերս զեկեղեցիս շինեաց ու զվանքս ինձ երես, ես զԽճճորոբակս իւր սահմանովն ի եկեղեցիս տուի» (նկար 6)⁹:

Այս Հասանի կինն էր երկրի փաստական տերեր Չաքարե և Իվանե Չաքարյանների քույրը՝ Դովի: Վերջինս ամուսնու մահից հետո վարում է իշխանությունը, նրա գործունեության շնորհիվ հզորանում է Ծարի իշխանությունը, ծաղ-



4



5

կում են հոգևոր կենտրոնները, առաջին հերթին նաև՝ Խաղավանքը: Ըստ 1225 թ. արձանագրության՝ Դովի իշխանուհին այստեղ կառուցել է եկեղեցու գավիթը և մի մատուռ, վանքին նվիրել այգիներ և մի Ավետարան¹⁰: Նրա անունով էլ իշխանական տունը կոչվում է Դովիյան:


Վերադառնալով արձանագրությանը՝ նկատենք, որ, փաստորեն, Հովհաննես եպիսկոպոսը նոր շինությանն է նվիրում Ջոթացն այգին և բազում աշխատությամբ հիմնած նորատունկները (զմատաղիսն), իսկ Հասանը՝ նվիրում է Խճճորաբակը՝ «իւր սահմանովն», որ, հավանաբար, մեծ այգի կամ հողամաս էր: Պետք է ենթադրել, որ խոսքը եկեղեցուն կից մի հաստատության մասին է, որտեղ ձեռագրերը ոչ թե պետք է միայն հավաքվեն, պահվեն, այլև՝ բազմանան. այսինքն՝ այն մատենադարան է և

3 Խաղավանքի եկեղեցու գմբեթը ներսից (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)

4 Մարկոս ավետարանչի խորհրդանիշ առյուծի քանդակը եկեղեցու հարավարևմտյան սյան խարսխին (լուսանկարը՝ Չրայր Բազեի, 2016 թ.)


5 Խաչքարեր եկեղեցու և զանգակատան միջև (լուսանկարը՝ Չրայր Բազեի, 2016 թ.)

գրչության վայր կամ դպրոց, որի գոյատևման և ծաղկման համար եկամուտի աղբյուրներ էին հարկավոր, որպիսիք էին այգիներն ու հողերը: Ըստ Արտաշես Մաքևոսյանի՝ «սույն արձանագրությունը Խաղայի վանքի դպրոցի, գրչության կենտրոնի, մատենադարանի հիմնադրման վավերագիրն է, որը հաստատվում է նաև նրա փառավոր գործունեությամբ»¹¹:



6

Խաղավանքի համալիրի առանձին հուշարձանների ուսումնասիրությունը Բագրատ Ուլուբաբյանին և Մուրադ Հասրաբյանին բերել է այն եզրակացության, որ դրանցից մեկն իր ճարտարապետությամբ համապատասխանում է գրչատան և մատենադարանի, ինչպես նաև՝ դպրոցի, որի քառակուսի դահլիճը մեծ երդիկով ծառայել է ուսումնական պարապմունքների և գրչությամբ զբաղվելու համար, այսինքն՝ դպրատուն և գրչատուն, իսկ խոշոր որմնախորշերով հաջորդ դահլիճը՝ ձեռագրատուն-մատենադարան, որը նման է Սանահնի, Հաղբատի, Գոշավանքի, Մաղմոսավանքի, Հոռոմոսի, Դաղիվանքի գրատներին¹²: Ցավոք, չգիտենք, թե Հովհաննես եպիսկոպոսն իր նորակառույց մատենադարանում քանի ձեռագիր է հավաքել, բայց, ինչպես երևում է, նա իր սաներին նույնպես պատվիրել է ձեռագրերով հարստացնել այն: Այդ մասին կարելի է ենթադրել նշանավոր Հաղբատի Ավետարանի (ՄՄ 6288) 1223 թ. հիշատակարանից, որը 1211 թ. Անիում նկարագարովելուց և Արջոռախի վանքին ավերակներովելուց ընդամենը 12 տարի անց ձեռք է բերվել Անիի շրջան եկած ու ժամանակին Խաղավանքի դպրոցն ավարտած Մարգիս քահանայի կողմից, և որպես նվեր ուղարկվել Մեծ կողմանց եպիսկոպոսարան, այսինքն՝ Խաղավանք:



7

Ի՞նչ ենք իմանում Մարգիս քահանայի հիշատակարանից: Սկզբում նա հիշատակվում է որպես ստացող, բայց ակնարկվում է նաև ստացած կրթության մասին՝ «Մարգիս քահանայ սնեալ սրբութեամբ ի մէջ եկեղեցոյ, եւ զարգացեալ ի մէջ իմաստուն եւ հոգետր արանց, ըստացաւ զկենսաբեր Աւետարանս»¹³: Այնուհետև ասվում է, որ Մարգիս քահանան «իբրեւ զիմաստուն վաճառական», այդ թանկագին Ավետարանը՝ «մեծայծախ, ոսկեգիր եւ ոսկեճաճանչ ծաղկաւք զարդարեալե, գտել է .ի գաւառին Անոյ» և այն ձեռք բերել՝ «ի հալալ ընչից իւրոց»: Բայց նա մեծածախ մատչանը ձեռք է բերել ոչ թե իր համար, այլ որպես ընծա ուղարկել է Մեծկողմանց եպիսկոպոսարանին, որն իր սննդյան, այսինքն՝ կրթության վայրն է. «եւ ընծայեաք զսա **Մեծկողմանց**

Եպիսկոպոսարանիս, որ է իւր տեղի սնընդեան» (*նկար 7*): Դրա դիմաց Սարգսին տարեկան երկու ժամ պատարագ են հատկացրել Ս. Սարգսի տոնի օրը:

Հիշատակարանի վերջաբանից երևում է, որ Սարգսին անձամբ ինքը չի տարել մատյանը Խաղավանք, այլ այն ուղարկել է ոմն Մխիթարի միջոցով՝ «Ընծայեցաւ կենսաբեր Աւետարանս ե ի հայրապետութեանս տեսռն **Յոհաննէսի**: Արդ, որք ընթեռնոյք եւ լուսաորէք կամ գաղափար առնոյք, **զՍարգիս** եւ **զՄխիթար**, որ գնեաց եւ եբեր զԱւետարանս»¹⁴: Այսինքն՝ նա նպատակ է ունեցել օր առաջ իր հայրենի վանք հասցնել թանկագին նվերը, որն այնքան ցանկալի պիտի լիներ նաև տեղի հոգևոր առաջնորդի՝ Հովհաննես Բ Եպիսկոպոսի համար, որը Հովհաննես Խաչենցու Հասան եղբոր որդին էր:

Կարելի է ենթադրել, որ Սարգիս քահանան Խաղավանքի դպրոցի միակ շրջանավարտը չի եղել, որը ձեռագիր է նվիրել հարազատ վանքի մատենադարանին: Բայց այն, որ այստեղ ձեռագրեր ժողովելը կարևոր գործ է նկատվել նաև վանքի հովանավոր իշխանների համար, արդեն վերևում տեսանք Դոփի իշխանուհու արձանագրությունից, որը մի Ավետարան է նվիրել 1225 թ., և կտեսնենք նաև քիչ հետո՝ վերջինիս որդի Գրիգոր Դոփյան իշխանի գործունեության մասին խոսելիս:


Սակայն, մինչ այդ, համառոտ անդրադառնանք Սարգիս քահանայի ընծայած Ավետարանին, քանի որ այն Հայոց Անի մայրաքաղաքի մանրանկարչության առավել հայտնի և հատկանշական միակ մատյանն է, ըստ էության՝ եզակի նմուշ, քանի որ նման նկարազարդմամբ այլ մատյան մեզ պարզապես չի հասել:

Ավետարանը տևական ժամանակ Խաղավանքում մնալուց հետո Արցախում է պահվել ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը (այդ ընթացքում երեք անգամ նորոգվել ու կազմվել է) (*նկար 8*), որտեղ նրա վերջին հանգրվանը Գարդման գավառի Գետաշեն գյուղն էր, և որտեղից մատյանը Ս. Էջմիածին է բերել Գարեգին վարդապետ Հովսեփյանը (հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս): Հենց նա էլ գնահատելով մատյանի պատկերազարդման բացառիկությունը՝ 1935 թ. դրա մասին հրատարակել է առաջին ուսումնասիրությունը՝ «Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց

(Գետաշենի Աւետարանը)» վերնագրով¹⁵: Այդ ժամանակ վաստակաշատ հետազոտողին հայտնի չէր ձեռագրի՝ Անիում նկարազարդված լինելու հանգամանքը, որը պարզվեց հետագայում՝ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի ուսումնասիրության շնորհիվ¹⁶:

Ձեռագիրը գրականության մեջ Հաղբատի Ավետարան է կոչվել՝ գրչության վայրի անունով, քանի որ Հաղբատի վանքում ուսում ստացած Սահակ Անեցին 1211 թ. այդտեղ է ընդօրինակել տվել մատյանը: Սակայն սույն ձեռագրի գլխավոր արժեքը, ինչպես նշվեց, նրա մանրանկարչությունն է, որն ստեղծված լինելով քաղաքային միջավայրում՝ ոչ միայն աչքի է ընկնում շքեղությամբ, այլև ներթափանցված է աշխարհիկ շնչով:

Նկարիչ Մարգարեն այստեղ պատկերել է իրական մարդկանց, խորանների լուսանցքներում՝ վանահայր Եղբայրիկին, որին կոչում է իր վանքի առաջնորդը (հենց այս պատկերի՝ Եղբայրիկի՝ Անիի Բեխենց վանքի առաջնորդը լինելու շնորհիվ է պարզվել նկարազարդման վայրը), կազմարար Աբրահամին (որը Հռոմոսի վանքից էր), իր և ստացող Սահակի մտերիմ Շերանիկին, որն ուսին հենած՝ կեռագլուխ փայ-



8

6 Խաղավանքում ձեռագրեր հավաքելու մասին 1204 թ. արձանագրությունը (*այժմ՝ Մաշտոցի անվ. Մատենադարանի ցուցասրահ*)

7 Հաղբատի Ավետարանի 1223 թ. հիշատակարանի հատված՝ ձեռագիրը Մեծկողմանց եպիսկոպոսարանին նվիրաբերման մասին (*ՄՄ 6288, էջ 359ա*)

8 Հաղբատի Ավետարանը՝ Արցախում պատրաստված կազմով

տից մի մեծ ձուկ ունի կախած: Այս պատկերներին կից նկարիչը գրել է նրանց անունները, բայց ունի ևս երկու աշխարհականի պատկեր՝ իրենց բնորոշ քաղաքային տարազով, հագուկապով, որոնց անունները չի գրել: Ավետարանի հարդարանքում իրական մարդկանց պատկերների հայտնվելն անսովոր է տվյալ ժամանակի համար: Չարմանալի է հատկապես նկարչի թողած մտերմիկ մակագրությունը Շերանիկի պատկերի մոտ՝ «Շերանիկ, քանի գաս՝ ձուկն բեր» (*նկար 9*)¹⁷:

Ձեռագրի ընծայական մանրանկարում նկարիչ Մարգարեն պատկերել է Սահակին և նրա եղբայր Առաքելին, իսկ «Մուտք Երուսաղեմ» միակ տերունական նկարում՝ որպես Քրիստոսին դիմավորողներ, ներկայացրել է Սահակ Անեցու ընտանիքն իր ողջ կազմով, որոնց անունները նշված են գլխավոր հիշատակարանում: Նրանք են՝ ստացողի հայրը՝ Ռոմանոսը, որը Քրիստոսին դիմավորում է եռահարկ շինության մուտքի մոտ, մայրը՝ Կատան՝ պատկերված է շենքի պատուհանում, երկու քույրերը՝ Չարհան և Հռոնոմ տիկինը՝ պատշգամբում, իսկ Սահակն իր եղբայրներ Առաքելի և Իպատոսի հետ՝ ծառերի վրա, որտեղից ճյուղեր են կտրում և նետում ճանապարհին: Մանրանկարն աչքի է ընկնում նաև հորինվածքային ուշագրավ համաչափություններով, ճարտարապետական մանրամասների մեջ Անիի կառույցներից կրած ազդեցությամբ, Քրիստոսին դիմավորողների տարազով և այլն (*նկար 10*)¹⁸: Միով բանիվ, Հաղբատի Ավետարանն իր էջերում պահպանել է Անիի քաղաքացիների մի փոքրիկ պատկերասրահ և անգնահատելի արժեք ունի ինչպես գեղարվեստական, այնպես էլ պատմաագագրական տեսակետից:

Խաղավանքի մատենադարանի մի շարք այլ ձեռագրերի, այդ թվում՝ Հռոմկլայի հնագույն Ավետարանի և այստեղ նկարագրոված Թարգմանչաց Ավետարանի մասին ավելի հանգամանորեն կնշենք ստորև՝ առանձին ենթավերնագրերով: Այստեղ մեր խոսքն ավարտենք՝ ներկայացնելով ուշ միջնադարում Խաղավանքում պահված հայերեն հնագույն ամբողջական ձեռագրերից մեկը՝ Վեհափառի Ավետարանը (ՄՄ 10780):


Հնագրական տվյալներից ելնելով՝ մագաղաթյա այս մատյանը պատկանում է 10-րդ դարին, հավանաբար ստեղծված է եղել Վասպուրականի շրջանում, սակայն նրա մեջ ստեղծման ժամանակի հիշատակարան չի պահպանվել: Մատյանն ունի հետագայի բազմաթիվ հիշատակագրություններ, որոնք որոշակի պատկերացում են տալիս նրա մասին: Ձեռագրագիտական ու հնագրական վերլուծությունը ցույց է տալիս, որ ձեռագրի գրիչը նաև մանրանկարիչն է, որը հավասարապես տիրապետել է գրի բոլոր տեսակներին: Մատյանն ունի հնավանդ պատկերագրությամբ խորաններ:

Վեհափառի Ավետարանը ձեռագրական մշակույթի եզակի օրինակ է, հատկապես՝ տերունական նկարների ինքնատիպ պատկերագրությամբ: Այդ մանրանկարներն արխայիկ են, ընդ որում՝ մատյանի թերթերում դրանք տեքստի նկատմամբ շեղադիր են, որից ենթադրվել է, որ ծագում են մագաղաթյա գալարափաթեթի վրա եղած՝ առնվազն 5-6-րդ դդ. նախօրինակից (*նկար 11*): Իսկ ձեռագրի մանրանկարներից մեկը, որը հավանաբար ներկայացնում է ձեռագրի պատվիրատուներին՝ ստացողի, նրա կնոջ ու ազգականների պատկերը, 974 թ. Ծուղրուքի Ավետարանի ստացողների պատկերների հետ միասին համարվում են պատվիրատուների պահպանված ամենավաղ օրինակները հայկական մանրանկարչության մեջ (*նկար 12*):

Ձեռագրում պահպանված առաջին հիշատակարանը նորոգման վերաբերյալ է (1088 թ.): Այս ժամանակ ձեռագիրը նորոգել է Սարգիս քահանան¹⁹: 15-րդ դարում

9 Հաղբատի Ավետարանի խորան՝ Շերանիկի պատկերով, նկարիչ Մարգարե, 1211 թ., Անի (ՄՄ 6288, էջ 8բ)







10 Մուտք Երուսաղեմ, Հաղբատի Ավետարան, նկարիչ՝ Մարգարե, 1211 թ., ԱՆԻ (ՄՄ 6288, էջ 16բ)

11 Ձեռագրի էջ՝ Տյառնընդառաջի շեղադիր մանրանկարով, Վեհափառի Ավետարան, 10-րդ դ. (ՄՄ 10780, էջ 136ա)

Ավետարանը ձեռք է բերել Տաթևի սան Սարգիս վանականը և տարել Արցախի Փառիստսի գավառի Քյուրլար գյուղ, որտեղ բնակվում էին նրա հարազատները: Մատյանը գյուղի անունով կոչվում է Քյուրլարի Ավետարան, իսկ հիշատակարաններում հիշվում են Սարգիսի հետնորդները, որոնք սերնդեսերունդ խնամքով պահում են Ավետարանը: Հետագայում ձեռագիրը մի քանի անգամ գերվել ու փրկագնվել է, մի քանի անգամ՝ նորոգվել ու կազմվել: Իսկ երբ լեզգիները հիմնահատակ ավերում են գյուղը, կողոպտիչները, չարժևորելով մատյանը, տանում են միայն արծաթյա կազմը և թաշկինակը, որով փաթաթում էին ձեռագիրը՝ թողնելով անկազմ մագաղաթյա Ավետարանը:



12

1720 թվականին հարևան Նյուկար գյուղի բնակիչներն այն կրկին նորոգում ու կազմում են: 1729 թվականին ձեռագիրն ստանում է Շահոն, որի որդի Խաչատուրն այն նվիրում է Խաղավանքին՝ այդ մասին հիշատագություն թողնելով. «Ես Խաչատուր միաբանեցայ սուրբ Ավետարանիս, տըվի /// Խաթրավանքն» (ՄՄ 10780, 3ա): 1978 թ. Ավետարանը ձեռք է բերում Ամենայն Հայոց Վազգեն Ա կաթողիկոսը և նվիրում Մաշտոցյան Մատենադարանին՝ «ի վայելումն Ազգիս Հայոց»:

Վեհափառի Ավետարանը, կարևորվելով հնության և ինքնատիպ պատկերազարդման առումով, 2000 թ.՝ Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով հրատարակվեց ամբողջական նմանահանությանը՝ Արտաշես Մաթևոսյանի ձեռագրագիտական ու հնագրական և արվեստաբան Տատյանա Իզմայլովայի մանրանկարչական ուսումնասիրությամբ²⁰:

Հռոմկլայի հնագույն Ավետարանը Խաղավանքում (ՄՄ 7347)

Հայոց միջնադարյան պատմության մեջ բացառիկ դեր ունեցած վայրերից է Հռոմկլա անառիկ բերդը, որը 1151-1292 թթ. եղել է Հայոց կաթողիկոսների աթոռանիստը և կարևորագույն հոգևոր-մշակութային կենտրոն: Հռոմկլայում գործել է գրչատուն՝ հմուտ գրիչներով, մանրանկարիչներով և կազմարարներով, որոնց ստեղծած շուրջ չորս տասնյակ մատյաններ են հասել մեր օրերը: Դրանցից հնագույնը մագաղաթյա մի Ավետարան է՝ ստեղծված 1166 թ., որի ուղին՝ մինչև մեր օրեր, յուրօրինակ մի ողիսական է հիշեցնում: Այդ ճանապարհի մի մեծ հատված՝ 13-րդ դ. կեսերից մինչև 19-րդ դ. սկիզբը, անցել է Արցախում: Բայց այս ձեռագիրն արժեքավոր է նաև նրա էջերում Գրիգոր Գոփյան իշխանի թողած հիշատակարանով, որը գրվել է Խաղա-

12 Ձեռագրի պատվիրատուն և նրա ազգականները, Վեհափառի Ավետարան, 10-րդ դ. (ՄՄ 10780, էջ 136ա)

վանքում՝ 1244 թ., և ուշագրավ փաստագրում է այն մասին, թե ինչպես են սելջուկյան Ռումի (կամ Իկոնիայի) սուլթանության դեմ մոնղոլների արշավանքի մասնակից հայ իշխանները գրավյալ վայրերից իրենց ձեռքն ընկած ձեռագրերը բերել Խաղապանք:

Սակայն մինչև այս հետաքրքիր պատմության մասին խոսելը, համառոտ անդրադառնանք Հռոմկլային և սույն արժեքավոր մատյանին:

1045 թ. Բագրատունյաց թագավորության անկումից և մայրաքաղաք Անիի բյուզանդական զավթումից հետո, երբ Հայոց կաթողիկոսական աթոռը նույնպես այդտեղից դուրս բերվեց ու տեղափոխվեց Փոքր Հայք (Սեբաստիա, Թավրուր, Ծամնդավ), սկսվեց հայ ազնվականության, զինվորականության և բնակչության այլ շերտերի արտագաղթ՝ դեպի կայսրության՝ Հայաստանի սահմանամերձ շրջանները: Հենց այդպիսի մի տարածքում է Հռոմկլան, որը գտնվում է Եփրատ գետի աջ ափին, Եփրատացիք կոչվող երկրամասում: 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում բյուզանդացիների՝ սելջուկներից կրած ջախջախիչ պարտությունից հետո հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայի սահմաններում առաջացան կիսանկախ հայկական իշխանություններ, որոնց կազմում էր Հռոմկլան, իսկ 1116 թ. անցավ խաչակիրների Եդեսիայի կոմսությանը:

Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու (1113-1166)՝ ապահով աթոռանիստ գտնելու ջանքերի և որոշ բարենպաստ հանգամանքների շնորհիվ 1151 թ. Հռոմկլայի բերդը դառնում է ոչ միայն Հայոց կաթողիկոսների նստավայրը, այլև՝ նրանց սեփականությունը²¹: Գրիգոր Գ Պահլավունի կաթողիկոսը եղավ Հռոմկլայի առաջին եկեղեցիների հիմնադիրը՝ կառուցելով Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Աստվածածին եկեղեցիները: Հաջորդ կաթողիկոսները՝ Ներսես Դ Կլայեցին (Շնորհալին) (1166-1173) և Գրիգոր Դ Տղան (1173-1193) նպաստեցին աթոռանիստի հեղինակության աճին ու բարգավաճմանը. նրանք միաժամանակ մատենագրական, աստվածաբանական, գրական մեծ վաստակ ունեցող հեղինակներ են:

Հռոմկլան եղել է եկեղեցական ժողովների գումարման վայր, ունեցել հարուստ կաթողիկոսական դիվան, որի բազմաթիվ վավերագրեր հասել են մինչև մեր օրերը²²: Բացառիկ է եղել Հռոմկլան որպես գրչության կենտրոն: Տեղի գրչատունը գործում էր անմիջականորեն կաթողիկոսների հովանավորությամբ, ձեռագրական պատվերներ ստանում ոչ միայն բարձրաստիճան հոգևորականներից, այլև՝ Կիլիկյան Հայաստանի թագավորներից, թագուհիներից, իշխաններից: Գրչության և մանրանկարչության արվեստը Հռոմկլայում հասել է բարձրագույն մակարդակի: Բավական է նշել, որ իր ողջ կյանքն ու գործունեությունն այստեղ է անցկացրել հայ մանրանկարչության ամենահայտնի վարպետներից մեկը՝ Թորոս Ռոսլինը:

Ի դեպ, չնայած այն բանին, որ այս մեծ արվեստագետի բոլոր մատյաններն ստեղծվել են Հռոմկլայում, հետագայում, սակայն, հատուկ անուններ են ստացել իրենց պահպանության վայրերի անուններով, ինչպես՝ Ջեյթունի Ավետարան, Մալաթիայի Ավետարան, Սեբաստիայի Ավետարան: Քանի որ հայերեն նշանավոր ձեռագրերի անվանակոչման ժամանակ նկատի են առնվում նաև դրանց ստեղծման վայրերի անունները (օրինակ՝ Հաղբատի Ավետարան, Սկևռայի Ավետարան և այլն), կարծում ենք՝ ճիշտ կլինի, որ Հռոմկլայից մեզ հասած ամենավաղ մատյանը՝ Մատենադարանի թիվ 7347 ձեռագիրը, որը նաև արժեքավոր է որպես Կիլիկիայի հայկական մանրանկարչության սկզբնավորման շրջանի բացառիկ հուշարձան, կոչվի **Հռոմկլայի Ավետարան** անունով: Ավելացնենք, որ փորձություններով լի ճանապարհ անցած այս մատյանի համար ինչ-որ ժամանակ հատուկ մատուռ է կառուցվել՝ Սուրբ Ավետարան անունով (*այդ մասին՝ քիչ անց*):



13

Հռոմկլայում 1166 թ. ընդօրինակված Ավետարանի գրիչը և ծաղկողն է Կոզմա Խարբերդցին: Սա Կոզմայից պահպանված ամենավաղ մատյանն է, հայտնի են ևս չորսը՝ գրված ավելի ուշ՝ հիմնականում Խարբերդի շրջանում: Ձեռագիրը գրվել է Հռոմկլայում արթոսակալած առաջին կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու կյանքի վերջին տարում, իսկ պատվիրատուն Առաքել արքեպիսկոպոսն է, որ հիշատակարանում կոչվում է «Անծտունեայ»²³ վերադիտող, այսինքն՝ հոգևոր առաջնորդ: Հիշատակարանում Կոզման նշում է, որ ինքը նաև ձեռագրի մանրանկարիչն է՝ այդ մասին գրելով. «Ըստ կարողութեան իմոյ յամենայն գարութենէ իմմէ բազում աշխատեցի եւ ծաղկերանգ եւ վարդափթիթ ոսկեհումն զարդարեցի...»²⁴:

13 Ընծայական, Հռոմկլայի Ավետարան, նկարիչ՝ Կոզմա, 1166 թ., Հռոմկլա (ՄՄ 7347, էջ 11բ)

14 Խորաններ, Հռոմկլայի Ավետարան, նկարիչ՝ Կոզմա, 1166 թ., Հռոմկլա (ՄՄ 7347, էջ 9բ-10ա)

Ուշագրավ է, որ ձեռագրում առկա է ստացող Առաքելի դիմանկարը: Նա պատկերված է՝ ձեռքին իր պատվիրած զարդարուն կազմով Ավետարանը, որն ընծայում է գահին բազմած Քրիստոսին (*նկար 13*): Պատկերի վերին ձախ կողմում ստացողի անունից գրված չափածո քառատողում Քրիստոսին ուղղված ընծայականն է, իսկ ավելի ցածում գրված է՝ «Տէր Առաքեալ՝ ստացաղ սորա»²⁵: Նկատենք, որ Առաքել արքեպիսկոպոսի դիմանկարը հայերեն ձեռագրերում պահպանված ստացողների հնագույն պատկերներից մեկն է:

Չեռագիրն ունի նաև տասը խորան, չորս ավետարանիչների պատկերները՝ համապատասխան անվանաբերքերով, լուսանցազարդեր և զարդագրեր (*նկար 14*): Այս մատյանի հարուստ նկարազարդումն արժեքավոր է հատկապես Կիլիկիայի հայ մանրանկարչության ուսումնասիրության տեսանկյունից, քանի որ այն գտնվում է այդ նոր և յուրահատուկ գեղարվեստական ուղղության ակունքներում:

Դատելով Առաքել արքեպիսկոպոսի՝ Խարբերդի շրջանի առաջնորդը լինելու փաստից, պետք է կարծել, որ Հռոմկլայից հետո մատյանի հաջորդ հանգրվանը եղել է ստացողի կեցավայրը: Սակայն 13-րդ դարի 40-ական թվականներին, մեզ անհայտ հանգամանքներում, Ավետարանը հայտնվել է Կեսարիայում: Այս մասին է վկայում ձեռագրում պահպանված՝ Խաչենի Գրիգոր Դոփյան իշխանի արժեքավոր հիշատակարանը:



Գրիգոր Դովյանի՝ Խաղավանքի հիշատակարանը

ՄՄ 7347 ձեռագրում պահպանված Գրիգոր Դովյանի հիշատակարանը մի ուշագրավ սկզբնաղբյուր է մոնղոլների գերիշխանությունն ընդունած հայ իշխանների և նրանց զորքի՝ մոնղոլական բանակի կազմում ռազմական գործողություններին մասնակցության, մասնավորապես՝ դեպի Ռուսի սելջուկյան սուլթանություն կատարած արշավանքների մասին: Դրա վերաբերյալ կարևոր մանրամասներ է հաղորդում նաև պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ պատմելով դեպի Կարին արշավանքի մասին, որի գրավումից հետո հայ իշխանները գերված քրիստոնյաների մի մասին ազատում են, նաև՝ փրկագնում եկեղեցական սրբություններ և բազմաթիվ ձեռագրեր: Պատմիչի խոսքերին համահունչ, այդ դեպքերի մասին պատմում է նաև Գրիգոր իշխանի հիշատակարանը: Սա կարելի է մի բացառիկ օրինակ համարել այն բանի, երբ պատմիչի երկից հայտնի արշավանքի ու դրա հետ կապված դեպքերի մասին հաստատող վկայություններ ենք գտնում՝ գրված հենց արշավանքի անմիջական մասնակցի կողմից:


Կիրակոս Գանձակեցու տեղեկությունը կարևոր է հատկապես մոնղոլական բանակի կազմում եղած հայ իշխանների թվարկման տեսանկյունից: 1242 թ. արշավանքի կապակցությամբ խոսելով հայ գերիներին ազատելու մասին՝ նա գրում է. «Այլ եւ ի գերելոց անտի զբազումս զնեցին՝ զարս եւ զկանայս եւ զմանկտի, զեպիսկոպոսս եւ զքահանայս եւ զսարկաւագունս՝ որքան հմար էր, զնեցին իշխանքն քրիստոնեայք **Աւագն եւ Շահնշահն, եւ Աղբուղայն, որդին Վահրամայ, եւ Գրիգոր Խաչենեցի՝ Գօփին որդի**, որ էր այր երկիւղած ի Տեառնէ, եւ զօրք նոցին, որոց վարձահատոյց Քրիստոս եղիցի. եւ զամենեսեան ազատ արձակեցին»²⁶: Իսկ 1243 թ. արշավանքի կապակցությամբ նա արդեն նշվածներին ավելացնում է Խաչենի իշխան Հասան Ջալալի անունը²⁷:

Կիրակոս Գանձակեցին հատուկ շեշտում է Կարինում բազմաթիվ ձեռագրերի փրկագնման իրողությունը՝ այդ մասին գրելով՝ «**անթիւ գոյին անդ Կտակարանք աստուածային գրոց՝ մեծամեծաց եւ փոքունց**. զայն առեալ այլազգեացն՝ ծախէին քրիստոնէիցն, որ ի զօրուն էին, զյաճախագինն ընդ դոյզն զնոց: Եւ նոցա խնդութեամբ առեալ, սփռէին յիւրաքանչիւր գաւառ՝ բաշխելով յեկեղեցիս եւ ի վանորայս»²⁸:

Գրիգոր Դովյանի անունից շարադրված 1244 թ. հիշատակարանը սկսվում է բավական համարձակ նախաբանով, որտեղ թեև մոնղոլների ներխուժումը համարվում է Աստծո բարկության հետևանք, սակայն միաժամանակ նրանք բնորոշվում են որպես խենթ ու ընչաքաղց ազգ. «Բա[րկութիւն Աստուծոյ ե]հաս [մեզ եւ ծնո]ղաց [մ]երոց եւ քրիստոնէից [իս]եւ ազգէս Նետողաց յարեւելից, [որ] Տա[տ]ար կոչին [եւ զ]արծաթն սիրեն»²⁹: Այնուհետև հիշատակագիրը պատմում է մոնղոլների՝ Պարսկաստան ներխուժելու և այն գրավելու, ապա Հայոց և Աղվանից աշխարհներ մտնելու և ամենուրեք ավեր ու կոտորած սփռելու մասին³⁰: Հիշատարանում նշվում է, որ մի փոքր հանդարտվելուց հետո նվաճողներն Արցախում իրենց ծառայության տակ են առնում տեղի իշխաններին ու նրանց հեծելազորը, և ուր որ գնում էին, նրանց իրենց հետ էին տանում՝ «զիշխանս եւ զհեծելազարս ընդ ինքեանս տանէին՝ ուր եւ երթային», և Գրիգորն ասում է, որ ինքն էլ նրանց մեջ էր՝ «ընդ որս եւ գրաւեցայ ես՝ **Գրիգոր, որդի Հասանայ եւ Գովին**, քուերորդի սպարապետացն Հայոց եւ Վրաց Չաքարիայի եւ Իւանէի»³¹: Ծարունակելով պատմությունը՝ նա նկարագրում է մոնղոլական զորքի

արշավանքը Ռուսի սուլթանության տարածք, որը կոչում է «գաշխարհս Հայոց եւ Հոռոմոց», այնտեղ նրանց գործած ավերածությունները, բնակչության կոտորածը («ասպատակեալ աւար հարկանէին զքաղաքս եւ զՀինանիստ գեղորայս եւ զվանորայս... սրոյ ճարակ տային զամենեսին»):

Այս մղձավանջի մեջ հայ իշխաններն ու զորականները փորձում են օգնել իրենց ազգակիցներին, բայց, ինչպես խոստովանում է Գրիգոր իշխանը, դա շատ դժվար էր, քանի որ մոնղոլների իշխանության տակ էին («քանզի ընդ նոցին տերութեան էաք»): Այնուամենայնիվ, որոշ մարդկանց փրկում են՝ ոմանց մոնղոլներից զնելով և ոմանց թաքցնելով («այլ սակաւուց ոմանց, զոր զնելով ի նոցանէ, եւ զոր ձեռաւք մերովք թաքուցանելով»):



15

Այնուհետև Գրիգոր իշխանը պատմում է եկեղեցական սրբությունները՝ սպասքը, խաչերն ու ձեռագրերն ավարառուներից փրկագնելու մասին՝ «այլ եւ ըզսպաս սրբութեան, զնշանս տէրունական եւ զտառս աստուածային ոչ ձեռաւք մերաւք առեալ յաւարի, այլ զնեալ ի նոցանէ»: Դրանցից առավել նշանավորներն իշխանը թվարկում է անվանապես և նշում, որ դրանք Կարինից բերել է հայրենի Խաղաղավանք. «բերաք ի սեփական տերութիւնս մեր՝ զծաղկալից բուրաստան զԱւագ Տաւնականն եւ զմիւս այլ Տաւնական, զԺողովոց Յոհանն եւ զԱւետարանն, եւ զաջն սրբոյն Ստեփաննոսի, զոր ի քաղաքէն **Կա[ր]նու բերաք եւ տուաք ի բնիկ հայրենական սուրբ ուխտս մեր Խաղայի վանիցս**»³² (նկար 15):

Բարեբախտաբար, այստեղ նշված ձեռագրերի մի մասը հասել է մինչև մեր օրերը: Գրիգոր իշխանի փրկագնած Ավետարաններից մեկը կոչվում է Կարնո կամ Թեոդոպոլսի Ավետարան, որն այժմ գտնվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում՝ 129 թվահամարի տակ³³: Իսկ Տոնականները, որ ստեղծվել են Երզնկայի Ավագ վանքում 1227 թվականին՝ Ներսես գրչի ձեռամբ, Վարդան վարդապետի (Ավագ Տոնական) և Տուրքի խնդրանքով, այժմ գտնվում են Մատենադարանում և կրում են 6196 և 3779 թվահամարները³⁴:

Հիշատակարանի շարունակության մեջ արդեն խոսվում է Հռոմկլայի Ավետարանի մասին, որը գտնվել է Կեսարիայում: Այն ձեռք է բերվել հաջորդ տարի կազմակերպված արշավանքի ժամանակ, սկզբում պատկանել է Ջաքարյան իշխան Ավագին, որն այն նվիրել կամ վաճառել է Գրիգորին: Վերջինս ուրախությամբ ստանալով այդ շքեղ մատյանը՝ այն դարձյալ բերել է հայրենի Խաղաղավանք. «Իսկ ի միսում ամի այլ եւս գնալով ընդ նոսա, հասաք մինչեւ ի մայրաքաղաքն Կեսարիայ՝ Կապադկացոց նահանգին, եւ անտի առեալ զԱւետարանս պարոնն իմ Աւագն եւ ետ ինձ, եւ իմ խնտալից եղեալ եւ բերկրեալ սրտիւ, զի ետ ինձ Տէր զիւր զաւետաբեր քառոզն, եւ բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս»³⁵:

15 Գրիգոր Դոփյանի հիշատակարանի հատված, որտեղ գրված է Կարնո քաղաքից Խաղաղավանք ձեռագրեր բերելու մասին (ՄՄ 7347, էջ 342բ)

Հիշատակարանի վերջին մասում, ավանդական ձևակերպումով, Գրիգոր Դովյան իշխանը խնդրում է ձեռագրի հետագա ընթերցողներին հիշել իրեն, իր տիկնոջը և որդիներին՝ նշելով նաև գրության թվականը³⁶:

Թե որքան ժամանակ է Հռոմկլայի Ավետարանը մնացել Խաղավանքի հարուստ մատենադարանում, դժվար է ասել: Ձեռագրում կան հետագայի մի շարք հիշատակագրություններ, սակայն դրանցից միայն երկուսն են տեղագրական տվյալ կամ ակնարկ պարունակում:

Մատյանում պահպանված 19-րդ դարի սկզբների՝ 1824 թ. մի հիշատակագրությունից կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ այն դեռևս Արցախում է եղել: Հիշատակագիրը նշում է, որ մատյանը գրվել է Գրիգորիս կաթողիկոսի ժամանակ՝ նկատի ունենալով գլխավոր հիշատակարանում նշված Գրիգոր Գ Պահլավունուն, որին կոչում է նաև Աղվանից կաթողիկոս. «գտի գծեալ զսա ի յաւուրց եւ ի ժամանակաց հայրապետութեան սրբոյն **Գրիգորիսի եւ զ[կ]աթողիկոսի Աղուանից**» (ՄՄ 7347, էջ 7ա): Քանի որ գլխավոր հիշատակարանում «Աղվանք» բառ ընդհանրապես չկա, և այն հիշատակագրի իմաստային հավելումն է, կարծում ենք, որ դա կարող էր արվել այնպիսի վայրում, որը միջնադարում կրում էր Աղվանք ընդհանրական անվանումը, այսինքն՝ Արցախում կամ նրա հարակից շրջաններում:

Ձեռագրի հետագայի մեկ այլ հիշատակարան վկայում է, որ 1887 թ. այն արդեն գտնվում էր Շիրակում՝ Գյումրիից 1 կմ հյուսիս՝ այժմյան Մայիսյան գյուղում (19-րդ դարում կոչվել է Օրթաքիլիսա): Ուշագրավ է, որ այստեղ՝ 7-րդ դարի Սբ. Աստվածածին եկեղեցուն կից, հատուկ այդ Ավետարանի համար կառուցվել է Սբ. Ավետարան անունով մի մատուռ, որտեղ ուխտի են եկել տարբեր տեղերից: Ձեռագրում այդ մասին վկայող հիշատակարան է գրել բանասեր, հնահավաք և տեղագիր Մեսրոպ եպիսկոպոս Սմբատյանցը (1833-1911). «Յիշեցէք ընթերցողք զժողովոդս ազգային հնութեանց եւ յիշատակարանաց՝ զՄեսրովք եպիսկոպոս Սմբատեանց Նախիջեւանցի, որ ընդ Աղեքսանդրապօլցի Յովսէփ աւագ քահանայի Կոստանեանց եւ Մեսրովք քահանայի Գէօրգեանց եկաք յուխտ սուրբ Աւետարանիս ի զիւղն Օրթաքիլիսա եւ հանգստացաք ի տան Արսէն քահանայի Կարապետեան, ի 5 յունիսի ի 1887 ամի» (ՄՄ 7347, էջ 7ա):

Ինչպես տեսնում ենք, Հռոմկլայի Ավետարանը Արցախից անցել է Շիրակ՝ պահվել հատուկ մատուռում, որտեղից էլ, հավանաբար՝ խորհրդային տարիներին, տեղափոխվել է Հայոց մայր ձեռագրատուն՝ Մատենադարան:

Թարգմանչաց Ավետարանի նկարագրությունը Խաղավանքում (ՄՄ 2743)

Խաղավանքի հարուստ մատենադարանի փառահեղ ձեռագրերից մեկն է եղել Թարգմանչաց Ավետարան կոչվող մատյանը³⁷, որն իր անունն ստացել է հետագայում Գանձակի մոտ գտնվող Թարգմանչաց վանքում պահված լինելու պատճառով: Այս ձեռագիրն այսօր Մաշտոցյան Մատենադարանի ամենանշանավոր Ավետարաններից է՝ հայտնի հատկապես իր արժեքավոր մանրանկարչությամբ, որի շնորհիվ հիշատակվում և բարձր է գնահատվում հայ միջնադարյան արվեստի պատմության գրեթե բոլոր ուսումնասիրություններում³⁸: Սակայն, մեր ուսումնասիրության տեսա-

կետից, ձեռագիրը կարևոր է ոչ միայն Խաղավանքում պահվելու, այլև՝ այստեղ շքեղորեն նկարագարվելու պատճառով³⁹:

Թարգմանչաց Ավետարանը մեզ է հասել մի քանի անգամ կազմված ու եզրահատված, ներդիրներով լրացված, վերջից պակասավոր, առանց գլխավոր հիշատակարանի: Պահպանվել են գրչության ժամանակի մի քանի հիշատակագրություններ՝ խորանների և կիսախորանների հորիզոնական երիզների վրա և Մարկոսի Ավետարանի վերջում, որոնցում նշված են ստացողի, գրչի, ծաղկողի անունները և ծաղկելու թվականը: Ըստ դրանց՝ Ավետարանն ընդօրինակվել է 1232 թ., գրիչ՝ Տիրացու, ծաղկող՝ Գրիգոր, ստացող՝ Հովհաննես քահանա: Ստեղծման ստույգ վայրն անհայտ է:

Ձեռագրագիտական և բնագրագիտական քննությունը ցույց է տալիս, որ այս Ավետարանն ընդօրինակվել է, այսպես կոչված, «Գրիգոր Մուրղանեցու» նախօրինակից, որը գրիչները սովորաբար բնութագրում են որպես «ստույգ եւ ընտիր» օրինակ: Գրիգոր Մուրղանեցու օրինակն աչքի է ընկնում գրչության արվեստի քերականական կանոնների կիրառման հստակությամբ: Գետիկ վանքում աշխատած Մխիթար գրիչն այդ օրինակի մասին գրում է. «Ծրեցի ի գովելի արինակէ, ուղիղ եւ լի արուեստի ի բան եւ ի գիր, ի տուն եւ ստոր, եւ ի գրադարձս, եւ եղանակս, եւ ի վանկս, եւ յառագանութիւնս, զոր կոչեն Գրիգորի Մուրղանեցոյ՝ ի բազմաց վկայեալ»⁴⁰: Այս նախօրինակից ընդօրինակված ձեռագրերի քննությունը ցույց է տալիս, որ դրանցում տերունական և ավետարանիչների նկարներ չեն եղել, և գեղարվեստական հարդարանքը սահմանափակվել է համաբարբառի խորաններով, չորս Ավետարանների անվանաթերթերով, զարդագրերով և լուսանցազարդերով⁴¹: Սկզբնապես այդպիսին է եղել նաև Թարգմանչաց Ավետարանը:

Ինչպես վերևում տեսանք, 1243-1244 թվականներին Խաղավանքի մատենադարանը մեծապես հարստացել է իշխան Գրիգոր Դոփյանի՝ Կարինից և Կեսարիայից բերած ձեռագրերի շնորհիվ: Գուցե այդ նույն ժամանակ կամ ավելի ուշ Արցախ է բերվել նաև Թարգմանչաց Ավետարանը, որը 14-րդ դարի սկզբներին ստացել են Գրիգոր Դոփյանի որդի Հասան Բ-ի որդի Գրիգորը և նրա կինը՝ Ասփան, որը Սյունիքի հզոր իշխան Տարսայիճ Օրբելյանի դուստրն էր⁴²:

1305-1311 թթ. ժամանակամիջոցում այս իշխանական գույգի պատվերով Ավետարանը նորոգվել է, լրացվել և զարդարվել տերունական մանրանկարներով: Այդ գործը կատարած արվեստագետը, ինչպես հիշատակարաններն են վկայում, նույնպես Գրիգոր անունն ուներ, որի պատճառով հետագայում ձեռագրի մանրանկարչությանն անդրադարձած ուսումնասիրողները նույնացրել են երկու Գրիգորներին՝ Գրիգոր ծաղկողին և Գրիգոր Արցախեցի նկարչին: Այս հարցը պարզաբանել է վաստակաշատ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը (1922-2004)՝ «Թարգմանչաց Ավետարանին» նվիրված հանգամանակից ուսումնասիրությամբ⁴³: Ձեռագրում առկա է նկարագարդման երկու օրինաչափություն. մի կողմից՝ Գրիգոր ծաղկողի աշխատանքն է (1232 թ.)՝ համաբարբառի 10 խորանների, չորս անվանաթերթերի և լուսանցազարդերի ու զարդագրերի նկարագարողումը՝ կատարված ձեռագիրը գրելու ժամանակ, որը հաստատվում է պրակների կայուն հենքով, ծաղկողի հիշատակագրությամբ, զարդարանքի և զարդարվածության միասնական ոճով: Վարպետը հիշատակարաններում իրեն կոչում է «ծաղկող», այսինքն՝ զարդանկարիչ: Խորաններում նրա գրած հիշատակագրությունն էլ այդ մասին է՝ «Ի թիս ՈՁԱ (1232) ծաղկագարդեցաւ սուրբ Աւետարանս»⁴⁴:



16

Մյուսը՝ Գրիգոր անունով երկրորդ նկարիչի գործը (14-րդ դ. սկիզբ), նույնպես աչքի է ընկնում իր որոշակի սկզբունքով՝ բոլոր տերունական նկարները (7) և չորս ավետարանիչները դասավորված են հետևյալ կերպ. ավետարանիչների նկարները ներդրված են (առանձին թերթով ավելացված) անվանաթերթերի դիմաց: Յուրաքանչյուր Ավետարանի վերջը փակվում է տերունական մեկ նկարով: Հիշատակարանում այս Գրիգորն իրեն կոչում է նկարիչ՝ «Տէր Աստուած, ողորմեա Գրիգոր նկարչի եւ աշխատողաց ի սմայ» (ՄՄ 2743, էջ 10բ):

Ուշագրավ է, որ Գրիգոր նկարիչն Ավետարանը նկարագարդելիս պահպանում է Գրիգոր ծաղկողի ներկայանակը, տեղ-տեղ միջամտում է նաև Գրիգոր ծաղկողի գույներին՝ իր նկարների հետ որոշակի ներդաշնակություն ստեղծելու նպատակով: Երբեմն լրացրել է նաև Գրիգոր ծաղկողին: Մասնավորապես, նա ծաղկողի պատկեր-

16 Մատթեոսի ավետարանի անվանաթերթը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր ծաղկող (1232 թ.), ավետարանի խորհրդանիշը լրացնող՝ Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 12ա)



17

րած անվանաթերթերում ավելացրել է ավետարանիչների խորհրդանիշների պատկերները (Մատթեոս՝ մարդ-հրեշտակ, Մարկոս՝ առյուծ, Դուկաս՝ եգ, Հովհաննես՝ արծիվ), որոնք գունային որոշ տարբերություն ունեն ծաղկողի գունապնակից, փոքր-ինչ արհեստական դիրք են գրավում էջի ընդհանուր հարդարանքում, և որոնց համար որպես նախօրինակ օգտագործել է Կարինում նկարազարդված Թեոդուպոլսի Ավետարանը, որը, ինչպես վերևում տեսանք, այդ ժամանակ Խաղավանքում էր գտնվում (նկար 16, 17): Ի դեպ, երկու մատյաններում ավետարանիչների խորհրդանիշների պատկերների այս նմանությունն է հետագայում ուսումնասիրողներից ոմանց ենթադրել տվել, թե Թարգմանչաց Ավետարանը նույնպես Կարինում է ստեղծվել: Մինչդեռ Թեոդուպոլսի Ավետարանի ավետարանիչների խորհրդանիշներն ընդամենն արտանկարվել են Թարգմանչաց Ավետարանում՝ Խաղավանքում:

17 Հովհաննեսի ավետարանի անվանաթերթը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր ծաղկող (1232 թ.), ավետարանչի խորհրդանիշը լրացնող՝ Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 12ա)



18



19



20



21



Երբ անտուն խորհրդի



23



24

Ձեռագրի հիշատակարանները վկայում են, որ այն ստացել են Գրիգոր իշխանաց իշխանն ու նրա կինը՝ Ասփան, և ընծայել Խաղավանքին: Ավելորդ չենք համարում այս գույգի մասին մեջբերել Արցախի պատմության ճանաչված հետազոտող Բագրատ Ուլուբաբյանի կարծիքը. «Դատելով Գրիգորի և Ասփայի արձանագրություններից և թողած հիշատակարաններից, պետք է եզրակացնել, որ նրանց միջև եղել է պաշտամունքի հասնող մի սեր»⁴⁵: Թարգմանչաց Ավետարանի հիշատակարաններում Գրիգորն ու Ասփան կոչվում են Ավետարանի ստացողներ և զարդարողներ՝ «զարդարիչ»⁴⁶: Ակնհայտ է, որ նրանք ձեռագրի զարդարողներ են համարվում, որովհետև ձեռագիրն ստացել և նվիրել են վանքին՝ այն ավետարանիչների ու տերունական նկարներով զարդարելուց հետո:

Դրանից որոշ ժամանակ անց՝ 1311 թ., Ասփան մահացել է և հուղարկավորվել նույն վանքում, որը Դոփյանների դամբարանն էր: Գրիգոր իշխանն Ասփայի հիշատակին բազմաթիվ նվիրատվություններ է անում վանքին, իսկ Ավետարանի համար նաև ոսկեզօծ կազմ է պատրաստել տալիս և այն ընծայում իր տիկնոջ գերեզմանին: Հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Արդ, յայսմ ամի, որ էր թիս ՉԿ (1311), փոխեցաւ յաշխարհէս Ասփայն առ Քրիստոս եւ եղաւ ի շիրիմի, ի Տուրք ուխտն Խաղարի վանս, վասն որոյ եւ մեծ պարոն Գրիգոր նուիրել գերեզմանի նորա ընծայս յոլով գեղորայս, այգիս եւ անդաստանս, եւ զարդարել զտուրք ուխտն զանազան սպասիւք եւ հանդերձիւք, ընդ որս պճնել շքեղացոյց եւ զտուրք Աւետարանս ոսկէնկար կազմածով եւ շնորհեաց գերեզմանի նորա»⁴⁷:

- 18 Հովհաննես ավետարանիչ և Պրոխորոն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 295բ)
- 19 Ավետուն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 188բ)
- 20 Ծնունդ, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 15ա)
- 21 Սկրտություն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 20ա)
- 22 Վերջին ընթրիք, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի, (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 170ա)
- 23 Դժոխքի ավերումը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 184ա)
- 24 Հարություն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 114ա)
- 25 Աստվածամոր նիհնջ, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), (ՄՄ 2743, էջ 294ա)

Հնչում է նախաձայնը





26

Թարգմանչաց Ավետարանում Գրիգոր Արցախեցի նկարչի պատկերած մեծարվեստ և ինքնատիպ տերունական նկարները հետևյալներն են՝ էջ 15ա «Ծնունդ», շրջանակի վերևում կարմիր թանաքով շղագրված է «Ծնունդ Փրկչին», 20ա՝ «Սկրտութիւն», 114ա՝ «Յարութիւն (հրեշտակների հայտնությունը յուղաբեր կանանց)», 170ա՝ «Խորհրդաւոր ընթրիք» նկարի զարդարուն շրջանակի ներսում գրված է «Վերնատունն խորհրդոյ», 184ա՝ «Դժոխքի ատերումը», շրջանակի վերևում բոլորագրված է. «Աւարունն դժոխսաց», 188բ՝ «Աւետում», շրջանակի վերևում գրված է. «Աւետիս Գաբրիէլի առ Մարիամ», 294ա՝ «Աստուածամօր նինջը», շրջանակի վերևում գրված է. «Ննջումն Ա(ստուա)ծամարն» (*նկար 18-25*): Այս վերջին պատկերն արժանացել է Սիրարփի Տեր-Ներսեսյանի հատուկ ուշադրությանը՝ որպես տվյալ թեմայի պատկերագրության լրիվ զարգացած մի ձև⁴⁸: Թե՛ նա, թե՛ բազմաթիվ այլ արվեստաբաններ ընդգծում են Թարգմանչաց Ավետարանի տերունական պատկերների զգացմունքայնությունը, կերպարների ներթափանցվածությունը դրամատիկ շնչով: Միաժամանակ, պետք է նշել մանրանկարների հարուստ գունաշարը և ոսկու օգտագործումը (լուսապսակների մեջ), որն արցախյան ձեռագրերում շատ քիչ է հանդիպում: Ձեռագրում ոսկեզիր բառեր ու տողեր կան նաև Խաղավանքում գրված հիշատակարաններում⁴⁹:

Ամբողջական էջով այս նկարներից բացի, Գրիգոր Արցախեցին ձեռագրի լուսանցքներում պատկերել է բնագրական որոշ հատվածների բովանդակությանը համապատասխան թեմատիկ լուսանցանկարներ:

26 Հրեշտակները Դաղիվանքի որմնանկարում (1297 թ.) և պատկերման նույն սկզբունքով դիմապատկերներ Թարգմանչաց Ավետարանում (1305-1311 թթ.)

Ազնվականական պատվերով երկու հուշարձանների առնչության շուրջ

Թարգմանչաց Ավետարանի՝ Գրիգոր Արցախեցու բարձրարվեստ նկարազարդումները ոճական առումով զուգահեռներ ունեն Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու 1297 թ. որմնանկարի հետ: Հատկապես ուշագրավ է հրեշտակների դեմքերի պատկերման նմանությունը՝ փոքր-ինչ առաջ եկած ծնոտային մասով⁵⁰: Նկարչական նույն սկզբունքով են նաև լուսապսակները, որոնք երկու դեպքում էլ բոլորակվում են սալիտակ, նուրբ եզրագծով (*նկար 26*): Այս երկու ստեղծագործությունը կարելի է համարել Արցախի ազնվականական արվեստի եզակի նմուշներ՝ ի տարբերություն նկարազարդման ժողովրդական ուղղությանը պատկանող արցախյան ձեռագրերի ավելի մեծ և հիմնական խմբի:

Դադիվանքին ու նրա որմնանկարին մենք կանդրադառնանք քիչ հետո: Բայց որմնանկարի ոճական ուղղությունը, Թարգմանչաց Ավետարանի հետ ունեցած գեղարվեստական ընդհանրությունը հաշվի առնելով՝ որմնանկարի պատվիրատուների ու նկարչի վերաբերյալ մի դիտարկում կատարենք:

Պետք է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում Դադիվանքի առաջնորդներից Հովհաննեսը (մահ. 1305 թ.) Դովյան Հասան Բ իշխանի եղբայրն էր, իսկ նրա հաջորդ Սարգիսը՝ Հասանի իշխանությունը ժառանգած որդու՝ վերը նշված Գրիգոր իշխանի և Ասփայի որդին: Ի դեպ, այս Սարգիս մասին հատուկ նշվում է Թարգմանչաց Ավետարանի հիշատակարանում, որը մանկուց ընծայվել է եկեղեցուն («որում անուն էր Սարգիս, նուիրե Քրիստոսի ի ստընդիս հասակին, որ արժանաւորութեամբ ի կոչմանէ Հոգւոյն էանց ընդ ամենայն աստիճանս քահանայութեան, հասեալ ի պատիւ եպիսկոպոսութեան Տանն Խաչենոյ»)՝⁵¹: Դադիվանքի վիճագրերից մեկը, որը գրվել է Սարգիս արքայության սկզբնական շրջանում՝ 1307 թ., հետաքրքիր մանրամասներ է պարունակում, որոնց մեջ հնարավոր է որոշ կապ տեսնել որմնանկարների հետ: Արձանագրությունը գրված է եկեղեցու ներսում, խորանի հարավային կողմի պատին (դաջված է սվաղի մեջ): Այն սկսվում է Հասանի կնոջ՝ Մամքանի անունից և տեղեկացնում այն մասին, որ ինքն ու որդին՝ Գրիգորը, որպես վանքի պարոններ, մի շարք նվիրատվություններ են կատարել: Այնուհետև տեքստը շարունակվում է Գրիգոր իշխանի անունից, և նշվում է այլ նվիրատվության մասին, որի դիմաց իր որդի Սարգիս վանահայրը և միաբանները պետք է պատարագ հատկացնեն իր մորը՝ Մամքանին և կնոջը՝ Ասփային⁵²:

Կարելի է ենթադրել, որ պատահական չէ Մամքանի և Ասփայի համար հատկապես Սուրբ Ստեփանոսի տոնի պատարագի ընտրությունը, երբ նկատի ենք ունենում, որ նույն եկեղեցում եղած երկու մեծադիր որմնանկարից մեկը ներկայացնում է Սուրբ Ստեփանոսի վարքագրական տեսարանը: Մամքանը, որը զորեղ Վաչուտյան Քուրդ Ա իշխանի դուստրն էր, բարեպաշտ ու մշակութային հակումներ ունեցող մի կին էր: Եկեղեցանվեր ու բարեգործական նախաձեռնություններով պակաս հայտնի չէր նաև Ասփա իշխանուհին⁵³: Հավանական ենք համարում, որ Դադիվանքի Կաթողիկեի որմնանկարի պատվիրատուն կարող էին լինել Մամքան իշխանուհին ու իր հարս Ասփան: Համենայն դեպս, հատկապես Սուրբ Ստեփանոսի տոնի պատարագը նրանց հատկացնելու մասին վկայությունը մի կովան է, որը թույլ է տալիս նման

ենթադրություն անելու: Բայց անկախ դրանից, որմնանկարը ստեղծվել է այս տոհմից սերող վանահոր ժամանակ, առանց որի կամքի կամ խրախուսման՝ եկեղեցում որմնանկար չէր կարող նկարվել, մանավանդ որ որմնանկարչության ավանդույթն այս կողմերում տարածված չէր:

Դադիվանքի որմնանկարը, որի պատկերման ստույգ թվականը նշված է եկեղեցու ներսում՝ ներկագիր արձանագրության մեջ՝ 1297 թ.⁵⁴ և Թարգմանչաց Ավետարանի պատկերագրումը՝ 1305-1311 թթ., փաստորեն, նույն ժամանակաշրջանի ստեղծագործություններ են, ընդ որում՝ ազնվականական միևնույն տոհմի հովանավորությամբ ստեղծված: Միանգամայն հնարավոր ենք համարում, որ դրանք նաև նույն արվեստագետի (կամ՝ արվեստագետների խմբի) գործերն են: Որմնանկարի պարագայում, ինչպես հայտնի է, սովորաբար լինում էր ավագ վարպետ նկարիչ, որն ունենում էր նաև օգնականներ: Այս առումով չափազանց հետաքրքիր է Գրիգոր Արցախեցի նկարչի՝ ձեռագրում թողած միակ հիշատակագրությունը՝ «Տէր Աստուած, ողորմեա Գրիգոր նկարչի եւ աշխատողաց ի սմայ» (ՄՄ 2743, էջ 10բ): Այսինքն՝ նկարիչն ունեցել է օգնականներ, իր հետ աշխատողներ: Արդյո՞ք խոսքը նկարիչների նույն խմբի մասին չէ, որը Գրիգոր ավագ վարպետի ղեկավարությամբ, նույն իշխանական տան պատվերով, նախ՝ ստեղծել է Դադիվանքի որմնանկարը, ապա՝ Խաղավանքում պատկերագրողել Թարգմանչաց Ավետարանը:

Տեղին է հիշել, որ 13-րդ դարի վերջը և 14-րդ դարի սկիզբը մշակութային, գիտական ու հատկապես նաև գեղարվեստի բուռն վերելքի շրջան էր Արցախի հարևան Սյունիքում, որտեղ գործում էր Գլաձորի համալսարանը, իսկ տեղի Օրբելյան և Խաղբակյան (Պռոշյան) իշխանական տները, որոնք Արցախի իշխանների նման, ընդունելով մոնոլիթների գերակայությունն, իրենց իշխանությունները զերծ էին պահել ավերածությունից, հանդես էին գալիս որպես եկեղեցաշինարարներ, ձեռագրերի պատվիրատուներ, գիտության և մշակույթի հովանավորներ: Դա էլ իր հերթին նպաստում էր շնորհավի արվեստագետների ի հայտ գալուն, ինչպես Միրանեսը և Մոմիկը, որոնք Օրբելյանների տան նկարիչ-ճարտարապետներն էին, Գլաձորից սերող՝ Թորոս Տարոնացին, Պողոս Կիլիկեցին, Թորոս Սարկավազը, Ավազը և ուրիշներ: Թարգմանչաց Ավետարանի նկարիչ Գրիգոր Արցախեցին, որը, հավանաբար, հեղինակն է նաև Դադիվանքի որմնանկարի, տաղանդավոր վարպետների այս համաստեղության լիիրավ մասնիկը կարող է համարվել:

Ծանոթագրություններ

<p>2 Գիրք թղթոց, Տփխիս, 1901, էջ 536, Ղ. Ալիշան, Չայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Չայոց, Վենետիկ, 1901, էջ 47: Ղևոնդ Ալիշանն այստեղ ծանոթագրում է. «Եղիշ էւ Խաղա (որ ասորի անուն մ'է) յոյն հեղինակաց ցանկին մէջ չեն գտուիր, եւ թուին զատ Եօթանասուն Աշակերտներէն՝ հին քարոզիչք քրիստոնէութեան ի Չայս» (նույն տեղում): Եղիշեի, Խաղի և Դադիի մասին տես նաև: Դ. Սվազյան, Չայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, Ս. Էջմիածին, 2019, էջ 72-73, L. Tumanyan, Evangelization of the Apostles Yeghisha and Dad in Artsakh and Utik according to the Armenian tradition, «Das kulturelle Erbe von Arzach», Kiel University Publishing, 2024, p. 143-156.</p> <p>3 Ըստ Բագրատ Ուլուբաբյանի: Մեծ Կողմանք կամ Մեծ Կվենք գավառը գտնվում էր Թարթառ գետի ավազանում՝ ընդգրկելով նրա աջ ու ձախ ափերը (Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XVI դդ, Երևան, 1975, էջ 32-33):</p>	<p>4 Վանքի մասին հանգամանորեն տես Բ. Ուլուբաբեան, Մ. Չասրաթեան, Խաղավանք-Խաթրավանք, «Չայկազեան հայագիտական հանդես», հ. ժ., Բեյրութ, 1982-1984, էջ 21-50:</p> <p>5 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Չայոց, աշխատասիրությամբ՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 171, 216:</p> <p>6 Նույն տեղում, էջ 174, 216:</p> <p>7 Մ. Չասրաթյան, Խաղավանք, «Քրիստոնյա Չայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 419:</p> <p>8 Սույն վիճագիր արձանագրությունն այժմ պահվում և ցուցադրվում է Մաշտոցի անվան Մատենադարանում (Դիվան հայ վիճագրության, Արցախ, պրակ V, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1982, էջ 121): Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ., Թ. Մ.:</p>
--	---

- 9 Նույն տեղում, էջ 122:
- 10 Նույն տեղում, էջ 127:
- 11 **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1993, Ա-Բ-Գ, էջ 107:
- 12 **Բ. Ուլուբաբյան, Մ. Հասարթյան**, ԳՂԿ. աշխ., էջ 48-49:
- 13 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 134:
- 14 Նույն տեղում: Այստեղ շարադրանքը կարող է շփոթություն առաջացնել, թե արդյո՞ք Մխիթարը նաև մասնակից չէ ձեռագրի գնմանը: Բայց իրականում նշվում է, որ Սարգիսը գնեց, իսկ Մխիթարը բերեց:
- 15 **Գ. Յովսէփեան**, Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց (Գետաշենի Աւետարանը), Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ նշակոյթի պատմութեան, պր. Ա. Երուսաղէմ, 1935:
- 16 **Ա. Մաթևոսյան**, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի», 14, Երևան, 1984, էջ 106-134:
- 17 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 69:
- 18 **Կ. Մաթևոսյան**, Նկարիչ Մարգարեի «Մուտք Երուսաղէմ» մանրանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հաս. գիտ., 1982, N 9, էջ 52-63, նույնի, Հաղբատի Ավետարանը, Երևան, 2012:
- 19 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դար, աշխատասիրությամբ՝ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 115:
- 20 Վազգեն Վեհափառի Ավետարանը, Ժ դար, նմանահանություն, (հնագրական և ձեռագրագիտական ուսումնասիրությունը՝ Ա. Մաթևոսյանի, մանրանկարչական ուսումնասիրությունը՝ Տ. Իզմայլովայի) Երևան, 2000:
- 21 Այս մասին հանգամանորեն տես **Կ. Մաթևոսյան**, Հռոմկլան որպես Հայոց կաթողիկոսանիստ և տեղի ձեռագրերի հիշատակարանները (ԺԲ դար), «Էջմիածին», 2023, N 8, էջ 42-68:
- 22 Տես **Ա. Բոզոյան**, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը, Երևան, 1995:
- 23 Խոսքը Խարբերդի շրջանի մասին է, «Անժտունեայ» անվանումը ծագում է Անժիտ գավառանունից:
- 24 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 191:
- 25 Նույն տեղում, էջ 192:
- 26 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 280:
- 27 Նույն տեղում, էջ 284:
- 28 Նույն տեղում, էջ 279-280:
- 29 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 228:
- 30 «Եւ ելեալք [աս]պատակաւ յաշխարհն Պարսից գրագում քաղաքս տապալեալ, եւ բնաջինջ արարեալ զքազաւորութիւն Պարսից, եւ զայլ բազում գաւառս, զորս ոչ կարենք գրով արկանեալ զաղետս տարեկուսի կործանման հանուրց աշխարհի, որ եւ եհաս մինչեւ յաշխարհս Հայոց եւ Աղուանից: Եւ առեալ զանթիւ գաւառս եւ զքաղաքս եւ զվանորայս, ի սուր սուտերի մատնեցին զագգն քրիստոնէից, զիշխանսն մեծամեծս, եւ զբամիկ ժողովրդականս... եւ ըզպասաւորս սրբոյ սեղանոյն Աստուծոյ զդասս քահանայական, զմիայնակեցունսն եւ զճգնաւորս, տապալեալ եւ քանդեալ զեկեղեցիսս եւ ըզպասս սրբութեան, եւ զնշանս տէրունական յաւար առեալ անարիւնացն, ի գերութեան վարել առհասարակ» (Նույն տեղում):
- 31 Նույն տեղում:
- 32 Նույն տեղում, էջ 228-229: Այս մասին տես նաև՝ Բ. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 230-231:
- 33 **Բ. Սարգիսեան**, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, հ. Ա, 1914, էջ 567:
- 34 **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, էջ 109-110:
- 35 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 229:
- 36 «Արդ, որք ընթեռնոյք եւ աւգտիք յաստուածաշունչ տառիցս եւ ի սուրբ վարդապետութենէս Կենարարի մերոյ, յիշեցեք առաջի զենմանն Քրիստոսի զիս՝ զԳրիգոր, եւ զամուսին իմ զՄամբան, եւ զհարազատ որդիքս իմ զՀասան, զԱլեւաղա եւ զՅոհաննէս, եւ որք յիշեք, յիշեալ լիջիք ի Քրիստոս: Եւ այս գործեցաւ ի թուականութեանն Հայոց ՈՂԳ (1244)» (Նույն տեղում):
- 37 Ձեռագիրը Թարգմանչաց վանք է բերվել Խաղավանքից և այստեղ մնացել մինչև 1900 թվականը, որից հետո Գարեգին վարդապետ Հովսեփյանն այն տեղափոխել է Էջմիածնի Մատենադարան և դրա մասին առաջին մասնագիտական դիտարկումներն արել: Տես **Գ. Յովսէփեան**, Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911, 5–6:
- 38 Ձեռագրի նկարագրումը վերաբերող հարուստ գրականության մասին, ինչպես նաև մանրանկարների արվեստաբանական հանգամանակից վերլուծությունը տես **Լ. Չուգասյան**, Գրիգոր ծաղկող, Երևան, 1986:
- 39 **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1993, Ա-Բ-Գ, էջ 105-118:
- 40 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 399:
- 41 **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, 1992, Թ-ԺԺԱ, էջ 112-113:
- 42 Ասփա իշխանուհին Խաղավանքից ներքև՝ Թարթառ գետի վրա կամուրջ է կառուցել և այդ առիթով խաչքար կանգնեցրել:
- 43 **Ա. Մաթևոսյան**, Թարգմանչաց Ավետարանը, 1992, Թ-ԺԺԱ, էջ 102-114, 1993, Ա-Բ-Գ, էջ 105-118:
- 44 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 181:
- 45 **Բ. Ուլուբաբյան**, ԳՂԿ. աշխ., էջ 316:
- 46 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, մասն Ա, կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Երևան, 2018, էջ 215:
- 47 Նույն տեղում:
- 48 **S. Der Nersessian**, Armenian art, Paris, 1977, p. 217-218.
- 49 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, մասն Ա, էջ 214-215 (տես **Ա. Մաթևոսյանի** ծանոթագրությունները տողատակում):
- 50 Այս նմանության մասին մեզ հուշել է արվեստագիտության թեկնածու Լուսինե Սարգսյանը, որին շնորհակալություն ենք հայտնում: Ավելի վաղ այդ մասին շատ հակիրճ նշել ենք «Արցախի և Ուտիքի ձեռագրական ժառանգությունը» գրքում, որը լույս է տեսել մեր խմբագրությամբ (**H. Hakobyan, T. Minasyan, V. Torosyan**, Manuscript heritage of Artsakh and Utik, Yerevan, 2022, p. 171.), (Կ. Ս.):
- 51 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, մասն Ա, էջ 215:
- 52 «...ՈՐԴԻ ԻՍ Տ(Ե)Ր ՍԱՐԳԻՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔ ՍԱՀՄԱՆԵՑԻՆ Ս(ՈՒՐ)Բ ԸՍՏԵՓԱՆՈՍԻ ՏԱԽՆԻ ժԱՄՆ, ՈՐ ԼԻՆԻ ԻՍ ՍԱԻՐՆ ԵՒ ԱՍՈՒՄՆՈ ԻՍ ԱՍՓԻՆ» (Դիվան, պրակ V, էջ 206, 207):
- 53 **Բ. Ուլուբաբյան**, ԳՂԿ. աշխ., էջ 316-317:
- 54 **Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Ա. Ջարյան, Ք. Լամուրե**, Դադիվանք. վերածնված հրաշալիք, Երևան, 2018, էջ 26:





ԴԱԴԻՎԱՆՔ

Դադիվանքը Հայաստանի հնագույն վանքերից մեկն է, Արցախի պատմական Վերին Խաչեն գավառում, որը գտնվում է Թարթառ գետի ձախ ափին, անտառապատ գեղատեսիլ վայրում (*նկար 27*): Վանքն ունի նաև երկրորդ անուն՝ Խոթավանք:

Դադիվանքի պատմության, եկեղեցիների և ճարտարապետական այլ կառույցների, քանդակագործության, վիմական արձանագրությունների, գրչության կենտրոնի, վանական համալիրի վերականգնման վերաբերյալ բավական հրատարակություններ կան⁵⁵:

Դադիվանքի անունը, համաձայն Վանական Վարդապետի (13-րդ դ.), ծագում է Քրիստոսի 72 աշակերտներից մեկի՝ Դադիի անունից, որը Թադեոս առաքյալի հրամանով եկել է Փոքր Սյունիք, այսինքն՝ Արցախ (կամ Խաչեն), այստեղ նահատակվել, որի տեղում էլ հիմնվել է նրա անունով վանքը. «Դադիու, մի յԵօթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադեոսի՝ ի Մեծն Հայք եւ ի կողմանս հիւսիսոյ, եւ լուեալ զմահն Աբգարու եւ դարձեալ եմուտ ի Փոքր Սիւնիս եւ կրօնաւորեալ՝ անդէն ծածկաբար վախճանեցաւ, եւ տեղին շինեցաւ վանք եւ յանուն նորա կոչեցաւ»⁵⁶: Այս տեղեկությունը հետագայում Վանականի աշակերտ Վարդան Արևելցին ներմուծել է Միքայել Ասորու (12-րդ դ. Անտիոք քաղաքի ասորի եպիսկոպոս, ապա՝ պատրիարք) ժամանակագրության մեջ՝ այն հայերեն թարգմանելու ժամանակ⁵⁷: Դադիվանքի անվանն անդրադարձած հեղինակներն ավելի հաճախ այս երկրորդ վկայությունն են մատնանշել՝ որպես Միքայել Ասորու վկայություն⁵⁸:

Շատ կարևոր է, որ վանքի հիմնադրման մասին մատենագրական այս տեղեկությունը հաստատվում է Դադիվանքում պահպանված վիմագրական վկայությամբ: Մասնավորապես, Կաթողիկե եկեղեցու արևմտյան պատին՝ մուտքից աջ եղած 1224 թ. արձանագրության մեջ, Հասանի որդի իշխան Գրիգոր Դոփյանը նշում է, որ նվիրատվություն է կատարել «Ի ԴԱԴԻ ԳԵՐԵՉՄԱՆՍ»⁵⁹: Այսինքն՝ 13-րդ դարի սկզբներին այստեղ բնակվողները ոչ մի կասկած չեն ունեցել, որ վանքը Դադիի նահատակության վայրում է, որտեղ եղել է նրա գերեզմանը: Սրան պետք է ավելացնել 2008 թ. կատարված պեղումների արդյունքները, ըստ որոնց՝ ենթադրաբար բացվել է Դադիի դամբարանը, որի վրա հետագայում կառուցված մեծադիր միանավ բազիլիկ եկեղեցին այնպես են նախագծել, որ դամբարանը հայտնվի բեմի ճիշտ դիմաց⁶⁰:

Դադիվանքի վերաբերյալ հիշատակություն է պահպանվել նաև պատմիչ Մովսես Կաղանկատվացու Պատմության մեջ: Խոսելով 9-րդ դարում տեղի ունեցած մի դեպքի մասին՝ պատմիչը գրում է, որ իշխան Վարագ-Տրդատն իր որդի Ստեփանոսի հետ

սպանվել է «ի միում ժամու ի Խորածորն, որ կոչի Դադոյի վանք»⁶¹: Իսկ Մխիթար Գոշը վանքը հիշատակում է 1144 թ. սելջուկյան Չոլի ամիրայի հարձակման ու գործած ավերի կապակցությամբ՝ գրելով. «Ձգաւառն ամենայն իսպառ աւերէր. այրեաց եւ գառաքելադիր ուխտ սրբութեանն, որ կոչի Դադուի վանք»⁶²:

Վանքի՝ Դադիի անունով կոչվելու ավելի ուշ շրջանի վկայություններին չենք անդրադառնում: Ինչ վերաբերում է վանքի երկրորդ անվանը, ապա, չնայած որ գրականության մեջ առավել հաճախ նշվում է, թե վայրը Խութավանք է կոչվել՝ գետամերձ խութի (բրակի) վրա կառուցված լինելու պատճառով, ավելի հավանական է, որ այդ անունը ծագում է ժամանակին վանքի մոտ եղած վանքապատկան և բավականին





28

մեծ Խութ գյուղի անունից⁶³: Դրա օգտին է խոսում այն, որ այդ անունն ավելի շատ հանդիպում է ուշ շրջանի աղբյուրներում: Հատկանշական է, օրինակ, որ 1854 թ. կազմված մի տեղեկագրում վանքի մասին ասվում է. «Ամալի վանքն, որ կոչի Խութայ վանք (տճ. Չարեքտար վանք), կառուցեալ յանուն Դաթի առաքելոյն»⁶⁴: Իսկ Մեսրոպ Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս) 1911 թ. Դաղիվանք կատարած այցի ուղեգրության մեջ այն կոչում է «Խօթավանք»՝ ավելացնելով, որ նկարագրության մեջ վանքը պիտի կոչի «իբ հին՝ Դաղի վանք անունով»⁶⁵:

Դաղիվանքի պատմության վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուրները տեղում պահպանված 12-17-րդ դարերի վիմական արձանագրություններն են, որոնք տեղեկություններ են պարունակում որոշ կառույցների շինարարության, վանքին արված բազմաթիվ նվիրատվությունների, վանական կալվածքների, վանահայրերի մասին և այլն: Իսկ այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները 16-17-րդ դարերից են և որոշակի նյութեր են տրամադրում վանքում գրավոր մշակույթի զարգացման վերաբերյալ:

Միջնադարյան Հայաստանի մյուս մեծ վանքերի նման՝ Դաղիվանքը նույնպես ունեցել է իր «Քոթուկը»՝ վանքի պատմության նյութերի ժողոված մատյանը, որը, ցավոք, կորել է, բայց պահպանվել է նրանից անջատված երեք թերթ՝ Մատենադարանի հմր. 2776 ձեռագրում (էջ 271ա-73բ):

Դաղիվանքը ծաղկման է հասել հատկապես 13-14-րդ դարերում, երբ կառուցվել են շքեղ եկեղեցիները, որոնցից Կաթողիկեն (1214 թ.) առավել նշանավոր է ինչպես ճարտարապետությամբ, այնպես էլ՝ քանդակային հարդարանքով (նկար 28): Վանքը նշանավոր է եղել որպես եպիսկոպոսանիստ կենտրոն և իշխանական տապանավայր:

27 Դաղիվանքը հյուսիս-արևելքից (լուսանկարը՝ Արա Ջարյանի, 2015 թ.)

28 Դաղիվանքի Կաթողիկեն եկեղեցին, 1214 թ. (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2017 թ.)

Դադիվանքը գործել է նաև հետագայում՝ 16-17-րդ դարերում, որը կարելի է վանքի երկրորդ ծաղկման շրջան համարել, երբ այստեղ մի շարք ձեռագրեր են գրվել:

Դադիվանքի արժանիքներից մեկն էլ Ս. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային և հարավային պատերին պահպանված 1297 թ. բարձրարվեստ որմնանկարներն են, որոնք Արցախում եզակի են, ուստի ստորև դրանց կանոնադաշտնանք ավելի հանգամանորեն: Խորհրդային տարիներին լքված վիճակում գտնվող Դադիվանքը, ինչպես նաև պատմական Ծար գավառը եղել են Ադրբեջանի կազմում՝ սկզբում 1923 թ. կազմավորված Կարմիր Քուրդիստան վարչատարածքային միավորման մեջ, որը 1929 թ. վերացվեց և կցվեց Ադրբեջանին՝ որպես Բելրաջարի շրջան: 1993 թ. այդ տարածքն անցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը, և Դադիվանքը հանձնվել է Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմին: Այս նոր շրջանում (հատկապես՝ 1997-2011 թթ.) վանքը հիմնովին վերականգնվել է Հայկական ճարտարապետության ուսումնասիրության կազմակերպության (այժմ՝ ՀՃՈՒ հիմնադրամ) ջանքերով և անհատ բարերարների միջոցներով:

Դադիվանքի եկեղեցիներն ու շինությունները

Վանական համալիրի շինությունների մեծ մասը կառուցվել է 12-րդ դարի վերջերից մինչև 14-րդ դարի սկզբներն ընկած ժամանակաշրջանում: Այդ ժամանակ վանքը գտնվում էր Հաթերքի իշխանների տիրույթում, որոնք ծագում էին Արցախի հին՝ Առանշահիկների թագավորական տոհմից⁶⁶: 13-րդ դարի 20-ական թվականներից վանքի հովանավորներ են դառնում Դոփյանները՝ Չաքարե և Իվանե Չաքարյանների քույր Դոփից և Արցախի իշխան Հասան Ա-ից սերող իշխանատունը: Հատկանշական է, որ Դադիվանքի առաջնորդները հիմնականում ծագում են իշխանական տներից:

Դադիվանքի ճարտարապետությունը պատշաճ կերպով ներկայացված է մասնագիտական գրականության մեջ: Դարերի ընթացքում վանքի կառուցապատման փուլերի հաջորդականությունը 11 հատակագծերի միջոցով իր գրքում հանգամանորեն ներկայացրել է Սամվել Այվազյանը⁶⁷:

Վանական համալիրի պարսպապատ հատվածի հյուսիսային կողմում եկեղեցիներն են, գավիթը, ժամատունը, իսկ հարավում՝ վանական օժանդակ շենքերը (*նկար 29*): Հնագույն կառույցն ավանդաբար Դադիի գերեզմանը համարվող՝ տեղում եղած նախկին շինությունն է, որի վրա ավելի ուշ կառուցվել է բազիլիկ եկեղեցի (10-11-րդ դդ., կամ՝ ավելի ուշ) (*նկար 30*): Նրան հարավից պատակից է ուղղանկյուն խորանով փոքր միանավ բազիլիկ եկեղեցին՝ դիմացի կողմում թաղածածկ գավիթով (12-րդ դ.): 1224 թ. Ս. Դադի եկեղեցու դիմաց մեծ քառամույթ գավիթ է կառուցել վանահայր Գրիգորիսը (Վասակ նահատակի որդին)⁶⁸:

Երկու բազիլիկներից հարավ-արևելք՝ անկյունով նրանց միացած դիրքում, 1214-ին կառուցվել է գմբեթավոր Կաթողիկեն, որը դարձել է համալիրի գլխավոր եկեղեցին: Նրա մուտքի դիմաց պատրաստվել է հարավային կողմում սյունաշարով բացօթյա սրահ, որն արևմտյան կողմում ավարտվում է զանգակատնով՝ կառուցված 1334 թ. Սարգիս եպիսկոպոսի կողմից: Կաթողիկեից հարավ-արևմուտք՝ մյուս եկեղեցիների առանցքից որոշ շեղությամբ կառուցվել է աղյուսակերտ թմբուկով փոքր գմբեթավոր եկեղեցին (1211-1224 թթ.) (*նկար 31*)⁶⁹:



29



29 Վանքի ընդհանուր տեսարանը
(Լուսանկարը՝ Յրայր Բազի,
2007 թ.)

30 Բազիլիկը առաջին պլանում
(Լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի,
2018 թ.)

30



31

Վանական համալիրի հարավային մասում վանքի կառույցների մյուս խումբն է: Այստեղ առավել ակնառու է 1211 թ. կառուցված քառասյուն մեծ ժամատունը: Սրանից դեպի արևմուտք տեղ են գտել սեղանատունը, հյուրատունը, գրատունը, բավական մեծ սենյակներով երկհարկանի ապարանքը և այլն: Աշխարհիկ և օժանդակ շինությունների առատությամբ Դադիվանքն առանձնանում է հայկական մյուս վանքերից: Դադիվանքի առաջնորդ Աթանասի պատվերով կերտված 1283 թ. երկու բարձրարվեստ խաչքարերը չափերով ամենից խոշորն են Արցախում (նկար 32):

Վանքի գլխավոր՝ Կաթողիկե եկեղեցին կառուցել է Հաթերքի իշխանուհի Արզու Խաթունը՝ ի հիշատակ իր հանգուցյալ ամուսնու՝ Վախթանգի (արձանագրության մեջ՝ Վախտանկ) և երկու որդիների, որոնցից ավագը նահատակվել էր թուրքերի դեմ պատերազմում: Այս մասին է վկայում եկեղեցու հարավային պատի՝ 1214 թ. ընդարձակ շինարարական արձանագրությունը, որտեղ նշվում են նաև վանքին արված բազմաթիվ նվիրատվությունները⁷⁰:

31 Ձանգակատունը, Կաթողիկե եկեղեցին և փոքր գմբեթավոր եկեղեցին (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)

Եկեղեցու անունը, սկսած շինարարական արձանագրությունից մինչև նրա պատերին եղած բազմաթիվ նվիրագրերը, նշվում է «Կաթողիկե» ձևով: Այս եկեղեցին, որը վանքի՝ սրբատաշ քարով միակ շինությունն է, ուղղանկյուն հատակագծով, ներքուստ խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով զմբեթավոր կառույց է: Եկեղեցու հարավային և արևելյան պատերին՝ կենտրոնական լուսամուտներից վեր, տեղադրված են կտիտորական քանդակներ՝ եկեղեցու մանրակերտով:

Արզու Խաթունի հիմնած Ս. Կաթողիկե եկեղեցին Գաղիվանքի կառույցների շարքում արտաքուստ և ներքուստ ամենից ճոխ հարդարանք ունեցողն է: Դրսի կողմում քանդակազարդված գլխավոր հատվածներն են արևմտյան (գլխավոր) և հյուսիսային (այժմ փակված) մուտքերի շրջանակներն ու բարավորները (*նկար 33*), ինչպես նաև՝ հարավային և արևելյան պատերին եղած պատվիրատուների (կտիտորական) բարձրաքանդակները: Հարավային պատի վրա՝ Արզու Խաթունի ընդարձակ արձանագրության վերին մասում, լուսամուտի երկու կողմերում քանդակված են ամբողջ հասակով կանգնած իշխանագույնները՝ Հասանն ու Գրիգորը՝ բնորոշ հագուստներով



32



33

32 Գաղիվանքի մեծ խաչքարերը, 1283 թ. (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)

33 Կաթողիկե եկեղեցու հյուսիսային փակված մուտքը (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2017 թ.)

րով ու բարձր գլխարկներով (*նկար 34*): Նրանց առաջ պարզած ձեռքերից վեր քանդակված է եկեղեցու մանրակերտը, իսկ քանդակներից ներքև շինարարական մեծ արձանագրությունն է: Իշխանագույններն այդ ժամանակ արդեն մահացած էին և պատկերված են փոքր լուսապսակներով: Ճարտարապետական ինքնատիպ լուծում է գտնվել մանրակերտի համար, որի թիկունքում փոքրիկ լուսամուտ է բացված: Ար-







34

ևելյան պատին համանման հորինվածք է եղել, բայց զույգ կերպարներն այժմ պահպանվել են կիսանդրու չափով (ըստ Ստ. Մնացականյանի՝ քանդակների ներքևի մասերը տաշվել, հանվել են հետագայում)⁷¹: Չախ կողմում պատկերված է ընդգծված լուսապսակով և գլխաբաց մի կերպար, իսկ աջում՝ դարձյալ իշխանական գլխարկով, փոքր լուսապսակով և գլխաբաց մի կերպար, իսկ աջում՝ դարձյալ իշխանական գլխարկով, փոքր լուսապսակով և թավ մորուքով հասուն տղամարդ: Ուսումնասիրողները ենթադրում են, որ իշխանական հանդերձանքով տղամարդը Արզու Խաթունի մահացած ամուսինն է՝ Վախթանգը, իսկ նրա դիմաց գտնվող Սուրբը՝ Ս. Դադին, որի անունն է կրում վանքը (*Ոկար 35*)⁷²:

Կաթողիկե եկեղեցու ներքին հարդարանքի մասին կարելի է որոշ պատկերացում կազմել 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու (մահ. 1271 թ.) հայտնած տեղեկություններից: Գանձակեցին հայտնում է, որ նշանավոր վարդապետ Մխիթար Գոշը (մահ. 1213 թ.) որոշ հայ իշխանների աջակցությամբ կառուցել է Նոր Գետիկի վանքը (Գոշավանք), այդ իշխանների շարքում առաջինը նշում է Հաթերքի տեր Վախթանգ Խաչենցուն ու նրա եղբայրներին, ինչպես նաև՝ Վախթանգի կին Արզու Խաթունին: Վերջինիս մասին գրում է, որ նա իր դուստրերի հետ պատրաստել-գործել է եկեղեցու վարագույրը («վարագույր գեղեցիկե ծածկոյթ սուրբ խորանին»), որը գեղեցկությամբ ու ճոխ պատկերազարդմամբ՝ ունենալով նաև Փրկչի ու Սրբերի պատկերները, զարմացնում էր տեսնողներին. «եներկեալ պէսպէս եւ զանազան, զործ

34 Արզու Խաթունի որդիների՝ Դասանի ու Գրիգորի քանդակները, 1214 թ. (լուսանկարը՝ Կարեն Մաթևոսյանի, 2017 թ.)

35 Արզու Խաթունի ամուսին Վախթանգի և Սուրբ Դադիի քանդակները, 2014 թ. (լուսանկարը՝ «Դադիվանք» գրքից)

քանդակակերպ եւ նկարեալ պատկերօք, ճշգրտագոյնհանուածովք՝ տնօրինականօք Փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն»⁷³: Շարունակելով խոսքը՝ պատմիչը հայտնում է, որ Արգու Խաթունը ոչ միայն այդ եկեղեցու համար է վարագույր պատրաստել, այլև ուրիշների՝ այդ թվում նշելով Դադիվանքը. «Եւ ոչ միայն այս եկեղեցոյս արար ծածկոյթ, այլ եւ այլոց եկեղեցեաց՝ Հաղբատայ եւ Մակարայ վանից եւ Դադի վանից, քանզի յոյժ սիրող էր եկեղեցեաց բարեպաշտ կին»⁷⁴: Պարզ է, որ Դադիվանքի՝ իրենց կառուցած եկեղեցում Արգու խաթունն ու իր դուստրերը պետք է առավելագոյն ջանք գործադրելով ստեղծեին մի փառահեղ վարագույր: Կարծում ենք, որ առնվազն 1214 թ. ստեղծված այդ վարագույրն է զարդարել Կաթողիկէ եկեղեցու բեմը մաս 1297 թվականին, երբ խորանի աջ և ձախ կողմերում՝ եկեղեցու հյուսիսային և հարավային պատերին, ստեղծվել են Ս. Ստեփանոսի և Ս. Նիկողայոսի որմնանկարները:



35

Գաղիվանքի որմնանկարը

Գաղիվանքի որմնանկարները հայկական որմնանկարների շարքում, ներառյալ մինչև 15-րդ դարը, միակն է, որի վրա նշված է նրա ստեղծման ստույգ թվականը՝ 1297 թ.: Վերևում մենք արդեն խոսել ենք որմնանկարի հնարավոր պատվիրատուների մասին, այստեղ անդրադառնանք բուն պատկերներին: Գրանք պահպանվել են Ս. Կաթողիկե եկեղեցու ավագ խորանին հարող հյուսիսային և հարավային պատերին և, նախկինում խամրած և մրի շերտով ծածկված լինելու հետևանքով, մինչև վերջին ժամանակներն անհրաժեշտ չափով չեն ուսումնասիրվել: Շատերի համար անգամ հստակ չի եղել, թե պատկերագրական ինչ տեսարաններ են այնտեղ ներկայացված: 2014-2016 թթ. իտալաբնակ ճարտարապետ Արա Ջարյանի և ազգությամբ բելգիացի վերականգնող Քրիստին Լամուրեի ջանքերով կատարվել է որմնանկարի ամբողջական մաքրում և վերականգնում: Գրա շնորհիվ որմնանկարներն այժմ երևում են առավել ամբողջական տեսքով⁷⁵:

Գաղիվանքի որմնանկարները ոչ միայն բարձրարվեստ ստեղծագործություն են, այլև ուշագրավ են թեմատիկայի առումով: Պատկերներից մեկը՝ հարավային պատի վրա, ներկայացնում է քրիստոնեական մեծագույն Սրբերից մեկին՝ Փոքր Ասիայի Մյուռա քաղաքի հայրապետ Նիկողայոս Աքանչելագործին, պատկերված է նրա հայրապետական իշխանություն ստանալու վարքագրական դրվագը, իսկ մյուսը՝ հյուսիսային պատի վրա՝ Ս. Ստեփանոս Նախավկայի նահատակությունը: Երկու

36 Սուրբ Նիկողայոս Աքանչելագործի՝ հայրապետական իշխանություն ստանալու վարքագրական պատկերը (Ուսանկարը՝ Սամվել Կարապետյանի, 2017 թ.)





UFUS. UDE
UUFUS

UKEF
UFEQ
D^o cur

որմնակարն էլ ուղեկցվում են դրանց ստեղծման ժամանակ նկարի մեջ օգտագործված ներկով գրված հայերեն արձանագրություններով, որոնք պարզաբանում են պատկերված կերպարներից ամեն մեկի ով լինելը: Նշված Սրբերի պատկերները քրիստոնեական արվեստում հայտնի են դեռևս վաղ շրջանից, հայ արվեստում՝ հիմնականում մանրանկարչության մեջ:



38

Սակայն Դաղիվանքի որմնանկարում տեղ գտած հորինվածքներն աչքի են ընկնում պատկերագրական և գեղարվեստական առանձնահատկություններով:

Ս. Նիկողայոսը պատկերված է ընդունված կանոնին համապատասխան. սպիտակամորուս է, ճաղատ, լայնաճակատ, հայացքը կենտրոնացած է: Նրա գլխավերևում գրված է. «Ս(ուր)բ Նիկողայոս Հայրապետն»: Որմնանկարի պատկերագրությունը և հատկապես Ս. Նիկողայոսի կերպարը կրում են բյուզանդական արվեստի հեռավոր արձագանքները (*նկար 36*):



39

Նիկողայոսի աչից Հիսուս Քրիստոսն է, ձախից՝ Ս. Մարիամ Աստվածածինը: Հիսուսի և Մարիամի լուսապսակների հարևանությամբ գրված է. «Ք(րիստո)ս» և «Ս(ուր)բ Ա(ստուա)ծածին Մարիամ»: Նրանք ասես հովանի են Ս. Նիկողայոսին: Հիսուսը քայլ է արել դեպի Ս. Նիկողայոսը և աջ ձեռքով նրան է մեկնել զարդակազմ Ա-



40

վետարան, իսկ Մարիամ Աստվածածինը թեթևակի հակված է դեպի Ս. Նիկողայոսը և նրան է մեկնել խաչագարդ ուրար (*նկար 37*): Հիսուսը կարմրավուն քիտոնով է և սպիտակ թիկնոցով, ձախ ձեռքին ունի գալարափաթեթ:

Որմնանկարի առանձնահատկություններից մեկն այն է, որ Ս. Նիկողայոսի և Ս. Աստվածածնի կերպարների միջև պատկերված է հրեշտակ: Նրա ձախ թևը հպված է Ս. Մարիամին, իսկ ձեռքերը, որ ծածկված են թաշկինակով, ուղղել է դեպի Ս. Նիկողայոսը: Հրեշտակի գլխավերևում գրված է. «Ես եմ՝ Ս(ի)քայել, որ միշտ պահեն զքեզ եւ գործակից եմ քեզ ի մանկութենէ: ի թվ(ին) ՉԽԶ (1297)» (*նկար 38*)⁷⁶: Խոսքն ուղղված է Ս. Նիկողայոս Սքանչելագործին: Այսինքն՝ Միքայելը սրբազան խորհրդի (Սրբի ձեռնադրության) սպասարկու է, միաժամանակ՝ Ս. Նիկողայոսի պահապան ու օգնական հրեշտակը նրա մանկության օրերից: Այս բանն արձանագրված

37 Սուրբ Մարիամ Աստվածածին (որմնանկարի հատված)

38 Դադիվանքի որմնանկարի՝ 1297 թվականը կրող ներկագիր արձանագրությունը (*լուսանկարը՝ Արա Ջարյանի, 2016 թ.*)

39 Սուրբ Ստեփանոս Նախավկայի քարկոծման տեսարանը (*լուսանկարը՝ Արա Ջարյանի, 2016 թ.*)

40 Հրեշտակների խումբը (որմնանկարի հատված)

է Սրբի վարքում՝ կապված նրա կենսագրության մի դրվագի հետ, երբ տեսիլքներ է ունենում ու դրանց խորհուրդը հասկանալու համար աղոթում, որից հետո նրան է հայտնվում հրեշտակը և ասում՝ «Ես եմ Միքայել՝ որ հանապազ կամ ես պահեմ զքեզ»⁷⁷:

Ս. Նիկողայոսի որմնանկարի հանդիպակաց պատի վրա եղած մյուս որմնանկարը, որտեղ ներկայացված է Ս. Ստեփանոս Նախավկայի քարկոծման տեսարանը, նույնպես ունի ներկագիր արձանագրություն (*նկար 39*): Պատկերի վերին մասի աջ կողմում Քրիստոսն է, Որը ձեռքը մեկնել է դիմացի կողմում պատկերված հրեշտակներին, իսկ նրանց միջև գրված է հետևյալը՝ «Տեսէք զհողեղէն բնութի(ւն), վասն Իմ չարչարե(ալ մար)մնով»: Ուշադրության է արժանի, որ այս տողերը բառացի մեջբերում են 12-րդ դարի Հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալու մի չափածո երկից՝ Ստեփանոս Նախավկային նվիրված տաղից, որը հայ որմնանկարչության պատմության մեջ բացառիկ դեպք է⁷⁸: Որմնանկարում հատկապես տպավորիչ է մեծ վարպետությանը նկարված հրեշտակների խումբը (*նկար 40*):

Հարկ է նշել, որ Ս. Ստեփանոս և Ս. Նիկողայոս սրբերի վարքագրական պատկերումը և հատկապես՝ երկրորդի պատկերը, Հայ եկեղեցու դավանանքին հետևող եկեղեցիների որմնանկարչության մեջ չի հանդիպում՝ ո՛չ դրանից առաջ և ո՛չ էլ հետո: Այս առումով ուշագրավ է արվեստաբան Լիդիա Դուռնովոյի կարծիքը, ըստ որի՝ այդպիսի հազվագյուտ տեսարանի հայտնվելը պետք է որ իր առանձնահատուկ պատճառներն ունենար⁷⁹: Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու զույգ որմնանկարները ստեղծվել են Սրբերի դերն ընդգծելու որոշակի նպատակով և օժտված են պատկերագրական յուրահատկություններով: Ս. Նիկողայոս Սքանչելագործի պատկերումն ու նրա գործության առանձնակի շեշտադրումը՝ նկարում Միքայել հրեշտակապետի կերպարի ու նրա խոսքերի ավելացմամբ, հնարավոր է, որ պայմանավորված է եղել որմնանկարի ստեղծումից որոշ ժամանակ առաջ Դադիվանքի եպիսկոպոսության տարածքում հայտնված և «Սքանչելագործ» մականունով հորջորջված ինքնակոչ քարոզիչ Դավիթ Ծարեցու համբավը՝ իրական Սքանչելագործի հեղինակությանը չեզոքացնելու ցանկությամբ⁸⁰:


Դադիվանքի ձեռագրերը

Դադիվանքը հայտնի է նաև որպես գրչության կենտրոն, սակայն այստեղից պահպանված մատյաններն ավելի ուշ դարերից են: 16-17-րդ դարերում Դադիվանքում գործունեություն են ծավալել Վերին Խաչենում հայտնի՝ Ծարեցի Հովհաննես անունով հիշատակվող երկու գործիչ: Երկրորդ Հովհաննեսը, որն առաջինի եղբոր թոռն էր, նրանից տարբերվելու համար երբեմն իրեն կոչում էր «փոքր Հովհաննեսիկ»: Այսպես, իրենց ստացած ձեռագրերից մեկի (Վարդան Արևելցու Հնգամատյանի մեկնության օրինակ) հիշատակարանում կարդում ենք՝ «Ձքաջ ռաբունապետն Յոհաննես Ծարեցին յիշեցէք ի Քրիստոս, որ ստացողն է գրոցս, զի ես դուք յիշեալ յիջիք ի Քրիստոսէ: Այլե՛զ զիս՝ զփոքր Յոհաննիսիկս, եղբոր թոռս ես սպասաւոր նորինն» (ՄՄ 1136, էջ 2բ):


Ավագ Հովհաննես վարդապետ Ծարեցին ծնվել է Ծար գյուղաքաղաքում, հետագայում աշակերտել է Դուկաս վարդապետ Հաղբատեցուն: Նա ժամանակի հայտնի հոգևոր գործիչներից էր, ընթերցասեր ու գրասեր մարդ, որի ողջ գործունեությունն անցավ Դադիվանքում: Այստեղ նա եղել է Հովհաննեսիկի ուսուցիչը, որին միշտ էլ

41 Գրչության նմուշ, գրիչ՝ Վառվառե (ՄՄ 2067, էջ 109ա)

42 Դադիվանքում գրված հիշատակարան, գրիչ՝ Բարսեղ, 1684 թ. (ՄՄ 7232, էջ 322ա)



41



42

երախտագիտությամբ է հիշել Հովհաննեսիկը՝ նրան կոչելով «սրբաւեր եւ աստուածաւեր, հեզ եւ աղօթող, ընթերցաւեր եւ գրաւեր»: Հովհաննես Ծարեցին վախճանվել է 1583 թվականին և թաղվել Գեղամա երկրի Վասակաշեն գյուղում⁸¹: Վասակաշենը ներկայիս Վարդենիս քաղաքն է, որի եկեղեցուն է այժմ գտնվում Հովհաննեսի տապանաքարը:

Մելքոնի որդի Հովհաննեսի (Հովհաննեսիկ) մասին պահպանված տեղեկություններն ավելի շատ են. ծնվել է 1560 թ., կրթություն ստացել է Դաղիվանքում՝ նախ՝ Հովհաննես վարդապետի մոտ, ապա՝ աշակերտել անվանի բաբունապետ Ներսես Գնունեցուն, ստացել է վարդապետական աստիճան, եղել է Դաղիվանքի միաբան: Պատմության մեջ նա հայտնի է իր Ժամանակագրությամբ, որը պահպանվել է ՄՄ 2776 (էջ 266ա-271ա) և ՄՄ 8245 (էջ 93ա-95բ) ձեռագրերում:

Հովհաննեսիկը Դաղիվանքում ոչ միայն գրել, այլև ստացել ու նորոգելու է տվել ձեռագիր մատյաններ՝ հարստացնելով վանքի մատենադարանը: Նա ստացել է 1411 թ. Ապրակունյաց վանքում Մատթեոս Ջուղայեցու օրինակած Ավետարանը, այդ մասին հիշատակարան թողել (ՄՄ 2519, էջ 3բ): 1588 թ. Հովհաննեսիկը նորոգելու է տվել Վարդան Արևելցու «Երգ երգոցի» մի օրինակ⁸², Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցի»՝ 15-րդ դարում Պետրոս երեցի օրինակած մատյանը 1594 թվականին ստանալով՝ մատյանի մի քանի էջերում այդ մասին թողել է հիշատակագրություններ (Երուսաղեմ, ձեռ. 2208)⁸³: Վերջապես, 1606 թ. Հովհաննեսիկը ստացել է 1451 թ. Սևանում Դանիել արեղայի օրինակած մատյանը (ՄՄ 1301, էջ 23բ):

Վիմագիր աղբյուրները խոսում են նաև Հովհաննեսիկի եկեղեցաշեն գործունեության մասին. Գեղարքունիքի Սողք գավառի Ազատ գյուղի Ս. Աստվածածին վանքի մի արձանագրության վկայությամբ եկեղեցին 1618 թվականին կառուցել է Հովհաննեսիկ Ծարեցին. «ՌԿԷ (1618)» ես՝ Յոհաննէս Առաստ վարդապետս, շինեցի զեկեղեցիս ի փրկութիւն հոգոյ իմոյն⁸⁴: Եկեղեցու հարավային պատին եղած մեկ այլ՝ ավելի ընդարձակ արձանագրության մեջ Հովհաննեսիկը նշում է իր տոհմի ակունքները՝ իր տոհմաբանությունը սկսելով Դովի իշխանուհու թոռ Սարգսից⁸⁵: Ենթադրվում է, որ Հովհաննեսիկը մահացել է 1623 թվականից ոչ ուշ⁸⁶:

Հովհաննեսիկի Ժամանակագրությունը ընդգրկում է 28 տարվա ժամանակահատված՝ 1572-1600 թվականների իրադարձությունները: Բնագրում նկարագրված են թուրք Մուստաֆա Լալա փաշայի՝ 1578 թվականին Անդրկովկաս կատարած արշավանքներն ու պատերազմները, 1579-1580 թվականներին Ատրպատականում և Աղվանքում մոլեզնդ սաստիկ սովն ու



43



44

շիում էր (1840-ական թթ.), Դադիվանքից ներքև՝ Թարթառի ձախ կողմում, պատահաբար մի քարայր է գտնվել, որի մեջ բազմաթիվ հին ձեռագրեր են եղել, և մետրոպոլիտի հոգաձուռյամբ դրանք փոխադրվել են Շուշի⁸⁹:

Համառոտ անդրադառնանք նաև մի քանի ձեռագրերի, որոնք մեզ են հասել Վերին Խաչենի և Դադիվանքի շրջակայքի այլ վայրերից: Վկայություն է պահպանվել այն մասին, որ 1387 թվականին Սարգիս վարդապետը Ծար գյուղաքաղաքում ընդօրինակել է մի Ավետարան⁹⁰:

Հետաքրքիր է հետևել հիշատակարաններում իրեն Թումա (Թովմա) Սյունեցի կոչող՝ 15-րդ դարում գործած գրչի գործունեությանը Ծարում և նրա շրջակայքի գյուղերում: Դրանց շարքում ուշագրավ է հատկապես 1402 թ. Դադիվանքի Չաքարիա արքեպիսկոպոսի առաջնորդության տարիներին գրված մատյանը, որի գրչության վայր նշված է Քարավաճառ գյուղը, որն այդ բնակավայրի անվան պահպանված հնագույն վկայությունն է: Բուն մատյանը Գրիգոր Տաթևացու՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունն է, որի ընդօրինակությունը պատվիրել է Հունան կուսակրոն քահանան՝ իր ծնողների՝ Առաքելի և Մինախաթունի հիշատակին: Հիշատակարանում գրչության հանգամանքների մասին կարդում ենք՝ «կատարեցաւ սա ի թուականութեանս հայկազեան տաւմարի ութ հարիւրերորդի յիսներորդի առաջնորդի ամի (1402) ի հայրապետութեան Հայոց եւ Աղուանից երկուցունց տերանց Կարապետք կոչեցելոց, զոր այսպէս պատահեցան ի մերումս ժամանակի, անուանակիցք զոլ միմեանց, եւ յարիեպիսկոպոսութեան այսմ նահանգիս՝ տէր Չաքարիայի՝ Դադիվանուց վերատեսչի, ի հռչակաւոր երկիրս Ծար՝ ի գեղս Քարավաճառ՝ ընդ հովանեաւ սրբոցս, որ

43-44 խորաններ, Ավետարան, նկարիչ՝ Բարսեղ, 1684 թ., Դադիվանք (ՄՄ 7232, էջ 10բ-11ա)





նորա - և թարու
ցանկը գանձա
միտ հինգ - և ա
սէր - զինչ գործե
աց ընդես որ յա
ուրա յորա հայեց
ալ յիս բառնալ զ
նախատեսնա իմ
իմարդինչ
անն՝ վեց է
բորդի՝ առաքելց
գարբիչ հրեշտ
յայնքաղաք մի
գպիկեացաւ ոչ
բում անունէր նա
գարեթ - առկոյս
խօսեցեալ առնո
բում անունէր յով
սէր ի տանէ դա
թի - և անուն
Ղ մ
բ

կուսին մարիամ -
և եկեալ առնա
առէ - ուրախ ըր
բերկրեալ զ
ընդ քեզ -
և նա ընդբանան
խոտեցաւ - և խոր
հէր ընդ միտս -
Թէ որպիսի ինչէ
ցէ ողջոյնս այս -
և ասէ ցնա հրեշ
տակն - մի երկն շեր

յովսեփոս ասէր -
արիստ գնանուկ
և փախեր յեգիպտոս -
և անդ լինիլնր ցոր
ժամ ասացից քեզ

լուսաւորեցան է
րեմք նորա իբրև
գարեղանին - և ցանդ
երձք նորանդէն սր
պիտակ իբրև զլոյս -
և ասէ Երևե
ցան նոցա մով
սէս և եղև որ խօ
սէին ընդ նմա -
աստասխանիւն
պետրոս և աս է
ց յս - որ բարս
քէ մեզ աստ լինել
և Թէ կամին արաս

գորհամամ զ քեզ
զի լուսարինչ - և ես
գիտելի զի յամե
նայն ժամ լսեսինչ
այլ վասն ժողովը
դեանս որ շուրջ
կան առնեմ զի հա

աստացեն լինիլնր
առաքելցեր զիս
այս իբրև ա
սաց - ի ճայն մեծ
արդարակեաց և ասէ
զայ քեզ - ար ի
էկ - ար արք ս -

համաճարակը, 16-րդ դարավերջին վրաց ժողովրդի ազատագրական պայքարը Օսմանյան Կայսրության դեմ, պարսից Խուդաբանդա շահի, ապա Շահ Աբասի վարած քաղաքականությունը: Իբրև դեպքերի ակնատեսի ու ժամանակակցի՝ Հովհաննեսիկի հաղորդած տվյալներն արժանահավատ են և ունեն պատմական կարևոր արժեք: Հովհաննեսիկի ժամանակագրությանն առաջին անգամ անդրադարձել է Առաքել Դավրիժեցին՝ այն որպես առանձին գլուխ տեղադրելով իր Պատմության մեջ՝ «Պատմութիւն Ադուանից աշխարհին արարեալ Ծարեցի Յովհաննէս վարդապետին» վերնագրով⁸⁷: Ժամանակագրության բնագիրը, որը Հովհաննեսիկի ինքնագիրն է, հետագայում մուծվել է ավելի հին՝ 1334 թվականի մի ձեռագրի մեջ (ՄՄ 2776, էջ 266ա-271ա):

Դոփյան իշխանական տոհմից Պետրոս րաբունապետը իր և հարազատ եղբոր՝ Գրիգոր եպիսկոպոսի հիշատակի համար 1684 թվականին Դադիվանքի մոտ գտնվող Կուսանաց վանքում, կին գրիչ Վառվառենի օրինակել է տալիս Գրիգոր Տաթևացու «Քարոզգիրքը»: Գրիչը գրչության տեղի մասին գրում է. «ի յերկիրս Ծար՝ Փոքր Սիւնիս կոչեցելոյ՝ ի սուրբ վանս Կուսանաց՝ ընդ հովանեաւ Դադէի Սր. Առաքելոյն եւ Սր. Կաթողիկէին եւ Սր. Աստուածածնին եւ ամենագոր Ս. Նշանին Մարդադանեաց» (ՄՄ 2067, էջ 471ա): Վառվառեն վարպետ գրիչ է. նա գրում է կոկիկ, մանր գրերով ու համաչափ (*նկար 41*): Գրչուհին ուշադրություն է դարձրել ոչ միայն ձեռագրի գեղագրության, այլև ստուգության վրա՝ խնամքով կատարելով նաև սրբագրումները: Բարսեղը ծաղկազարդել է մատյանը գեղեցիկ լուսանցազարդերով ու զարդագրերով և կազմել այն: Նրան օգնել է եղբայրը՝ Ղազար սարկավազը:

1671 թվականին Օղվերձում Պետրոս վարդապետի խնդրանքով Եփրեմ քահանայի օրինակած մագաղաթյա Ավետարանը 1684 թվականին դարձյալ Բարսեղ գրիչը ծաղկում ու կազմում է՝ օգտագործելով ոսկի և հարուստ ներկապնակ (ՄՄ 7232): Ավետարանի նկարազարդումը նախաձեռնել էր Գրիգոր քահանան, բայց 1676 թվականին նա վախճանվում է, և տարիներ հետո հոր կիսատ թողած գործը շարունակում է որդին՝ Բարսեղը: Հիշատակարանում գրչության վայրի մասին ասվում է. «ի գերահռչակ և ի հին հանդիսարանիս Դադէի վանիցս, ընդ հովանեաւ Սուրբ Առաքելոյս և Սուրբ Աստուածածնիս և ամենագոր Մարդադանեաց Սուրբ Նշանիս և այլ ամենայն սրբոցս, որ աստ կան ամփոփեալ» (ՄՄ 7232, էջ 322ա) (*նկար 42*):

Դադիվանքում նկարազարդված այս մատյանում Բարսեղ քահանան նկարել է խորանները (*նկար 43, 44*), ավետարանիչների պատկերներն՝ անվանաթերթերով (*նկար 45, 46*), և քսանչորս տերունական նկար: Թեմատիկ պատկերները տեղադրել է բնագրային թերթերի մեջ՝ Ավետարանի պատմություններին կից: Պատկերազարդման այդ եղանակն ավելի դյուրին է դարձնում նյութի ընկալումը, քանի որ համապատասխան պատկերը զուգադիր է ավետարանական պատմությանը: Բարսեղի ստեղծած տերունական դրվագները թեև թեմաների ավանդական պատկերագրության շրջանակում են, սակայն ունեն նաև յուրահատկություններ, ինքնատիպ հորինվածքային լուծումներ: Ուշագրավ է նաև նկարազարդման մեջ ոսկու օգտագործումը (*նկար 47-53*):

1694 թ. Դադիվանքում Պետրոս րաբունապետի առաջնորդության տարիներին գրվել է ևս մի Ավետարան⁸⁸: 1699 թվականին Թովմա վարդապետը Դադիվանքում օրինակում է մի Ժողովածու (ՄՄ 8505): Այս ժամանակ Դադիվանքի առաջնորդը Չաքարիա րաբունապետն էր:

Ուշագրավ տեղեկություն է հաղորդում Մակար Բարխուդարյանցն այն մասին, որ Բաղդասար Հասան-Չալալյանց մետրոպոլիտի ժամանակ, երբ նրա նստավայրը Շու-

ան՝ բազմեցուցէք
 զդոսսա՛ դասսա դասսա՛
 յիսո՞ւն յիսո՞ւն :
 Լարարին այն
 պէս և բազմեցու
 ցին զամենեւեան
 և առեալ զհինգ
 նկանակն՝ և զերկու
 ս՝ ձկունսն հայե
 ցաւ յերկինս :
 օրհնեաց . և է
 բեկ . և տայր ցա

շակերտան արկա
 նէ՛ յողովորէ անն :
 Երան և յազեցան
 անքն և բարձին զնշ
 խար կոտորոցն երկու
 տասան ասկառի :






52



53



54

ի սմայ, ձեռամբ մեղսամակարթ և անարիեստ գրչի՝ Թումայի Սիւնեցոյ՝ ի խնդրոյ պատուական և սրբասնեալ կուսակրան քահանայի Յունանու» (ՄՄ 3578, էջ 293բ) (նկար 54):

Գրիչ Թովման Ծարի Գետամեջի Սբ. Աստվածածին եկեղեցում 1411 թվականին արտագրում է Դաշոց, որի հիշատակարանում գրչության վայրի մասին նշվում է.

«Սուրբ եւ հռչակատր Գետամիջի վանքի Սբ. Աստուածածին եւ Մարդադանեաց սուրբ Ստեփանոսի հովանու ներքոյ»⁹¹: Նույն վայրում 1456 թ. Վրթանես քահանան ծնողների՝ Մուրատ աղայի և Մառայի հիշատակին Թովմա գրչից ստանում է Ավետարան⁹²: 1661 թվականին Գետամիջի վանքում մահացած ամուսնու հիշատակին Խանումը պատվիրում և ստանում է Ավետարան⁹³: Նույն շրջանում Թուման Ծարում գրում ու ծաղկում է մեկ այլ Ավետարան (ՄՄ 8124): 1652 թվականին «Ծարա երկրի Ապահեն» գյուղում Մովսես Գորիսեցին օրինակել, տերունական պատկերներով, բազմաթիվ ճակատագարդերով ու լուսանցագարդերով ծաղկել ու կազմել է մի Շարակնոց (ՄՄ 1626): Մովսեսը 1647 թ. «ի յերկիրն Ծարայի մայրաքաղաքն Սոթէի» նորոգել էր 1490 թ. Գարդմանքի Խորոտկա վանքում գրչագրած Ավետարանը (ՄՄ 8135)⁹⁴:

47-53 Տերունական պատկերներ՝ Ավետում (էջ 162բ), Գրեշտակի հայտնությունը Գովսեփին (Փախուստ եգիպտոս) (էջ 19ա), Պայծառակերպություն (էջ 60ա), Ղազարոսի հարությունը (էջ 286ա), Գաղղղություն (էջ 191բ), Գամբարծում (էջ 246բ), Գոգեգալուստ (էջ 296ա), Ավետարան, նկարիչ՝ Բարսեղ, 1684 թ., Ղաղիվանք (ՄՄ 7232)

54 Գիշատակարանի հատված՝ գրչության վայր Քարավաճառ գյուղի հիշատակությամբ, գրիչ՝ Թումա Սյունեցի, 1402 թ. (ՄՄ 3578, էջ 293բ)

Թաղետոս քահանան 1653 թվականին «ի յերկիրս Ծարայ ի գեաղոս Մոս» Մարտիրոս դպրին գրել է տվել Ավետարան՝ որպես բարի հիշատակ իրեն ու ծնողներին: Մատյանը Մովսես երեցը ծաղկազարդել ու կազմել է, փեղկին մետաղյա ակնակոտ խաչ դրել (ՄՄ 3647):

1663 թ. Սիմեոնի խնդրանքով Եսայի երեցը գրում և ծաղկում է Ավետարան՝ «ի յերկիրս Ծարայ, ի գեաղոս» (ՄՄ 4053, էջ 301ա): Այստեղ հիշատակարանի վերջին թերթը կտրված է, և անհայտ է մնում գրչության կոնկրետ վայրը: Այս ձեռագրի օրինակումից տասը տարի անց՝ 1673 թվականին, Եսայի գրիչը Դաշտակ գյուղում «ի յերկիրս Ծարայ՝ ի գեաղոս, որ կոչի Դաշտակ՝ ընդ հովանեաւ Սբ. Աստուածածնին եւ Մարդաղաւնեաց Սբ. Նշանին եւ Սբ. Յակոբին» ավարտում է տեր Բարսեղի պատվիրած Մաշտոցը (ՄՄ 3601): Հավանաբար, նախորդ ձեռագիրը Եսային նույնպես օրինակել է Դաշտակում:

Ծանոթագրություններ

55 **Մեսրոպ Մագիստրոս Տեր Մովսիսեան**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինությունները, Երուսաղէմ, 1938, էջ 83-91, Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը, Երևան, 1976, էջ 109-116, Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան, Դաղիվանք, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. Ը, Պէյրուք, 1980, էջ 7-54, Դիվան, պրակ V, էջ 38-40, Թ. Մինասյան, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015, էջ 33-37, Ս. Այվազյան, Դաղի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Երևան, 2015 և այլն:

56 **Ղ. Ալիշան**, Հայապատում, էջ 47, Գիրք թղթոց, էջ 536:

57 «Առաքեալն Դաղիու յեօթանասնից անտի, որ չոգաւ հրամանաւ Թաղետոսի ի Մեծ Հայք եւ առ հիւսիսի եւ լուեալ զկատարումն առաքելոյն Թաղի՝ դարձեալ եմուտ ի Փոքր Սիւնիք եւ կրօնաւորեալ անդէն կատարեցաւ եւ տեղին՝ յանուն նորա կոչեցաւ Դաղիա» (**Տեառն Միխայէլի պատրիարքի Ասորոց** ժամանակագրութիւն, յերուսաղէմ, 1870, էջ 600, հմմտ. ժամանակագրութիւն **Տեառն Միխայէլի Ասորոց պատրիարքի**, յերուսաղէմ, 1871, հավելված, էջ 33): Միքայել Ասորու երկի ասորերեն բնագիրն այդպիսի վկայություն չունի: Տես բնագրից կատարված ֆրանսերեն թարգմանությունը՝ Chronique de Michael le Syrien, Traduite en francais par J.-B. Shabot, Tom III, Paris, 1905, p. 517.

58 Տես **Շ. Սկրտչյան**, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 34, **Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան**, նշվ. աշխ., էջ 7, Ս. Այվազյան, նշվ. աշխ., էջ 6 և այլն:

59 Դիվան, պրակ V, էջ 201:

60 Դամբարանի մասին Ս. Այվազյանը գրում է. «Հայտնաբերվել է դամբարանախուց, որը Դաղի վանքի պահպանված կառույցներից հնագույնն է: Վերջինս կառուցվել է հատուկ տվյալ թաղման համար (հավանաբար սա է Սբ. Դաղի ավանդազրույցի և ...1224 թ. արձանագրության մեջ հիշվող Դաղի գերեզմանի գոյության սկզբնաղբյուրը)» (Ս. Այվազյան, նշվ. աշխ., էջ 73):

61 **Մովսես Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից, Երևան, 1982, էջ 340:

62 Մատենագիրք Հայոց, հ. Ի, **Մխիթար Գոչ**, գիրք Բ, Երևան, 2014, էջ 608, տես նաև **Բ. Ուլուբաբեան**, հաչենի իշխանությունը, էջ 117:

63 Դիվան, պրակ V, էջ 197, 216: Բնակավայրի անունն առաջին անգամ հիշվում է Դաղիվանքի 14-րդ դարի սկզբների մի նվիրատվական արձանագրության մեջ «Խուղ» ձևով, որպես վանքին նվիրաբերված գյուղ (Դիվան, պրակ V, էջ 203): Խուղը բավական մեծ գյուղ է եղել, որտեղից 300 ընտանիք 18-րդ դարի վերջերին տեղափոխվել է Երևանի նահանգի Ենգիշա գյուղը (տես **Ս. Բարխուդարե-**

անց, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երևան, 1999, էջ 265, Շ. Սկրտչյան, նշվ. աշխ., էջ 39):

64 Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ, Երևան, 2017, էջ 73:

65 **Մեսրոպ Մագիստրոս Տեր Մովսիսեան**, նշվ. աշխ., էջ 84:

66 **Բ. Ուլուբաբեան, Մ. Հասրաթեան**, Դաղիվանք, էջ 9:

67 **Ս. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 13-18:

68 Դիվան, պրակ V, էջ 210: Վանահոր անունը հիշվում է մահ «Գրիգորես» ձևով: Նրա հայր Վասակը սպանվել է Սյունիքի Գուլաշոյան բերդը սելջուկներից ազատագրելիս՝ 1201 թ. (**Բ. Ուլուբաբեան**, նշվ. աշխ., էջ 147):

69 **Ս. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 22:

70 Դիվան, պրակ V, էջ 198-199:

71 **Ստ. Մնացականյան**, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում, Երևան, 1976, էջ 111:

72 Նույն տեղում, էջ 115:

73 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 215:

74 Նույն տեղում, էջ 216:

75 Որմնանկարի հանգամանակից ուսումնասիրությունը տես **Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Ա. Ջարյան, Զ. Լամուրե**, Դաղիվանք. վերածնված հրաշալիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն), Երևան, 2018:

76 Դաղիվանքի որմնանկարի ստեղծման 1297 թվականն առաջին անգամ ընթերցել և հրատարակել է Սամվել Կարապետյանը (**Ս. Կարապետյան**, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999, էջ 114), սակայն արձանագրությունն ամբողջովին վերականգնվել է որմնանկարի վերականգնումից հետո (**Զ. Լամուրե, Ա. Ջարյան**):

77 **Սկրտիչ վրդ. Ազերեան**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Թ, Վենետիկ, 1813, էջ 315:

78 **Տեառն Ներսեսի Շողրիալոյ** Բանք չափաւ, Վենետիկ, 1830, էջ 455:

79 **Պ. Дурново**, Очерки изобразительного искусства средневековой Армении, Ереван, 1979, с. 54.

80 Այս մասին հանգամանորեն տես **Կ. Մաթևոսյան, Ա. Ավետիսյան, Ա. Ջարյան, Զ. Լամուրե**, նշվ. աշխ., էջ 34-40:

- 81 Մանր ժամանակագրություններ, կազմեց՝ **Վ. Հակոբյան**, հ. Բ, Երևան, 1956, էջ 244-245:
- 82 Մանր ժամանակագրություններ, հ. Բ, էջ 237:
- 83 **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղէմ, 1974, էջ 282:
- 84 Դիվան հայ վիճագրության, Գեղարքունիք, Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, պրակ IV, կազմ.՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1973, էջ 369, **Ս. Սմբատեանց**, Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազէտ գաւառ, Վաղարշապատ, 1896, էջ 628:
- 85 Դիվան, պրակ IV, էջ 371:
- 86 **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը..., էջ 403:
- 87 **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, Երևան, 1990, էջ 456-466:
- 88 **Յ. Ոսկեան**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 110:
- 89 **Ս. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 211:
- 90 **Ս. Բարխուդարեանց**, Աղվանից երկիր և դրացիք, էջ 220:
- 91 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1955, էջ 122:
- 92 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1958, էջ 66:
- 93 **Յ. Ոսկեան**, նշվ. աշխ., էջ 162:
- 94 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դ., հ. Գ, կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1984, էջ 261:







ԳԱՆՃԱՍԱՐԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Խաչենը՝ որպես Արցախի խոշոր գավառներից մեկը, մեծ դեր է ունեցել երկրամասի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում. պատահական չէ, որ ողջ երկրամասը հաճախ հենց Խաչեն է կոչվել: Խաչենի իշխանությունը 12-րդ դարի երկրորդ կեսից բաժանվեց երեք նոր ճյուղավորումների՝ Ներքին Խաչեն, Կենտրոնական Խաչեն կամ Հաթերք, Վերին Խաչեն կամ Ծար՝ համապատասխանաբար Խոխանաբերդ, Հաթերք, Հանդաբերդ իշխանանիստ կենտրոններով:

Գանձասարի վանքը, որին վիճակված էր հետագայում կարևորագույն դեր կատարել Արցախի եկեղեցական և մշակութային կյանքում, սկզբնապես Ներքին Խաչենի հոգևոր կենտրոնն էր: Վանքն անունը ստացել է հանդիպակաց լեռան անունից, որ Գանձասար է կոչվել արծաթի, պղնձի և այլ հանքեր ունենալու պատճառով: 9-10-րդ դարերում Գանձասարի հիմնավորը եկեղեցին քաղաքական և կրոնական հավաքատեղի էր Արցախի և շրջակա գավառների համար:

Գանձասարի մասին առաջին գրավոր տեղեկությունը հայտնում է Անանիա Ա Մոկացի (946-968) կաթողիկոսը: 949 թ. հայ-քաղկեդոնական վեճերը հարթելու նպատակով նա այստեղ է գալիս, և Գանձասարում նրան դիմավորում է Խաչենի գահերեց իշխան Գրիգորը: Անանիա Մոկացի կաթողիկոսը ժողով է հրավիրում Ուտիքի և Արցախի հոգևոր ու աշխարհիկ տերերի մասնակցությամբ, որոնց մեջ էր նաև Գանձասարի հայր Սարգիս վանականը⁹⁵: Հաջորդ տեղեկությունը հաղորդում է Մխիթար Գոշը, ըստ որի՝ 1140 թ. սելջուկների դեմ պատերազմում զոհված Գրիգոր իշխանի աճյունը բերվել ու թաղվել է Գանձասարում, որը Խաչենի իշխանների տոհմական տապանատունն էր⁹⁶: Եկեղեցու բակում պահպանված՝ 1174, 1181, 1202 թվագրությամբ խաչքարերը, որ կանգնեցվել են Հասան Մեծի և նրա որդի Վախթանգ-Տանգիկի կողմից, նույնպես վկայում են Գանձասարում ավելի վաղ գոյություն ունեցած վանական կյանքի մասին⁹⁷:

1216-1238 թթ. Ներքին Խաչենի տեր՝ իշխանաց իշխան Հասան Ջալալ Դուլան, իր հոր՝ իշխան Վախթանգ-Տանգիկի կտակի համաձայն՝ Գանձասարում կառուցել է տալիս մի շքեղ եկեղեցի (*նկար* 55): Ըստ ավանդության, նա մեծ դժվարությամբ բերել և Գանձասարում էր ամփոփել Հովհաննես Սկրտչի գլուխը: Այս մասին պատմվում է Մովսես Կաղանկատվացու (7-րդ դ.) և Մովսես Դափսուրանցու (10-րդ դ.) «Պատմություն Աղվանից աշխարհի» պատմագրքում՝ որպես շարունակություն կցված «Վասն պատուական գլխոյն Յովհաննու Սկրտչին, թէ որպէս բերաւ ի գաւառն Արցախ եւ եղաւ ի սուրբ

Գանձասար, որ է արժու Աղուանից» հավելվածում: Այդ պատմության վերջում ասվում է, որ տարբեր մարդկանց մոտ հայտնված մասունքը մի բրուտից վերցնում է Արցախի տեր Ջալալ Դուլայի եղբայրը: Ջալալ Դուլան եղբորից խնդրում է մասունքը, բայց մերժվելով՝ բռնությամբ է վերցնում ու բերում իր նախնիների հանգստարանը, այդտեղ ամփոփում և վրան կառուցում է Գանձասարի Սուրբ Հովհաննես եկեղեցին⁹⁸: Իսկ «Վարք արքոց» ժողովածուի մի օրինակում (1695 թ. Դրին) ասվում է, թե մասունքը եղել է Կոստանդնուպոլսում, որտեղից՝ «ազգն Ֆռանգաց կամէին խըլել եւ տանել ի Ֆռանգիստան. եւ իշխանն առեալ փախուց ի Վրաստան: Իսկ ի վերջին ժամանակն, Ջալալ Դուլլանն իսկեց եղբորէն իւրմէ եւ բերեալ ի Գանձակայ կողմն՝ ի Խաչէն, Գանձասար անուն, հռչակաւոր վանք շինեաց եւ անուանեաց Գանձասար»⁹⁹: Համաձայն շինարարական արձանագրության՝ եկեղեցու օծումը մեծ հանդիսավորությամբ տեղի է ունեցել 1240 թվականի հուլիսի 22-ին՝ Վարդավառի տոնի օրը¹⁰⁰:

Հասան-Ջալալ Դուլան ընդունել էր այդ ժամանակ Հայաստանը նվաճած մոնղոլների գերիշխանությունը, ուստիև կարողացել էր պահպանել իր կալվածքները: Հասան-Ջալալյանների իշխանանիստ ամրոցներն էին Խոխանաբերդը (Թարխանաբերդ) և Կաչաղակաբերդը: Իշխան Հասան-Ջալալ Դուլան կառուցել ու ծաղկեցրել է ոչ միայն Գանձասարի, այլև՝ Մեծառանից Սբ. Հակոբա, Վաճառ գյուղի Սբ. Ստեփանոս, Վաղուհասի, Մայրաքաղաք և Կոճղոտ գյուղերի վանքերն՝ իրենց գավիթներով ու կացարաններով:

Պատմիչ Կիրակոս Գանձակեցին, հիացմունքով պատմելով Գանձասարի եկեղեցու կառուցման մասին, գրում է, որ Հասան Ջալալը «շինեաց եկեղեցի մի գեղեցկազարդ յօրինուածով գմբեթարդ երկնանման տաճար փառացն Աստուծոյ, ուր հանապազ պատարագի Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի, ի վանքն, որ կոչի Գանձասար, հանդէպ Խօխանաբերդոյ, ի տեղի շիրմի իւրեանց»¹⁰¹ (*Ակար* 56): Պատմիչը նաև նշում է, որ եկեղեցու օծմանը ներկա էին Աղվանից Ներսես կաթողիկոսը, բազմաթիվ եպիսկոպոսներ ու իշխաններ, նշանավոր Վանական վարդապետը՝ բազմաթիվ ուսուցիչներով, շատ վանքերի առաջնորդներ, Խաչենի Գրիգորիս և Եղիա վարդապետները և 700 քահանա¹⁰²:

Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին ուղղանկյուն, ներքուստ՝ խաչածև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, գմբեթավոր կառույց է: Բարձրաքանդակների գեղարվեստական հարուստ հարդարանքով ու լուծումներով, զարդամոտիվների բազմազանությամբ այս եկեղեցին մարմնավորում է 13-րդ դարի հայ արվեստի լավագույն նվաճումները: Ինչպես նշում է ճարտարապետության դոկտոր Մուրադ Հասրաթյանը. «Գանձասարի եկեղեցու արտաքին կերպարը, նրա ծավալատարածական լուծումը և, առաջին հերթին, հարդարանքը, ակնհայտ ցույց են տալիս ճարտարապետի ձգտումը շենքին տալու առավել կոթողային և վեհ տեսք, որը պետք է մարմնավորեր Խաչենի իշխանության հզորությունը և նրա տեր Հասան Ջալալի բարձր դիրքն ու հեղինակությունը ողջ Հայաստանում» (*Ակար* 57)¹⁰³:

Արևելագետ Անատոլի Յակոբսոնի կարծիքով՝ Գանձասարի եկեղեցին ոչ միայն «ինքնատիպ է և իր կատարելության մեջ՝ ինքնուրույն, այլև բացառիկ է, մենք չենք կարող ցույց տալ ուրիշ մի այսպիսի հուշարձան Հայաստանի հողի վրա»¹⁰⁴: Իսկ հայտնի բյուզանդագետ Շարլ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից երրորդը համարում է Գանձասարը՝ Աղթամարի և Հռիփսիմեի, Հաղբատի և Անիի մայր տաճարների շարքում¹⁰⁵:







57



58

Եկեղեցու ընդարձակ շինարարական արձանագրության մեջ, որտեղ կառուցողն իր մասին ասում է՝ «Ես՝ նուստ ծառայ Աստուծոյ, Չալալ Դաւլայ Հասան, բնակատր ինքնակալ բարձր եւ մեծ Արցախական աշխարհի», նշված է երեք թվական՝ շինարարության սկզբի՝ 1216 («գոր սկսեալ մեր»), ավարտի՝ 1238 («աւարտումն եղեւ») և օծման՝ 1240 («արինեցաւ եկեղեցիս»)՝¹⁰⁶։ Ընդհանրապես, Գանձասարի շինարարական արձանագրությունը, որը բաղկացած է 27 տողից, մի ուշագրավ վավերագիր է (*նկար 58*), որտեղ եկեղեցու կառուցման, նրան տրված նվիրատվությունների մասին նշումից բացի, հիշատակվում են մի շարք հարակից հետաքրքրական փաստեր (դրանց մի մասին կանդրադառնանք ստորև)։

Եկեղեցու արևմտյան կողմում ընդարձակ գավիթն է (*նկար 59*), որն ըստ արձանագրության՝ 1261 թ. կառուցել են Հասան-Չալալ Դոլան, իշխանուհի Մամքանը և նրանց որդին՝ Աբաբակը, որը նաև վանքին է ընծայել մի ոսկեկազմ Ավետարան¹⁰⁷։







60

Գավիթն ունի լայնաթռիչք փոխհատվող կամարներով ծածկ, հարդարանքով աչքի է ընկնում արևմտյան շքամուտքը (նկար 60): Գավիթը նաև դարձել է Հասան-Ջալալյանների տոհմական տապանատունը, որտեղ երկար ժամանակ հուղարկավորվել են այդ տոհմի հոգևոր ու աշխարհական ներկայացուցիչները:

Համալիրի բակում են ամփոփված նաև վանքի առաջնորդների ու գիտնական վարդապետների և այլոց աճյունները: Վանական համալիրն ամբողջացնում են եռադարպաս պարիսպը, միաբանների խցերն ու օժանդակ շինությունները:

12-13-րդ դարերում Գանձասարը եղել է եպիսկոպոսանիստ, այստեղ հիշվում են Սարգիս և Վարդան եպիսկոպոսները¹⁰⁸: Հետագա դարերում վանքի առաջնորդներ են եղել Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթեոս վարդապետը, Հովհաննես, Եղիա, Ներսես վարդապետները, Դուկաս Լոռեցին, Ստեփանոս վարդապետ Շիրակունին

55. Գանձասարի վանքը հարավից (լուսանկարը՝ Զրայր Բազեի, 2017 թ.)
56. Գանձասարի Ս. Զովհաննես Սկրտիչ եկեղեցին (1238 թ.) և գավիթը (1261 թ.) հյուսիս-արևելքից (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2016 թ.)
57. Գանձասարի եկեղեցին և գավիթը հարավից (լուսանկարը՝ Կարեն Մաթևոսյանի, 2017 թ.)
58. Շինարարական արձանագրության հատված (1240 թ.) (լուսանկարը՝ Զրայր Բազեի, 2017 թ.)
59. Համալիրը գավթի կողմից (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2016 թ.)
60. Գավթի շքամուտքը (լուսանկարը՝ Զրայր Բազեի, 2017 թ.)

և ուրիշներ: 14-րդ դարում վանքը դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը, որտեղ ժառանգաբար աթոռակալել են Հասան-Ջալալյանները:

Գանձասարը եղել է հայ գրչության արվեստի նշանավոր կենտրոններից մեկը: Տեղի դպրոցի գիտնական վարդապետների, գրիչների, ծաղկողների, ստացողների, կազմողների, նորոգողների վերաբերյալ տեղեկություններ ենք ստանում եկեղեցու որմներին ու խաչքարերի վրա պահպանված վիմագիր արձանագրություններից և ձեռագիր հիշատակարաններից: Վանքն ուներ իր մատենադարանը և ձեռագրերի հարուստ հավաքածուն: Այստեղ գրվել, նկարագրվել, ինչպես նաև պահպանվել են բազմաթիվ արժեքավոր ձեռագրեր: Ցավոք, այդ գրչագիր մատյանների շատ քիչ մասն է հասել մեզ: Դեռևս Հասան-Ջալալ Դոլան Գանձասարի եկեղեցու շինարարական արձանագրության մեջ նշում է, որ վանքին է նվիրել խաչեր, մասունքներ, գանազան սպասք, նաև՝ գրքեր¹⁰⁹: Հայտնի է, որ Գանձասարի վանքում արձայնառակ եղանակով առաջնորդների մեջ պահվել են նաև Հովհաննես Սկրտչից, Հակոբոս առաքյալից, Ջաքարիա մարգարեից, Պանդալեոնից, Գրիգորիս Ա կաթողիկոսից մասունքներ ու նշխարներ¹¹⁰:

Գանձասարի (Աղվանից) կաթողիկոսությունը լուծարվել է 1815 թ., երբ տարածքը Ռուսական կայսրության կազմում էր, և տեղի առաջնորդներին տրվել է մետրոպոլիտի կարգավիճակ: Այս տոհմի իշխանների հովանավորությամբ էլ հռչակավոր վանքը երկար դարեր եղել է ոչ միայն եկեղեցական-վարչական, այլ նաև՝ մշակութային կենտրոն:

Եկեղեցաշինարարների քանդակները Ս. Հովհաննես Սկրտչի եկեղեցում

Հայ արվեստի պատմության մեջ Գանձասարի եկեղեցին նշանավոր է հատկապես արտաքին հարուստ հարդարանքի շնորհիվ, որի մեջ առանձնանում են հատկապես եկեղեցաշինարարների (կտիտորների) քանդակները: Բնութագրական են դրանց առաջին հետազոտողներից մեկի՝ ճարտարապետության դոկտոր Ստեփան Մնացականյանի խոսքերը. «Գանձասարի դիմաքանդակները մի նոր էջ են բացում միջնադարյան Հայաստանի քանդակագործության պատմության մեջ և պետք է դասվեն հայ արվեստի առավել ուշագրավ հուշարձանների շարքին»¹¹¹:

Գանձասարի եկեղեցու առավել հարուստ քանդակագործ հատվածը գմբեթի 16 նիստ ունեցող թմբուկն է: Այստեղ քանդակներ կան նիստերի և դրանց եռանկյունաձև վերջավորությունների՝ ճակտոնների վրա: Գմբեթի պատկերագրական շարքի կենտրոնը արևմտյան ճակատային մասն է, որտեղ նիստի վրա Աղամի և Եվայի դիմահայաց պատկերն է, որից վեր՝ Քրիստոսը՝ օրհնող աջով: Դրանից դեպի աջ և ձախ գտնվող նիստերին տեղ են գտել ծալապատիկ նստած, եկեղեցու մանրակերտերն իրենց գլխից վեր պահած, բեղ մորուքով՝ մեկական տղամարդկանց որմնաքանդակներ (*նկար 61*): Ապա շարքը շարունակվում է և դեպի հարավ, որտեղ հաջորդական նիստերի պատկերաքանդակները ներկայացնում են ծնկաչոք, ձեռքերն աղոթողի դիրքում պարզած կանանց, որոնցից վեր՝ արծվակերպ հրեշտակներ են:

Հարդարանքի բովանդակության ճիշտ ընկալմանը և պատկերվածների ով լինելու հարցի պարզաբանմանը նպաստում է շինարարական արձանագրությունը, որ-

տեղ Հասան Ջալալից և իր տիկին Մամքանից բացի՝ մեծ տեղ է հատկացված իշխանի ծնողներին՝ Վախտանգ Տանգիկին և Խորիշահին: Առաջինը Արցախի տոհմիկ իշխան էր, իսկ նրա կինը՝ Խորիշահը, Սարգիս Չաքարյանի դուստրն էր, 13-րդ դ. սկզբներին հյուսիսային Հայաստանի փաստական տերերի՝ Չաքարե և Իվանե Չաքարյանների, նաև Ծարի իշխանուհի Դոփի քույրը: Վիմագրում ասվում է, որ Խորիշահը երեք անգամ ուխտի է գնացել Երուսաղեմ և այնտեղ էլ մահացել ու հուղարկավորվել է: Հասան Ջալալի անունից ասվում է. «Մայրն իմ կրաւնաւորեալ չոգաւ յԵրուսաղեմ երրորդ անգամ եւ անդէն ի դրան Յարութեան խարազանազգեաց ճգնութեամբ, բազմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսոյ վկայութեամբ եւ անդէն պահեցաւ»¹¹²:

Ուշագրավ է, որ վիմագրում նշվում է նաև եկեղեցու հարուստ հարդարանքի մասին. կառուցողն ասում է, որ այն հարդարվել է իր ցանկությամբ՝ գոտևորված պատկերազարդ հորինվածքներով («փոյթ գործոյ արարեալ աւարտումն եղեւ շնորհաւք ողորմութեամբ ամենազօք Տեառն :ՈՉԷ: (1238) թվի՝ գաւտեւորեալ ամենազան ձեւով, պատկերազան, յարինակերտ, գմբեթարդ յարինուածաւք, յաւժարութեամբ կամաց մերոց, որպէս տեսանէ Աստուած»)՝¹¹³: Ինչպես ստորև կտեսնենք, քանդակները նաև խորքային իմաստ են կրում, որի համար նաև աստվածաբանական գիտելիքներ էին հարկավոր, և հավանաբար իշխանն այս հարցում գիտակ խորհրդատու է ունեցել: Սակայն թերևս ինքն էլ այդ ոլորտից հեռու չի եղել, ինչպես երևում է նրա մասին հիշատակարաններից մեկում եղած բնորոշումից՝ «քաջի եւ իմաստնոյ աստուածակրողի Ջալալին»¹¹⁴:

Գմբեթի կտիտորական քանդակների առաջին հետազոտողներից Ստեփան Մնացականյանը, կարծում ենք, միանգամայն ճիշտ է ներկայացրել պատկերվածներին: Ըստ նրա՝ Հասան Ջալալն է պատկերված այն խորշի մեջ, «որտեղ ներկայացված մողեղի ծավալային ձևերը լիովին համապատասխանում են այս նույն եկեղեցու ձևերին» (նկար 62), իսկ դրանից ձախ գտնվող մյուս տղամարդու պատկերը, որը ձեռքին բոլորածն եկեղեցու մանրակերտ ունի, Հասան Ջալալի հայրն է, քանի որ այդ մասին է հուշում շինարարական արձանագրությունը¹¹⁵:

Տղամարդկանց այս միանման կերպարների նախատիպերի ինքնության բացահայտման վերաբերյալ գրականության մեջ ևս երկու տեսակետ է շրջանառվել, առաջինն Ալեքսեյ Յակոբսոնի կարծիքն է, ըստ որի՝ նրանք Հասան Ջալալն ու նրա որդին են¹¹⁶: Իսկ Բագրատ Ուլուբաբյանը ենթադրում է, որ երկու պատկերն էլ ներկայացնում են նույն մարդուն՝ Հասան Ջալալին, միայն թե նա մի քանդակում ձեռքերին Գանձասարի եկեղեցու մանրակերտն է պահում, մյուսում՝ իր կառուցած Վաճառի եկեղեցու (որը չի պահպանվել)¹¹⁷: Այս ենթադրությունները համոզիչ չեն. առաջինի դեպքում, քանի որ Հասան Ջալալի որդի Աթաբեկն այդ ժամանակ թերևս դեռ չէր ծնվել (նրա անունը չկա շինարարական արձանագրության մեջ), իսկ երկրորդ ենթադրությունը հավանական չի թվում, երբ նկատի ենք ունենում կտիտորական պատկերաշարն իր ամբողջության մեջ: Բանն այն է, որ ինչպես ստորև կտեսնենք, շարքի հաջորդ՝ կանանց պատկերներում, ներկայացված են Հասան Ջալալի մայրը՝ Խորիշահը և կինը՝ Մամքանը (այս հարցում ուսումնասիրողները միակարծիք են): Անհավանական է, որ Հասան Ջալալը, մոր և կնոջ պատկերները քանդակել տալով, անտեսեր հորը՝ Վախտանգին, այն դեպքում, երբ արձանագրության սկզբում ասում է, որ նրա պատգամով է սկսել եկեղեցու կառուցումը, իսկ վիմագրի վերջում, երբ



61




62

61. Եկեղեցու գմբեթը արևմուտքից
(*Նուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.*)

62. Հասան Ջալալը եկեղեցու մանրա-
կերտով (*Նուսանկարը՝ Հրայր
Բազեի, 2017 թ.*)

63. Վախտանգ Տանգիլը եկեղեցու ման-
րակերտով (*Նուսանկարը՝ Հրայր
Բազեի, 2017 թ.*)

թվարկվում են եկեղեցաշինության երախտավորների որոնց համար պետք է համապատասխան թվով պատարագներ մատուցվեն, Հասան Ջալալից հետո առաջինը նշվում է հենց նրա հայրը, հետո՝ մայրը¹¹⁸: Այսպիսով, համոզված ենք, որ Ստ. Մնացականյանի վերագրումը ճիշտ է, Գանձասարի կտիտորական քանդակաշարում երկու տղամարդիկ Հասան Ջալալն ու նրա հայր Վախտանգն են: Ինչ վերաբերում է վերջինիս ձեռքում եղած մանրակերտին, ապա այն կարող է լինել եկեղեցու ինչպես իրական, այնպես էլ խորհրդանշական պատկեր (*նկար 63*):








64

Վկայաբերենք Ստ. Մնացականյանի ևս մի դիտարկում. «Գանձասարի կոմպոզիցիայի հատկանշական կողմերից մեկը, երբ կտիտորը մոդելը պահել է իր գլխի վերևում, նույնպես եզակի երևույթ է: Թվում է, թե այստեղ ավարտվում է մոդելների տեղադրման զարգացումը, սկսած VII դարից՝ նրանք ավելի ու ավելի բարձր դիրք են գրավում ամբողջ հորինվածքում: Այսպես, Աթենիում կտիտորը մոդելը պահում է առջևում, Աղթամարում, Հաղբատում այն բարձրացել է մինչև կուրծքը, իսկ Գազկաշենում, թեև կտիտորի ձեռքերը մնում են նույն դրությամբ, բայց մոդելի վերին եզրը շատ ավելի բարձր է արքայի գլխից, և ակնհայտ է նրա նշանակությունն առանձնակի շեշտելու ձգտումը: Իսկ Գանձասարում արդեն մոդելն ամբողջությամբ վեր է բարձրացվել և տեղադրվել կտիտորի գլխավերևում»¹¹⁹:

Ինչպես նշեցինք, գմբեթի պատկերագրական շարքն արևմուտքից դեպի հարավ շարունակվում է հաջորդական նիստերին՝ ձեռքերն աղոթողի դիրքով, միմյանց ուղղությամբ ծնկած կանանց որմնաքանդակներով (*նկար 64*):

Կարելի է ենթադրել, որ անմիջապես Հասան Ջալալի քանդակին հաջորդող պատկերը պատկանում է նրա կնոջը՝ Մամբանին, որի քանդակում, ի դեպ, շատ հստակ ընդգծված են աչքերը՝ ի տարբերություն շարքի մյուս քանդակների:

Գմբեթի թմբուկի կտիտորական քանդակաշարքը եզրափակում է իշխանի մայրը՝ Խորիշահը: Այսպիսով, ընդհանուր շարքը հետևյալ տեսքն ունի՝ Վախտանգ,



65

64. Խորիշահի և Մամբանի քանդակները՝ արժակերպ հրեշտակների հետ (լուսանկարը՝ Յրայր Բազի, 2017 թ.)

65. Աղամ և Եվա (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2017 թ.)

Հասան Ջալալ, Մամբան, Խորիշահ: Այս համատեքստում, կարծում ենք, որ պատահական չէ գմբեթի այս մասում Ադամի և Եվայի քանդակի առկայությունը, որը թերևս մի հիշեցում է դրախտի մասին, թեկուզ և՛ կորուսյալ դրախտի, սակայն ամուսնական երկու զույգերի քանդակների ներկայությամբ այն կարող է նաև ընկալվել որպես ընտանիքի խորհրդանիշ (առաջին ընտանիք): Պատահական չէ, որ նախաստեղծների պատկերից անմիջապես վեր եղած զարդաքանդակում պատկերված են կտուցկոցի տված զույգ թռչուններ, իսկ ավելի վեր՝ ճակտոնի վրա՝ օրհնող Քրիստոսը (*նկար 65*):

Այժմ անդրադառնանք կանանց քանդակների վերին մասում պատկերված հրեշտակներին: Գանձասարի քանդակներին վերաբերող գրականության մեջ դրանք երբեմն կոչվում են հուշկապարիկ¹²⁰, սակայն իրականում արծվի մարմնով հրեշտակներ են: Հուշկապարիկները լինում են մարդու (սովորաբար կնոջ) գլխով՝ թռչնի մարմնով, բայց չեն պատկերվում դիմահայաց և թևաբաց արծվի կերպարանքով: Դրանք առավել հաճախ հանդես են գալիս որպես դեկորատիվ պատկերներ և մարդկային կերպարներից առանձին (առավել ևս հուշակապարիկը չէր կարող ներկայացվել մարդու նկատմամբ գերիշխող դիրքով, ինչը տեսնում ենք Գանձասարում): Բազրատ Ուլուբաբյանի մեկնաբանությամբ՝ Գանձասարի նշված քանդակները «ներկայացնում են մեկական թևաբաց արծիվ՝ մարդկային գլխով և ցայտուն լուսապսակով, անկասկած՝ հրեշտակներ են, և չեն կարող լինել բվահավիկներ կամ հուշկապարիկներ, ինչպես կարծում է Ա. Լ. Յակոբսոնը»¹²¹:

Այն, որ պատկերվածները հրեշտակներ են, վկայում է նաև նրանց աչքերի հավասարությամբ երկու կողմից երևացող գլխակապը (դիադեմա), որի կապաթելերը նշանակում են, որ հրեշտակները հարատև ունենդրում են Աստծուն (*նկար 66*):

Մեր կարծիքով՝ Գանձասարի այս քանդակներում յուրովի բացահայտված է հայ միջնադարյան քանդակագործության մեջ բավական լայն տարածում գտած «Ճանկող արծվի» պատկերագրությունը, որը փրկագործական խորհրդանիշ է: Այդ քանդակներում, որոնք բազմաթիվ են ինչպես եկեղեցիների պատերին, այնպես էլ՝ ուշ միջնադարյան տապանաքարերի վրա, արծիվը կերպարանափոխված հրեշտակն է, իսկ որսը (հիմնականում՝ գառան տեսքով)՝ հոգու փրկություն ակնկալողը¹²²: Գանձասարի քանդակագործը հեռացել է պայմանականություններից և ազնվագարն կանանց գլխավերևում պատկերել արծիվ-հրեշտակներին՝ որպես նրանց հոգու փրկության երաշխավորներ: Այս մասին անդրադարձներ կան միջնադարյան մեկնողական գրականության մեջ, բայց այն անցել է նաև համեմատաբար ուշ շրջանի հայրեններին, որոնցից մեկում ասվում է.

«Հրեշտակնին արծիւ դարձեր,
Տէ՛ր, Տէ՛ր, Տէ՛ր,
Կու տանին մեզ մէկ-մէկ ի վեր»¹²³:

Այս տողերը կարծես Գանձասարի կանանց քանդակների մեկնաբանությունը լինեն:

Հետաքրքիր է, որ հոգու փրկության գաղափարը յուրովի արտահայտված է նաև սույն պատկերներից վեր գտնվող ճակտոնների քանդակներում: Դրանցից աջակողմյանը ներկայացնում է Աստվածամորը՝ Մանկան հետ, որն արտահայտում է Քրիստոսի ծնունդը, իսկ ձախակողմյանը, ինչպես իրավացիորեն նկատել են Ջարուհի Հակոբյանն ու Թագուհի Ավետիսյանը, պատկերում է Քրիստոսին՝ գրկում բարություն երեխա: Այս պատկերագրությունը հատուկ է Աստվածամոր վերափոխման (Աստվա-



66

ծամոր մինչը) տեսարանին, որտեղ Քրիստոսի ձեռքում գտնվող բարուրով երեխան խորհրդանշում է Մարիամ Աստվածածնի հոգին, որը Նա երկինք է տանում¹²⁴: Ակամա ծագում է այն միտքը, որ ավետարանական իրողությունների՝ «որդու և մոր» փոխհարաբերման այս կերպը զուգորդվում է Գանձասարի եկեղեցաշինարար Հասան Ջալալի և եկեղեցու կառուցման ընթացքում որպես ուխտավոր Երուսաղեմ մեկնած ու այնտեղ մահացած նրա մոր՝ Խորիշահի հետ. չէ՞ որ որդու ձեռամբ այդ եկեղեցու կառուցումը նաև նրա մոր հոգու փրկության համար էր:

66. Խորիշահը և արծվակերպ հրեշտակը (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2019 թ.)

67. Եկեղեցու արևմտյան ճակատի հարդարանքը (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)





Գանձասարի գմբեթի կոտորակային քանդակախմբից բացի, նշանակալից է եկեղեցու արևմտյան ճակատի հարդարանքը, որը մինչև այդ մասում գավթի կառուցումը (1261 թ.) երևացել է ամբողջական և վեհաշուք տեսքով (*նկար 67*): Եկեղեցու ճակատային մասում քանդակված է մեծադիր զարդարուն խաչ, կենտրոնական մասում՝ խաչյալ Քրիստոսը: Նրանից ներքև՝ խաչաթևերի տակ, պատկերված են ծնկած, դեմքերն արևմուտք դարձրած, թագաման գլխարկներով և երկրպագողի դիրքով երկու կերպար: Նրանց վերաբերյալ Բ. Ուլուբաբյանը գրում է. «Չի կարելի կասկածել, որ սրանք ևս վանքի շինարարության հովանավորների պատկերներն են՝ նման գմբեթի հովանավորական քանդակներին, թե՛ դեմքերով և թե՛ հագուստկապուստով»¹²⁵: Մեր կարծիքով՝ այս քանդակները որոշ չափով տարբերվում են գմբեթի թմբուկի քանդակներից, սակայն ներկայացնում են Հասան Ջալալին և Մամքանին: Ի տարբերություն գմբեթի վրա եղած նրանց քանդակների, որտեղ հանդես են գալիս առանձին ու մեկուսի, այստեղ նրանք տերունական տեսարանի՝ Խաչելության պատկերի մաս են, և, հավանաբար, այդ իսկ պատճառով նրանց կերպարներն ավելի ընդհանրացված ու տիպաժային են: Ի դեպ, հայ միջնադարյան քանդակագործության մեջ կա նաև այդպիսի նախադեպ. Աղթամարի Ս. Խաչում (921 թ.) Գագիկ Արծրունին որպես կոտոր՝ հասակով մեկ կանգնած և եկեղեցու մանրակերտը ձեռքին, քանդակված է եկեղեցու արևմտյան ճակատին՝ անհատական դիմագծերով և շքեղ հագուստով, իսկ երկրորդ անգամ՝ եկեղեցու արևելյան ճակատին՝ այսպես կոչված՝ «որթագալարի» գոտում՝ դրախտի այգում մտած, արդեն որպես ընդհանրացված կերպար, որն զգալիորեն տարբերվում է առաջինից¹²⁶:

Նշելի է, որ Գանձասարի քանդակագործը եկեղեցաշինարարներին Քրիստոսի պատկերագրական կերպին ներդաշնակ դարձնելու նպատակով, որը պատկերված է ուսերի վրա իջնող հյուսքերով, ներկայացրել է նույն ձևով՝ հյուսքերով: Քանդակներից երևում է, որ ձախ կողմինը՝ ավելի լայն դեմքով և նշմարվող մորուքով՝ տղամարդ է, իսկ աջ կողմինը՝ դեմքի ավելի նուրբ օվալով և համեմատաբար փոքր ձեռքերով՝ կին¹²⁷ (*նկար 68*):

Այն, որ Մամքանը մեծ դեր է ունեցել Խաչենի իշխանությունում, երևում է նաև այն բանից, որ նա ամուսնու՝ Հասան Ջալալի հետ է եղել դեպի Կարակորում՝ Մանգու խանի մոտ՝ տարիներ տևած ճամփորդության ժամանակ: Նա մի փոքր ավելի շուտ է հայրենիք եկել և մահացել է մինչև Հասան Ջալալի վերադարձը: Վերջինս տեղ հասնելով՝ հենց այդ ժամանակ գրած հիշատակարանում պատմում է, թե իր պայծառ տունն անմխիթար սգի ու արտասուքի մեջ գտավ, քանի որ մահացել էր Մամքանը՝ «զի նա էր ամենայն զարաց եւ հեծելոց, նաեւ եկեղեցոյ եւ քահանայից սփոփիչ եւ մխիթարութիւն»¹²⁸ (այս հիշատակարանի մասին կխոսենք նաև քիչ անց): Այսինքն՝ իշխանուհին տնակյաց մեկը չէր, այլ ամուսնու գործակիցը՝ անգամ գորքի ու հեծելագորի հետ կապված հարցերում, այնպես որ Գանձասարի վերոնշյալ քանդակում նրա կերպարի ներկայությունը միանգամայն հիմնավոր ենք համարում: Ավելացնենք, որ Մամքանը գավթի շինարարական արձանագրության մեջ կոչվում է «թռն Բաղաց թագաւորին»¹²⁹, այսինքն՝ Սյունյաց թագավորական տանից էր սերում: Գանձասարի եկեղեցին ու գավիթը հարդարանքի նաև այլ ուշագրավ մանրամասներ ունեն, և այս կառույցը, հիրավի, բացառիկ արժեք է ներկայացնում ոչ միայն հայ, այլև՝ համաշխարհային մշակութային ժառանգության տեսակետից:

68. Խաչելություն՝ եկեղեցաշինարարների քանդակներով (*լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.*)





Վախժանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարանը (ՄՄ 378)

Գանձասարի վանքում օրինակված մատյաններից մեզ են հասել 13-18-րդ դարերի մի շարք ձեռագրեր, որոնցից տասներկուսը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, մեկը՝ Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի գրատանը: Իսկ ժամանակին Գանձասարի մատենադարանում պահված ձեռագրերից մեզ են հասել շուրջ երեք տասնյակ մատյաններ:

Գանձասարի ձեռագրերի մասին խոսքը պետք է սկսել 13-րդ դ. սկզբներին Թորոս գրչի ընդօրինակած մագաղաթյա նկարազարդ Ավետարանից (ՄՄ 378), որն Արցախի ձեռագրական մշակույթի պատմության վաղ շրջանի առավել արժեքավոր մատյաններից է: Այն ստեղծվել է Գանձասարի հետ կապված՝ վերը նշված եկեղեցաշինարար ընտանիքի պատվերով՝ Հասան Ջալալի հոր և մոր՝ Վախտանգի և Խորիշահի հանձնարարությամբ, որի մասին է ձեռագրի գլխավոր հիշատակարանը. «Ես՝ Վախտանգ եւ զուգակից իմ Խորիշահ ցանկացող եղաք սրբոյ Աւետարանիս»: Մատյանը գրվել է «հրամանաւ եւ ծախիւք բարեսէր եւ աստուածա հաճոյ առն Վախտանգայ... եւ քրիստոսաւէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի»¹³⁰: Գրականության մեջ մատյանը հայտնի է «Վախժանգ Տանգիկի Ավետարան» անունով և արժանացել է բազմաթիվ ուսումնասիրողների՝ հատկապես մանրանկարչության հետազոտողների ուշադրությանը¹³¹: Քանի որ ձեռագրի բոլոր մեծ ու փոքր հիշատակարաններում որպես ձեռագրի պատվիրատուներ նշվում են Վախտանգն ու Խորիշահը (անգամ մի դեպքում առաջինը հիշվում է իշխանուհին)¹³², կարծում ենք՝ ավելի ճիշտ կլինի այն կոչել Վախժանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարան:

Գեղեցիկ ու վարժ է մատյանի բոլորագիծ երկաթագիր գրչությունը¹³³: Նկարազարդումը կատարել է գրիչը, որը մատյանի մի քանի էջերին (2ա, 3ա, 9բ 258բ) թողած հիշատակարաններում խնդրում է հիշել իրեն՝ «նուսատ գրչին ու նկարչին»:

Մատյանն ունի տասը խորան, կիսախորաններ, Մատթեոս, Մարկոս և Հովհաննես ավետարանիչների անվանաթերթերը, երկու ավետարանիչների դիմանկարներ, որոնք ուրվագծային են ու առանց գունազարդման (թերթ 6բ), բազմաթիվ գեղեցիկ զարդամոտիվներ, բուսական և կենդանական լուսանցազարդեր, սկզբնագրերը հանգուցազիր են, առաջին տողերը գրված են ոսկով:

Ավետարանն ունի նաև ձեռագրի գեղարվեստական հարդարանքից տարբերվող մեկ տերունական պատկեր. Աստվածամայրը գրկել է Մանկանը, աջ կողմում Գաբրիելը հրեշտակն է՝ թևերը բացած, իսկ ներքևում՝ երկու ավետարանիչները՝ կրծքներին սեղմած Սուրբ գիրքը (թերթ 5ա): Այս նկարը տարբերվում է Թորոսի նկարազարդումից, հետազոտողների կարծիքով՝ այն հետագայի լրացում է, որը, հավանաբար, կատարել է նկարչի աշակերտը:

Գլխավոր հիշատակարանը թվական չունի: Հիշատակարանում գրիչը նշում է, որ Խորիշահը կառուցել է մի եկեղեցի: Հայտնի է, որ Խորիշահը 1212 թ. վերակառուցել է տվել Մեծառանից Սբ. Հակոբ եկեղեցին¹³⁴, իսկ Վախժանգը մահացել է 1214 թ., ուստի մատյանի գրչությունը պետք է եղած լինի 1212-1214 թթ. միջակայքում: Ցավոք, հիշատակարանում չի նշվում նաև գրչության վայրը: Մասնագետները միակարծիք են, որ այն ստեղծվել ու նկարազարդվել է տեղում, այսինքն՝ պատվիրատու իշխանի

տիրություն, որպես հավանական վայր՝ կարող էր լինել Մեծառանից Ս. Հակոբը կամ Գանձասարը:

Շատ հետաքրքիր է, որ մատյանն ստացողներն այն ժառանգել են իրենց որդուն՝ Հասան Ջալալին, որն էլ այն ընծայել է Գանձասարի վանքին: Չեռագրի 8բ էջում Հասան-Ջալալ Դոլայի պատմական մեծ արժեք ներկայացնող հիշատակարանն է, որտեղ պատմվում է հետևյալը.

1261 թ. Հասան Ջալալը տիկնոջ՝ Մամքանի և որդու՝ Աթաբեկի հետ վերադարձել է մոնղոլական Մանգու խանի արքունիք կատարած՝ 5 տարի տևած դժվարին ուղևորությունից, ընտանիքն Արցախ ուղարկել, իսկ ինքը մնացել Թավրիզում: Որոշ ժամանակ անց տուն հասնելով՝ կնոջը գտել է արդեն վախճանված: Այս մասին նա գրում է սույն ձեռագրի հիշատակարանում. «Ես՝ Հասան Ջալալ Դալայ... գնացի յարեելս առ արքայն նետողաց եւ ի կողմն հիւսիսոյ տոհմիւ աղխատորն իմով անձամբս վասն խաղաղութեան եկեղեցոյ: Ես եւ ամուսին իմ Մամքան եւ տեառնատուր մանուկս իմ Աթաբակ չոգաք ընդ արեելս հիւսիսոյ, եւ ես ընդ եզր աշխարհի գնացի առ թագաւորն, որ Մանգու խանն: Եւ յամեալ զամս հինգ, դարձա ի տուն: Նոյնպէս Մամքան եւ Աթաբակն դարձան, եւ նոքա ժամանեալ ի տեղի իրեանց, եւ ես ի Թավրէժ յամեալ, յորում եւ աւրհասական մահ ի վերայ հասեալ փոխի Մամքանն ի Քրիստոս, եւ ես եկեալ գտի զպայծառ տուն իմ լի սգով եւ արտասուաք անմխիթարելի, զի նա էր ամենայն զարաց եւ հեծելոց, նաեւ եկեղեցոյ եւ քահանայից սփոփիչ եւ մխիթարութիւն»¹³⁵:

Հասան Ջալալը Ավետարանն ընծայել է Գանձասարին՝ ի հիշատակ Մամքանի. «Արդ, ի թվին Հայոց ՉԺ (1261) ետուն զսուրբ Աւետարանս ծաղկազարդ յիշատակ աստուածաւէր տիկնոջն Մամքանայ ի մեր Լուսաւորիչ սուրբ Աթոռն Աղուանից»¹³⁶:

Ավետարանը երկար ժամանակ պահվել է Գանձասարում: 16-րդ դարում վանքի կողոպուտի ժամանակ մատյանը գերվել է: 1589 թ. Մեհրաբ Բեկի որդի իշխան Ջալալը փրկագնել է գերված ձեռագիրը և նորից վանք վերադարձրել. «Արդ, ըստացայ սուրբ Աւետարանս ի գերութեան ես՝ Դալալ, որդի մեծին Մեհրապ պէկին... Առայ սուրբ Աւետարանս ի հալալ ինչից իմոց ի դառն եւ ի նեղ ժամանակս, որ դիրեցաւ աւսմանդուն ի տեղիս, որ կոչի Խաչէն... ի սուրբ ուխտիս Գանձասարայ» (ՄՄ 378, էջ 7ա):

Ավետարանի նկարագարողման մասին հարկ է նշել, որ այն կատարված է հայ մանրանկարչության ավանդական սկզբունքներին համապատասխան՝ Մեծ Հայքի այլ կենտրոններում կիրառվող պատկերագարողման համակարգերի սկզբունքներով: Ուշագրավ են Տերունական երկու դրվագները: Հովհաննեսի անվանաթերթի (259ա) գլխազարդի մեջ նկարիչը գետեղել է «Համբարձման» տեսարանը (*նկար 69*): Չորս հրեշտակներ երկինք են բարձրացնում փառքի պսակի (մանդոլայի) մեջ կանգնած Հիսուսին, Որը կրծքի մոտ պահել է Սուրբ Գիրքը: Մանրանկարի կերպարները և բովանդակ զարդային հնարանքներն ընդհանրություն ունեն Արցախ-Ուտիքի մշակութային միջավայրում ստեղծված ձեռագրերի հետ (ինչպես օրինակ՝ ՄՄ 316, 6306, 4820, 4023, 6319 ձեռագրերը):

Չեռագրի 5բ էջին նկարված է Մարիամ Աստվածածինը՝ մանուկ Հիսուսը գրկին, նրանից աջ՝ Գաբրիել հրեշտակն է, իսկ ցածում՝ երկու կանգնած ավետարանիչ՝ Սուրբ Գիրքը ձեռքերում պահած: Կերպարների մոտ գրված են նրանց անունները՝ «Մարիամ», «Գաբրիել», ավետարանիչների մոտ՝ «աւետարանիչքն»: Մանրանկարում չկան միջավայրն արտահայտող մանրամասներ: Ընդհանուր հորինվածքն աչ-



69

քի է ընկնում կոթողայնությամբ: Հատկապես տպավորիչ են կերպարների լայն բացված աչքերը (*նկար 70*):


Ինչ վերաբերում է ձեռագրի խորաններին և անվանաթերթերին, ապա դրանք ներկայացնում են զարդանկարչական հարուստ համակարգեր, երկրաչափական, բուսական ու կենդանական, հատկապես՝ թռչունների պատկերներով (*նկար 71*): Ընդհանուր առմամբ՝ Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարանը կարելի է համարել 13-րդ դարի սկզբներին ստեղծված հայկական առավել նշանավոր և հարուստ հարդարանքով մատյաններից մեկը, որը վկայում է Արցախում ձեռագրական և մանրանկարչական արվեստի զարգացման բարձր մակարդակի մասին:

69. Հովհաննեսի ավետարանի անվանաթերթը, Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարան (*ՄՄ 378, էջ 259ա*)

70. Աստվածածինը՝ Մանկան, Գաբրիել հրեշտակի և երկու ավետարանչի հետ, Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարան (*ՄՄ 378, 5բ*)



Մինչև Գանձասարի մյուս մատյաններին անդրադառնալը, հակիրճ նշենք ևս երկու մատյանի մասին, որոնք կապվում են Հասան Ջալալի ընտանիքի, մասնավորապես՝ թռան՝ Վախթանգի անվան հետ: Հասան-Ջալալի դուստր Մամա-Խաթունն ամուսնացել էր մոնղոլական տիրապետության շրջանում մեծ կարողության տեր, ծագումով՝ մանազկերտցի վաճառական Ումեկի հետ, որը մեծ հեղինակություն էր վայելում Վրաց արքունիքում¹³⁷: Թիֆլիսում 1251 թ. նա մեծ եկեղեցի է կառուցել (այժմ Վրաստանում հայոց թեմի առաջնորդանիստ Ս. Գևորգ եկեղեցին), միաժամանակ սերտ կապեր ուներ Արցախ Ուտիքի հետ: Նա մեծ գումարով գնել էր Գետիկի վանքն իր շրջակայքով: Ումեկի և Մամա-Խաթունի կրտսեր որդի Վախթանգը հոր մահից (1267 թ.) հետո պետք է ավելի սերտորեն կապված լիներ պապի՝ Հասան-Ջալալի տան հետ: Ըստ մի արձանագրության՝ մայր ու որդի Գանձասար են եկել ու վանքին նվիրատվություն կատարել 1280 թ.¹³⁸: Հայտնի է, որ տակավին պատանի՝ գրավել էր նշանավոր Հովհաննես Երզնկացի Պուլ վարդապետի ուշադրությունը: 1284 թվականին Թիֆլիսում վարդապետը երկնային մարմիններին նվիրված ճառով հանդես է եկել Ումեկի կառուցած եկեղեցում, որին ներկա գտնված Վախթանգը դիմել է վարդապետին՝ պատվիրելով գրել «Յաղագս երկնի եւ նորին շարժման» երկը¹³⁹:




Վախթանգի անվան հետ է կապվում ևս երկու ձեռագիր, որոնց հիշատակարաններում նա կոչվում է «մեծ պարոն»:

Ձեռագրերից մեկը մագաղաթյա փոքր չափերով (8,5x6 սմ) Ավետարան է, որը սկզբում ունի միայն Մատթեոս ավետարանչի պատկերը (էջ 1բ): Մատյանը 1279 թ. Վախթանգի պատվերով գրել է գրիչ Վարդանը (ՄՄ 5669):

Մյուս մատյանը Պողոս առաքյալի թղթերն են (ՄՄ 155): Ձեռագրի գրչության վայրն ու թվականն անհայտ են, Հրավարդ Հակոբյանի կարծիքով՝ ձեռագիրն Արցախ-Ուտիք-Սյունիք միջավայրի արդյունք է¹⁴⁰: Այս ձեռագրում հատկապես ուշադրության է արժանի բարձր թիկնաթռոին բազմաձև իշխանական զգեստով Վախթանգի դիմանկարը (էջ 106բ), որն ունի ազգագրական կարևոր արժեք (*նկար* 72): Հայտնի է, որ Վախթանգը մահացել է 1347 թ. Վայոց ձորում, նրա տապանաքարը գտնվում է Եղեգիսում¹⁴¹:

Ավելացնենք, որ Հասան-Ջալալի դուստրերից մեկն էլ ամուսնացել էր Կիլիկիայում, Կոստանդին թագավորահոր որդիներից մեկի՝ Հեթում Ա թագավորի եղբայր Օշինի հետ, որը Կոռիկոս ամրոցի տերն էր¹⁴²: Սրանց որդին էր նշանավոր Հեթում Պատմիչ Կոռիկոսցին:

Գանձասարի Կարմիր Ավետարանը և այլ ձեռագրեր



73

Գանձասարը ոչ միայն գրչության, այլև այլ վայրերում ստեղծված արժեքավոր ձեռագրերի պահպանության վայր էր: Այդ մատյաններից մեկը 13-րդ դարի սկզբներին հավանաբար Անիի շրջանում ստեղծված ինքնատիպ նկարազարդմամբ Կարմիր Ավետարանն է: Մակայն նախ անդրադառնանք բուն Գանձասարում գրված մատյաններին:

15-րդ դարում Գանձասարում գրչությամբ է զբաղվել վանքի առաջնորդ Մատթեոս վարդապետը, որը 1417 թ. Մանուել քահանայի համար տաղերի և ներբողների մի ժողովածու է ընդօրինակել (ՄՄ 8689): Գլխավոր հիշատակարանում, որտեղ գրիչը ձեռագրի գրչության վայրի մասին նշում է՝ «տեղիք գծագրութեան սորա եղև ի սուրբ ուխտս Գանձասարայ, յերկիրս Արցախական, որ այժմ կոչի Խաչեն» (*նկար* 73), նաև բավականին շատ տեղեկություններ է հաղորդում ժամանակի իրադարձությունների մասին¹⁴³:

Սկզբում Մատթեոս վարդապետը պատմում է Սյունյաց աշխարհին պատուհասած աղետի մասին. 1417 թ. սաստիկ երաշտից չորանում է ամեն ինչ, ջրերը ցամաքում են: Ապա պատմում է Վրաստանում՝ օտարության մեջ վախճանված Օրբելյան տոհմից Սմբատ Բուրթելյան իշխանի մասին: Գրիչը հիշում է նաև Խաչենի իշխանագույններից մեկին՝ Ջազային, գերության մեջ գտնվող նրա որդիներին ու ազգակիցներին:

Մատթեոսը խոր ցավով ու կսկիծով է խոսում Կարա Կոյունլու Յուսուֆի գործած անօրինությունների մասին, պատմում, թե ինչպես նրա վայրենացած զինվորները կողոպտել են Գանձասարի վանքը, ավերել, թալանել և տարել են վանքի ողջ հարստությամբ:

71 Խորան, Վախթանգ Տանգիլի և Խորիշահի Ավետարան (ՄՄ 378, էջ 1բ)
72 Հասան Ջալալի թոռ, Ումեյյեդ որդի Վախթանգի դիմանկարը (ՄՄ 155, էջ 106բ)
73 Մատթեոս վարդապետի 1417 թ. հիշատակարանի հատված, որտեղ նշվում է գրչության վայր Գանձասարը (ՄՄ 8689, էջ 89բ)


յունը (ՄՄ 8689, էջ 89բ): Չնայած այն բանին, որ երկիրը ենթարկվել է բարբարոսների արշավանքներին, և ձեռագրական արժեքների կորուստը մեծ է, մշակութային կյանքը շարունակվել է:

1420 թվականին Տեր Մարգիսը Գանձասարում ստացել է Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (ՄՄ 4004): Մատյանն օրինակել է Ռատակես գրիչը, իսկ Առաքել արեղան Գեղարքունիքում կազմել է այն:

1551 թ. Հայրապետ արեղան Ղազար քահանայի պատվերով արտագրել է մի Ավետարան «ի երկրիս մերում յԱրցախ, որ է Խաչեն կոչի, ի տեղս Մեծարանիս, որ է դուռս Գանձասարայ, որ գլուխն կա Ս(ուր)բ Յովհաննես Մկրտչին» (ՄՄ 6513, էջ 280բ, (նկար 74): Մատյանի մանրանկարչի անունը չի պահպանվել (հնարավոր է՝ գրիչն է): Չեռագրում առկա են ավետարանիչների պատկերները և անվանաթերթերը (նկար 75):



75



74

74. Ղազար քահանայի՝ 1551 թ. Գանձասարում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանի հատված (ՄՄ 6513, էջ 280բ)

75. Ղուկաս ավետարանիչ (ՄՄ 6513, էջ 83բ)

Գրիչը նշում է, որ Ավետարանը գրվել ու ավարտվել է Աղվանից կաթողիկոս Սարգիսի կողմից Գանձասարի վերանորոգման թվականին: Նորոգման այդ փաստը հաստատող անթվական մի փոքր արձանագրություն կա նաև եկեղեցու պատին: Հիշատակարանի այս հատվածում Հայրապետ գրիչը հիշատակում է նաև վանքի միաբաններից փակակալ Իսրայել եպիսկոպոսին, Կոստանդին եպիսկոպոսին, Հովհաննես, Սկրտիչ և Թունա քահանաներին:

Այս ձեռագիրը վանքից հափշտակվել է, ինչը երևում է վերջին ստացողի հիշատակարանից. Արևի և Նիզարի որդի խոջա Միանասարը 18-րդ դարում գերությունից փրկել է մատյանը և կրկին նվիրել Գանձասարի վանքին:

Հաջորդ մատյանը աղոթքների ու սաղմոսների ժողովածու է, որը 1576 թվականին Աղվանից Հովհաննես կաթողիկոսի խնդրանքով բողոքոքով օրինակել է Կարապետ գրիչը, իսկ Աթանաս ծաղկողը նկարագարողել է լուսանցազարդերով ու զարդագրերով (ՄՄ 1923): Գրիչը չափածո հիշատակարանում խորհուրդ է տալիս սաղմոս ասելով լվանալ «մեղաց աղտը», քանզի սաղմոսը գանձ է և անմահության աղբյուր:

Արցախի դարատներում հոգևոր առարկաներին զուգահեռ դասավանդվել են նաև քերականություն ու տրամաբանություն, ինչը ենթադրում էր նոր ձեռագրերի ու նոր երկերի ստեղծման անհրաժեշտություն: Հատուկ տեղ էր հատկացվում հատկապես քերականությանը, որը բխում էր գրագետ գրիչներ պատրաստելու, ձեռագրերը ճիշտ ու անսխալ արտագրելու, ուղղագրությունը կայունացնելու պահանջներից: Այս նպատակով այլ վայրերից հրավիրվում էին մասնագետներ, որոնք և՛ ուսուցանում էին, և՛ անհրաժեշտության դեպքում նաև՝ օրինակում ձեռագրեր:

Այսպես՝ 1659 թվականին Հովհաննես Ապահունեցի երեցը եկել է Գանձասար՝ քերականություն ուսուցանելու և օրինակել է քերականական նյութերի մի ժողովածու (ՄՄ 2277): Սկրտիչ արեղան 1660 թվականին նույն նպատակով Գանձասար էր եկել Կաֆայից: Այստեղ նա 1667-ին ավարտել է նաև 1654 թ. Կաֆայում սկսած ժողովածուն (ՄՄ 8504): Հիշատակարաններից մեկում (էջ 219ա) գրիչը նշել է նաև պատմական կարևոր փաստեր: Նա ժամանակագրական կարգով տալիս է 1603-1654 թվականներին տեղի ունեցած դեպքերը՝ սկսած Շահ-Աբաս Ա-ի կողմից Երևանի բերդի գրավումից մինչև 1654 թ. արեգակի խավարումը:

Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը» Բարսեղ արքեպիսկոպոսի խնդրանքով 1664 թվականին օրինակել է Սիմոն գրիչը (ՄՄ 2561): Հիշատակարանում նա ակնածանքով է հիշում Պետրոս Աղվանից կաթողիկոսին և մեծարանքի խոսքեր է ասում նրա մասին, որը Վարանդայի եպիսկոպոսական կենտրոն Ամարասի վանքում առաջնորդ էր նշանակել Բարսեղ արքեպիսկոպոսին: Բարսեղը նորոգում է Ամարասը, կարգավորում է և պարսպապատում: Կաթողիկոսը Հերիեր գյուղում հիմնում է Ս. Աստվածածին եկեղեցին և դարձյալ հանձնում Բարսեղին, որը շենացնում է վանքը:

Գանձասարի միաբան Աբրահամ Շաքեցին (եպիսկոպոս՝ 1752-ից) կազմել է փաստաթղթերի մի ժողովածու՝ «Գրագրութեան գիրք» վերնագրով, որն ուշագրավ տեղեկություններ է պարունակում վանքի տնտեսության և ընդհանուր կացության մասին (ՄՄ 3592)¹⁴⁴:

Դավիթ վարդապետ Թիֆլիսեցին 1760 թ. Գանձասարում օրինակել է աղոթքների մի ժողովածու, որտեղ ամփոփված են Բենիկ վարդապետ Աղվանից կաթողիկոսի, Գրիգոր Հեսացու կամ Մարաղացու և Գրիգոր Վանեցու աղոթքները (ՄՄ 38): Վան-

քում Արրահամ Շաքեցի արքեպիսկոպոսն Աղվանից Հովհաննես կաթողիկոսի համար 1766-ին ստույգ և ընտիր օրինակից արտագրել է մի Մաշտոց (ՄՄ 3971):

ՄՄ 3497 ձեռագրում, որն օրենագրքերի ժողովածու է (Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք» (էջ 1բ-76բ և այլն), 1778 թ. շղագրով լրացումներ է կատարել Հովհաննես Աղվանեցի կաթողիկոսը (էջ 20ա-32բ, 242ա-54բ) և հիշատակարանում նշել իր՝ Վախթանգ-Սակառյան իշխանական տոհմից սերված լինելը՝ «Սերում եմ ես ազգից և տոհմից իշխանաց իշխան Վախտանգ Սակառյանի, որից և՛ Ջալալ Դոլայ Հասան Վախտանգյանը» (էջ 254բ):

ՄՄ 9923 ձեռագիրը Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսի Վիմական արձանագրությունների Տետրակն է: 1718 թ. նա խնամքով հավաքել ու ամբողջացրել է Գանձասարի, Խաղավանքի, Դաղի և Գտչա վանքերի ու շրջակա տարածքի վանքերի ու խաչքարերի արձանագրությունները: Բնօրինակի գտնվելու վայրն անհայտ է: Մատենադարանում է պահվում դրանից կատարված երկու ընդօրինակություն՝ ՄՄ 7821 և ՄՄ 9923 ձեռագրերը: Առաջինը եղել է Հովհաննես Շահխաթունյանցի անձնական հավաքածուի մեջ և 1938 թ. բերվել է Մատենադարան: Երկրորդն ընդօրինակվել է 1822ին, երբ Հայոց Եփրեմ Ա կաթողիկոսը մեկնել էր Գանձասար: Վեհարանի գրագիր Հովհաննես եպիսկոպոս Դրիմեցին, որ նույնպես մասնակցում էր այդ շրջագայությանը, հայրապետի պատվերով Գանձասարի վանքում հենց 1718 թ. հեղինակային օրինակից արտագրում է Եսայի կաթողիկոսի Տետրակը, որի մասին հիշատակարան է թողել¹⁴⁵:


1657 թվականին Պետրոս կաթողիկոսի պատվերով Գրիգոր երեցը գրել ու ծաղկազարդել է Խորհրդատետր (Երուսաղեմ, ձեռ. 2273)¹⁴⁶: Գրիչը գեղեցիկ ու ճաշակով է նկարագարողել այն, սկզբնատողերը, սկզբնատառերը և տերմինական անունները ոսկեգույն են, թերթերն առնված են զարդարուն շրջագծերի մեջ, գունավոր զարդագիր է գլխավոր հատվածների սկիզբը, ունի բազմաթիվ լուսանցազարդեր:

1632 թվականին Գանձասարում ընդօրինակված մի Ավետարան է կազմել Պողոս Վանեցին, որը պահվել է Գանձակի Սբ. Հովհաննես եկեղեցում: Իսկ 1713 թվականին Հակոբ երեցն արտագրել է աղոթքների և տաղերի ժողովածու, որը եղել է Գալուստ Շարմազանյանի անձնական հավաքածուի մեջ: Վերջին երկու ձեռագրերի տեղն այժմ հայտնի չէ¹⁴⁷:

Վանքի մատենադարանը հարստացել է նաև նվիրատվություններով և այլ վայրերից այստեղ բերված ձեռագիր մատյաններով: Գանձասարում է պահվել ժամանակին Ռաֆայել Սթոռայի սեփականությունը եղած երկաթագիր մագաղաթյա Ավետարանը, որն այժմ գտնվում է Չիկագոյի համալսարանի մատենադարանում և կրում է 949 թվահամարը: 1237 թ. քահանա եղբայրներ Գրիգորը և Վարդանը՝ «ի սուրբ ուխտեն Գանձասար մենաստանէ», ձեռք են բերել այս մատյանն իրենց և իրենց ուխտի համար, քանի որ ձեռագրից օգտվողների մասին նշում են՝ «նաեւ զարբասնեալ եղբարքս մեր» միաբանակիցս համարեն՝ զժերս եւ եզորդիացեալս սուրբ ուխտիս»: Ստացողները մեծարանքով հիշատակում են նաև վանահորը՝ «առաջնորդութեամբ սուրբ ուխտիս տեսան Յովհաննիսի, անյախտ վարդապետի»¹⁴⁸: Նկատենք, որ այդ թվականին Գանձասարի Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցու կառուցումը դեռ չէր ավարտվել, բայց վանքը, ինչպես տեսնում ենք հիշատակարանից, բավականին մեծ միաբանություն ուներ: Հետաքրքիր է, որ արդեն 1275 թ. Գանձասարում գրված հիշատակարանում ձեռագիրը հատուկ անունով կոչվում է Կարմիր Ավետարան¹⁴⁹ (նկար 76):

Մատյանը շատ արժեքավոր է՝ Աբաս անունով մանրանկարչի ինքնատիպ նկա-

րագարդումների և տերունական պատկերների շնորհիվ: Դրանք, հավանաբար, քաղաքային միջավայրի ծնունդ են, և հնարավոր է, որ Աբասն ապրել ու ստեղծագործել է Անիի շրջանում¹⁵⁰: 13-րդ դ. սկզբներին ձեռագրի խորանները նկարել է Անիի մերձակա Հռոմոսի վանքի հայտնի գրիչ-մանրանկարիչ Իզնատիոսն իր աշակերտ Հովսեփի հետ: Ձեռագրի նկարագարդման մեջ գերիշխում է կարմիր գույնը, որից էլ, ըստ երևույթին, առաջացել է Կարմիր Ավետարան անվանումը:



76

Հակիրճ անդրադառնանք նկարներից մի քանիսին: Ձեռագրի սկզբում տեղադրված յոթ մագաղաթյա թերթերի վրա նկարված են նույնքան տերունական պատկերներ (էջ 1բ՝ Ավետում, 2ա՝ Ծնունդ, 3բ՝ Սկրտություն, 4ա՝ Պայծառակերպություն, 5ա՝ Մուտք Երուսաղեմ, 6բ՝ Խաչելություն, 7բ՝ Համբարձում): Դրանցում առկա են պատկերագրական ինքնատիպ հորինվածքներ, անգամ պարականոն ավետարանների հիման վրա ստեղծված հատված, բայց ավելի հաճախ՝ նկարչի դիտողականության արդյունքը հանդիսացող մանրամասներ, հատկապես շինությունների պատկերման և կերպարների հագուստավորման մեջ: Ցավոք, մատյանը և մանրանկարները մեր օրերն են հասել բավականին վնասված:

«Ավետում» մանրանկարում հրեշտակի և Մարիամի պատկերները մի սրածայր կամարով առանձնացված են ճարտարապետական ֆոնից: Աստվածամոր լուսասակը կարմիր է: Նկարի խորքում՝ աջից, երևում է արտաքին սյունաշարով, ութ կամարներով երկհարկ շինություն, իսկ ձախից՝ 13-րդ դարի հայկական եկեղեցիներից բնորոշ բարձրադիր թմբուկով գմբեթ (նկար 77):

Հետաքրքրական է նաև Քրիստոսի Ծնունդը ներկայացնող պատկերը, որը ներկայացված է երեք դրվագով: Առաջին տեսարանում (վերևում) փառաբանող վեց հրեշտակներից ներքև պատկերված են պառկած, անսովոր մեծ չափերով Աստվածամայրը և նրա վերևում՝ նորածին Հիսուսը: Երկրորդ շարքում գույգ հրեշտակների ուղեկցությամբ երկրպագության եկած մոզերն են, որոնք ականատես են լինում մանկան լոզանքին: Ուշադրության են արժանի մոզերի գլխարկները, կոշիկները և հագուստն, առհասարակ, որոնք նմանություն ունեն Հաղբատի Ավետարանում եղած իրական մարդկանց հագուստներին: Երրորդ՝ ստորին շարքում, գլխներին փաթթոց ունեցող հովիվներն են՝ իրենց ոչխարներով, այծերով և հուտը պահպանող շան հետ (նկար 78):

Ուշագրավ է «Մուտք Երուսաղեմ» տեսարանը, ուր Քրիստոսը քաղաքային մուտքին է մոտենում աջից՝ երեք աշակերտների ուղեկցությամբ: Գմբեթակիր աշտարակով մուտքի մոտ եկողներին դիմավորում են երկու քաղաքացի, իսկ երկու պատանհներ հագուստ են փռում ճանապարհին: Մանրանկարի վերին աջ անկյունամասում երևում են ձիթենու բարձր ծառի ճյուղերը, որոնց միջև պատկերված է ոս-

76. 1275 թ. Գանձասարում գրված հիշատակարանի հատված, որտեղ ձեռագիրը կոչվում է Կարմիր Ավետարան (Չիկագո, ծեռ. 949, էջ 15բ)



77



78

տեր կտրատող մի երիտասարդ: Մանրանկարի մեծ մասն զբաղեցնում է հզոր, երկ-
շարք ատամնավոր պարսպի պատկերը: Տեսարանի հիմնական գործողությունները
ծավալվում են հենց պարսպի խորքի վրա: Առաջին պարսպի ատամնաշարքի հավա-
սարությանը մեկ ընդ մեջ պատկերված են հինգ դեմքեր: Իսկ երկրորդ բարձրադիր
պարսպից երկու հոգի տոնական շեփորներ են հնչեցնում (*նկար 79*):

Աբաս մանրանկարիչն է ստեղծել նաև չորս ավետարանիչների պատկերները,
որոնք կազմված են երկու հիմնական մասից՝ նկարադաշտի երկու երրորդը զբաղեց-
նում են ավետարանիչների պատկերները, իսկ վերևում նրանց խորհրդանշաններն
են՝ ինքնատիպ ձևակերպմամբ ու գույադրությամբ: Ուշագրավ է, որ բոլոր պատկեր-
ներում գրակալ-սեղան է դրված ոչ թե ավետարանիչների առջև, այլ՝ նրանց թիկնա-
մասում: Բայց առավել ինքնատիպ են ավետարանիչների խորհրդանշանները:
Մատթեոսի պատկերից վեր նկարված են աթոռների վրա դեմ դիմաց նստած, աջ ձեռ-
քերն առաջ պարզած երկու երիտասարդ, որոնց միջև տեղ է գտել մի վեցթևյան սերով-
քի պատկեր (*նկար 80*):

Աջակողմյան երիտասարդը ձախ ձեռքին մերկացած սուր ունի, ձախակողմյա-
նը՝ նիզակ: Երկու պատկերների մոտ էլ աջից գրված է՝ «մարդ ըստ Մատթեոսի»:

Մարկոսի պատկերից վեր նկարված է ծալապատիկ նստած մի երիտասարդ (հա-
գուստը նման է նախորդներին), որն աջ ձեռքին ունի ուսին հենած կարճ պոչով նի-

77. Ավետում, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (*Չիկագո, ձեռ. 949, էջ 1բ*)


78. Ծնունդ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (*Չիկագո, ձեռ. 949, էջ 3բ*)

79. Մուտք Երուսաղեմ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (*Չիկագո, ձեռ. 949, էջ 6բ*)





80



81

զակ, իսկ առաջ պարզած ձախում՝ խնձորներով լի սկահակ հիշեցնող անոթ: Երիտասարդի դիմաց պատկերված է ետևի ոտքերի վրա նստած և առջևի թաթերը վեր բարձրացրած առյուծ, որն ասես պատրաստվում է վերցնելու անոթը (նկար 81): Մարկոսի ավետարանի անվանաթերթի գլխագարդի մեջ Աբաս մանրանկարիչը պատկերել է «Բարեխոսությունը»: Հետաքրքիր է, որ Քրիստոսը պատկերված է կարմիր լուսապսակով (նկար 82):

Դուկասի և Հովհաննեսի մանրանկարների վերնամասերում համապատասխանաբար նկարված են դեմ դիմաց կանգնած զույգ եզներ և զույգ արծիվներ՝ գլուխները միմյանց կողմ շրջած: Ավետարանիչների խորհրդանիշների պատկերումը զույգերով՝ հազվադեպ հանդիպող երևույթ է:

Միով բանիվ, այս արժեքավոր ձեռագրի փրկության և մեր օրերը հասնելու համար նույնպես պիտի հաշվի առնենք նրա պահպանության վայրի հանգամանքը: Ինչպես տեսանք, 1237 թվականից հետո մատյանը տևական ժամանակ եղել է Գանձասարում:



82

Անդրադառնանք Գանձասարի վանքում պահված մի քանի այլ մատյանների: 1314 թ. Գլաձորի համալսարանում ըստ Եսայի Նչեցու աշակերտ Պողոս Կիլիկեցու՝ Մյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Տարսայիճի համար ընդօրինակած Ավետարանը հետագայում դարձել է Գանձասարի վանքի սեփականությունը: Պահպանվել է միայն այս ձեռագրի արժեքավոր և ընդարձակ հիշատակարանը (ՄՄ 9150)¹⁵¹:



- 80. Մառթնոս ավետարանիչ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949)
- 81. Մարկոս ավետարանիչ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949)
- 82. Մարկոսի ավետարանի անվանաթերթը, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949)
- 83. Քրիստոսի ազգաբանությունը՝ 1599 թ. Ավետարանից, մանրանկարիչ՝ Ջաքարիա Ավանցի, պահվել է Գանձասարում (ՄՄ 5794, էջ 24բ)

1477 թ. Աղթամարում Հովհաննեսի ձեռքով գրված մի Ավետարան փրկվել ու Արցախ է բերվել, որտեղ 1502 թ. ձեռագիրը ՁՌ (6000) դահեկանով գնել ու Գանձասարի վանքին է նվիրել մի քահանա¹⁵²: Ձեռագրի գտնվելու վայրն այժմ անհայտ է: Թավրիզի թիվ 22 մատյանը պարունակում է Մովսես Խորենացու և Եղիշեի պատմությունները, գրվել է 1689 թվականից առաջ: Գրիչն ու գրչության վայրն անհայտ են: Ձեռագիրը 1689 թվականին բերվել է Գանձասար և պահվել վանքի ձեռագրատանը¹⁵³:

Գանձասարում պահված ձեռագրերից նշենք ևս մի քանիսը. 1599 թ. Վասպուրականի Ավանց գյուղում (Վանա լճի ափին) Կարապետ գրչի օրինակած և Ջաքարիա Ավանցու ծաղկած ու կազմած Ավետարանը 1606 թվականին ստացել է Մեհրաբ-Բեկի ավագ որդի Ջալալը, որը Գանձասարի կաթողիկոսների ազգականն էր և հիշատակարանը գրել է «ի յաթոռս Աղուանից սուրբ Գանձասարայ եւ սուրբ յաջոյս Գրիգորիսի»¹⁵⁴ (ՄՄ 5794) (նկար 83):

Մեկ այլ Ավետարան (ՄՄ 3196), որն ավելի վաղ Քարահատում ընդօրինակել էր Ավետիս հմուտ գրիչը, բայց չէր հասցրել նկարազարդել, 1655 թ. Գանձասարի Պետրոս կաթողիկոսի պատվերով ծաղկազարդում է Գրիգոր քահանան: 1656 թվականին Ասպահանում մի Ավետարան է ընդօրինակել Գասպար երեցը (ՄՄ 2399), որը 1658-ին Գանձասարում ստացել է Մինաս պարոնտերը:

Գանձասարի ձեռագրատան հավաքածուի մեջ են մտել նաև Սարգիս Շնորհալու (ՄՄ 3780, 14-րդ դ., գրիչ՝ Մարտիրոս), Գրիգոր Տաթևացու մեկնությունները (ՄՄ 4055, 1655 թ.) և Գևորգ Սկևռացու՝ Գրիգոր Նարեկացու լուծմունքը (ՄՄ 4383, 17-րդ դ.), Դիոնիսիոս Արիտպագացու (ՄՄ 3829, 1664թ., գրիչ՝ Բարսեղ կրոնավոր) և Պետրոս Արագոնացու (ՄՄ 4048, 1680թ., ստացող՝ Մովսես վրդ.) մատենագրությունները, Հովհաննես Աղվանից կաթողիկոսին ընծայված Մաշտոց ձեռնադրությանը (ՄՄ 4051), Առաքել և Պետրոս երեցների Վարանդա գավառում օրինակած Ավետարանը (ՄՄ 4176, 1652 թ.), 13-րդ դ. մի Ավետարան որի գրիչն է Դանիելը (ՄՄ 4185) և այլն: Այդ ձեռագրերի թվում՝ Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանցը» (ՄՄ 3616) արժեքավոր է նրանով, որ այն Տաթևացու ինքնագիրն է, գրվել է 1387-ին, Շահապոնք ամրոցում:

Ծանոթագրություններ

<p>95 Տեանն Անանիայի հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբության տանն Աղուանից, «Արարատ», 1896, էջ 42, տե՛ս նաև՝ Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 278-279:</p> <p>96 Մխիթար Գոշ, Ժամանակագրութիւն (Մատենագիրք Յայոց, հ. Ի), էջ 610:</p> <p>97 Դիվան, պրակ V, էջ 67: Վախտանգի մականվան մասին Գանձակեցին գրում է՝ «գոր Տանկիկն կոչէին» (Կիրակոս Գանձակեցի, էջ 268):</p> <p>98 Մովսես Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատասիրությանը՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983, էջ 348-350:</p> <p>99 Երուսաղեմ, ձեռ. 81, թ. 9, Ն. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Գ, Երուսաղեմ, 1968, էջ 281-282:</p> <p>100 Դիվան, պրակ V, էջ 40: Կիրակոս Գանձակեցի, էջ 270:</p> <p>101 Կիրակոս Գանձակեցի, էջ 269-270:</p> <p>102 Նույն տեղում:</p>	<p>103 Մ. Հասարթյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992, էջ 34:</p> <p>104 А. Якобсон, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). Исследования по истории культуры народов Востока, сборник в честь И. А. Орбели, М.-Л., 1960, ст.151:</p> <p>105 Տե՛ս Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջ, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հ. Բ, Երևան, 1948, էջ 25:</p> <p>106 Դիվան, պրակ V, էջ 38-40:</p> <p>107 Դիվան, պրակ V, էջ 41:</p> <p>108 Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 194:</p> <p>109 Դիվան, պրակ V, էջ 38:</p>
---	--

- 110 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 175-176:
- 111 **Ստ. Մնացականյան**, ԳՎ. աշխ., էջ 122:
- 112 Դիվան, պրակ V, էջ 38: Այս մասին գրում է նաև Կիրակոս Գանձակեցին (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 268):
- 113 Դիվան, պրակ V, էջ 38:
- 114 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 608:
- 115 **Ստ. Մնացականյան**, ԳՎ. աշխ., էջ 119:
- 116 **А. Якобсон**, ԳՎ. աշխ., էջ 151: Նրա տեսակետը կրկնում է Շ. Սկրտչյանը (**Շ. Սկրտչյան**, ԳՎ. աշխ., էջ 15):
- 117 **Բ. Ուլուբաբյան**, Գանձասար, Երևան, 1981, էջ 47, տես նաև Մ. Հասարաբյան, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, էջ 36:
- 118 Դիվան, պրակ V, էջ 38-40:
- 119 **Ստ. Մնացականյան**, ԳՎ. աշխ., էջ 121:
- 120 **А. Якобсон**, ԳՎ. աշխ., էջ 152: Թ. Ավետիսյան, Ջ. Հակոբյան, Գանձասարի վանքի Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցու թմբուկի քանդակային հարդարանքը (**Ջ. Հակոբյան, Լ. Միքայելյան, Ա. Ասրյան, Թ. Ավետիսյան**, Հայաստանի 12-14-րդ դդ. Խոնարհված և քիչ ուսումնասիրված եկեղեցական կառույցների քանդակային հարդարանքը (մաս առաջին), Երևան, 2023, էջ 32):
- 121 **Բ. Ուլուբաբյան**, Գանձասար, էջ 51:
- 122 Այս մասին հանգամանորեն տես **Կ. Մաթևոսյան**, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017, էջ 73-81, գրքի թվայինը՝ www.armenianart.org կայքում:
- 123 Հայերեններ, աշխատասիրությամբ **Աս. Մնացականյանի**, Երևան, 1995, էջ 466-467:
- 124 **Թ. Ավետիսյան, Ջ. Հակոբյան**, ԳՎ. աշխ., էջ 33:
- 125 **Բ. Ուլուբաբյան**, Գանձասար, էջ 38:
- 126 Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը (հեղինակ-կազմող **Կ. Մաթևոսյան**), Ս. Էջմիածին, 2013, էջ 56, 78:
- 127 Այս մասին հանգամանորեն տես Կ. Մաթևոսյան, Գանձասարի վանքի եկեղեցաշինարարների պատկերաքանդակները, «Հուշարձան» տարեգիրք, 2025, N 23:
- 128 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 311:
- 129 Դիվան, պրակ V, էջ 41:
- 130 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 94: 131 Ձեռագիրը նկարագրել է **Գ. Հովսեփյանը**, Ավետարանի գլխավոր հիշատակարանին են անդրադարձել **Մ. Բարխուդարյանցը, Բ. Ուլուբաբյանը**, իսկ նկարագրող-մանր՝ Ա. Սվիրիին, Վ. Լազարևը, Լ. Դուռնովին, Հ. Հակոբյանը (**Գ. Հովսեփյան**, Յիշատակարանը ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 761-764, Մ. Բարխուդարեանց, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 142, **Բ. Ուլուբաբյան**, Խաչենի իշխանությունը, էջ 142-144, **А. Н. Свириин**, Миниатюра древней Армении, М., 1939, с. 82, **В. Н. Лазарев**, История византийской живописи, М. 1947, ст. 186-188, **Л. А. Дурново**, Очерки..., ст. 248, **Հ. Հակոբյան**, Արցախնուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ., Երևան, 1989, էջ 38-50:
- 132 «Քրիստոս Աստուած յորժամ գաս հայրական փառաւք գխորհիշահ եւ զՎախտանգ ընդ սուրբս քո դասեա» (Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 95):
- 133 Ձեռագրագիտական տվյալները տես Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ **Օ. Եգանեան, Ա. Ջէթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէրշկերեան**, Երևան, 2004, էջ 307-310:
- 134 Դիվան, պրակ V, էջ 12:
- 135 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 311: Նույն թվականին Հասան-Ջալալը մոնղոլների խարդավանքների զոհն է դառնում և Արղուն խանի կողմից դաժանաբար սպանվում է Ղազվինում: Աթաբակը նահատակված հոր մատուցները բերում է հայրենիք և ամփոփում իրենց տոհմական գերեզմանատանը (**Կիրակոս Գանձակեցի**, էջ 391-392):
- 136 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 311:
- 137 **Կիրակոս Գանձակեցի**, էջ 363:
- 138 Դիվան, պրակ V, էջ 41:
- 139 Տեորակ համառոտ եւ լի իմաստնախոհ բանիւք, արարեալ հոգելից եւ իմաստուն վարդապետի **Յոհաննիսի Երզնկացոյ**... ի խնդրոյ զուարթամիտ պատանւոյ Վաղթանգայ՝ կրտսեր որդւոյ հռչակաւոր իշխանին Հայոց Ումէկայ, յամի տեառն 1284, Նոր-Նախիջևան, 1792:
- 140 **Հ. Հակոբյան**, Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դարերում, էջ 65-71: Տես նաև V. Gabrielyan, Artskh the people and land of Kharabagh, Yerevan, 2011, p. 76-81.
- 141 Դիվան հայ վիմագրության, Վայոց ձոր, պրակ III, կազմեց **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1967, էջ 110:
- 142 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 608:
- 143 ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ X-XII, 193-197:
- 144 **Ա. Սոխակյան**, Հանրագիտակ Հայոց պատմության աղբյուրագիտության, Երևան, 2019, էջ 409:
- 145 **Յովհաննես Ղրիմեցի**, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ նշանին, Վիեննա, 1965, էջ 135-136:
- 146 **Ն. Պողարեան**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ե, էջ 366:
- 147 **Օ. Եգանեան**, Աշխատութիւններ, Երևան, 2014, էջ 62:
- 148 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 199-200:
- 149 Նույն տեղում, էջ 461:
- 150 **Կ. Մաթևոսյան**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Էջմիածին, 1997, էջ 299-303:
- 151 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, մասն Ա, էջ 251-254:
- 152 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 112:
- 153 **Հ. Աճառեան**, Ցուցակ հայերեն ձեռագրաց Թաւրիզի, Վիեննա, 1910, էջ 20:
- 154 Հայերեն ձեռագրերի ԺԵ դարի հիշատակարաններ, հատոր Ա, կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1974, էջ 208:





ՀԱԿՈՒԲԱՎԱՆՔ

ՄԵԾԱՐԱՆԻՑ ԿԱՍ

ՄԵԾԻՐԱՆԻՑ ՎԱՆՔԸ

Մ

եծարանից (Մեծիրանից) Ս. Հակոբի վանքը, որն իր անունն ստացել է Հակոբ Մծբնա հայրապետի մատուցներն այստեղ պահվելու համար, Ներքին Խաչեն

գավառի երկրորդ առաջնորդանիստն էր. 14-15-րդ դարերում Հասան-Ջալալյան կաթողիկոսները նստում էին և՛ Գանձասարում, և՛ Ս. Հակոբա վանքում: Ս. Հակոբը միաժամանակ նաև Խոխանաբերդի հոգևոր մշակույթի, ուսման և դպրության կարևոր կենտրոններից էր (*նկար 84*): Աղբյուրները վանքի հիմնադրման ստույգ ժամանակը չեն պահպանել. ենթադրվում է, որ այն կառուցվել է 9-րդ դարից առաջ: Մեզ հասած ամենահին սկզբնաղբյուրը մի խաչքարի պատվանդանին պահպանված 853 թ. արձանագրություն է, որի մեջ հիշվում են Սահլ Սմբատյանի որդին՝ Հովհաննես իշխանը և խաչքարը կանգնեցնող Սողոմոն «Մեծարանց» եպիսկոպոսը¹⁵⁵: Ի դեպ, սա խաչքարի կանգնեցման մասին պահպանված հնագույն արձանագրությունն է Արցախում¹⁵⁶:

Վանական համալիրում կանգուն կամ կիսավեր վիճակով պահպանվել են իրար կից եկեղեցիները, միաբանների խցերը, օժանդակ շինություններն ու պարիսպը: Գլխավոր եկեղեցին վերակառուցվել է 1212 թ. Խաչենի Վախթանգ իշխանի կնոջ՝ Խորիշահի կողմից: Այդ մասին վկայող արձանագրության մեջ նշվում է. «Ես՝ Խորիշահ, ամուսին Վախտանգայ՝ Տեր Խաչենոյ, դուստր մեծին Սարգսիե վերստին շինեցի զեկեղեցիս Մեծարանից ի փրկութիւն հոգոյ իմոյ»¹⁵⁷: Եկեղեցիների պատերին առկա են բազմաթիվ նվիրատվական արձանագրություններ, որոնց մեջ գերակշռում են 13-րդ դարի վիճագրերը:

Երկրորդ անգամ վանքը նորոգվել է 1691 թ.՝ Գրիգոր եպիսկոպոսի ջանքերով: Այդ մասին արձանագրություն կա այն պահարանի դռան վրա, որտեղ պահվել է Հակոբ Մծբնա հայրապետի աջը¹⁵⁸: Վանքում շինարարական աշխատանքներ են կատարվել նաև 18-րդ դարում:

Ճարտարապետական առումով «վանքն ունի արևելքից արևմուտք բավականին ձգված, համարյա ուղղանկյուն գլխավոր հատակագիծ: Եկեղեցիները երկուսն են՝ միանավ, թաղածածկ, կիսաշրջանաձև խորաններով»¹⁵⁹: Վանքի ժամատունը, որի ներսում բազմաթիվ տապանաքարեր կան, այս կարգի կառույցների շարքում հնագույններից մեկն է: Ինչպես նշում է Մուրադ Հասրաթյանը, Հակոբավանքի համալիրը ընդհանրություններ ունի Սյունիքի վանական ճարտարապետության հետ¹⁶⁰: Եկեղեցիներին կից՝ հարավային կողմում ունի սյունասրահ, ինչպիսին առկա է Որոտ-



84

նավանքում (նկար 85): Գավթին կից սրահի հարավային պատի արձանագրության համաձայն՝ 1241 թ.՝ տեր Սարգսի առաջնորդության տարիներին, Մմբատի որդի Գրիգորը վանքին է նվիրել հողատարածքներ, Ավետարան ու սուրբ խաչ¹⁶¹: Սա ամենավաղ վկայությունն է այս եկեղեցուն՝ ձեռագրի նվիրատվության վերաբերյալ:

Ժամանակին գերահռչակ և անվանի ճանաչված գրչության նշանավոր այս կենտրոնից և շրջակայից մեզ սակավ ձեռագրեր են հասել: Ս. Հակոբա վանքի միաբան Գրիգոր քահանայի խնդրանքով Հովհաննես գրիչը, որ 1297 թ. Եղեգյաց Սբ. Աստվածածին եկեղեցուն Ավետարան է օրինակել, հիշատակարանում պատմում է, թե ինչպես թշնամու արշավանքներից ավերվել ու քանդվել, դատարկվել ու ամայացել են գավառի եկեղեցիները (ՄՄ 7482, էջ 245ա)¹⁶²: Գրիգոր քահանան խնդրել է հիշել ուխտի միաբաններ Հովհաննիս և Հակոբին: Վկայություն ունենք, որ 1383 թվականին այստեղ կազմվել է մի Ավետարան¹⁶³:

Սաղաթել արեղան, վանքի միաբան Սիմեոն արքեպիսկոպոսի խնդրանքով, 1577 թ.-ին՝ Հովհաննես կաթողիկոսի հայրապետության տարիներին, օրինակել է մի Ավետարան՝ «ի գերահռչակ եւ անուանի, մեծ եւ փառաւոր սուրբ ուխտիս Յակոբայ վանք եւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին... ի յերկիրս Խաչեան ի հայրապետութեան տեառն Յոհաննէս կաթողիկոսին...» (ՄՄ 5507, էջ 230բ): Թուղթը տրամադրել է Բարսեղ մահտեսին, իսկ արտագրության ընթացքում գրչին օգնել են իր ընկերներ տեր Ունանը և Ավանիս արեղան: Հետաքրքիր է, որ գրիչը վերջինիս կոչում է իր խցակիցը, այսինքն՝ վանական նույն խցում են բնակվել՝ «տէր Ունան եւ տէր Աւանիս արեղայ՝ ընկերակից իմի խցի» (ՄՄ 5507, էջ 230ա):

84. Հակոբավանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից (լուսանկարը՝ Չրայր Բազի, 2015 թ.)

85. Հակոբավանքի սյունասրահը (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2021 թ.)

Գլխավոր հիշատակարանում հիշվում են նաև Բարսեղ եպիսկոպոսը, տեր Եղիշեն, տեր Ոսկանը, տեր Բարսեղը, տեր Սարգիսը, սարկավագներ Ուլուն և Բասբարը, վերջում՝ վանքի տնտեսական աշխատողներ Գոհարը և Մարիան: Գրիչը հիշում է նաև իր հանգուցյալ հորեղբայրներ Սիմավոն և Վարդան եպիսկոպոսներին: Մատյանը հետագայում ուստա Կարապետի խնդրանքով՝ 1594 թ. Վասպուրականի Ավանց գյուղում ծաղկազարդել է շնորհալի մանրանկարիչ Ջաքարիա Ավանցին¹⁶⁴: Թե ինչու և ինչպես է Արցախում գրված մատյանը Վասպուրական հասել, դժվար է ասել: Այստեղ Ջաքարիան՝ իր ուրույն ոճով, նկարել է Ավետարանի տերունական նկարները, համապատասխան էջերին՝ ավետարանիչների պատկերներն՝ իրենց անվանաթերթերով, խորաններով ու կիսախորաններով (*նկար 86, 87*):

Աղբյուրները, այնուհետև, մինչև 19-րդ դարն այս գրչակենտրոնի գործունեությանը վերաբերող տեղեկություններ չեն հաղորդում:

Հակոբավանքում իր մանկավարժական ու գիտական գործունեությամբ հայտնի էր Հովսեփ Արցախեցի (Տեր-Ավագյան) վարդապետը (ծննդ. թիվ՝ անհայտ -1847): Նա ծնվել է Շուշիում, որտեղ էլ կրթություն է ստացել, հետագայում հիմնել է դպրոց: Հիշատակարաններում իրեն բանասեր անվանող Հովսեփ վարդապետը քերականական ու փիլիսոփայական մի շարք գործերի հեղինակ և խմբագիր է: Նա դասավանդել է հայոց լեզու, աստվածաբանություն, տրամաբանություն և փիլիսոփայություն: Ս. Հակոբավանքում Հովսեփ վարդապետը կազմում է «Գիրք տեսական փիլիսոփայության» աշխատությունը՝ բաղկացած չորս գրքից՝ «Տրամաբանության մասին», «Բնաբանության մասին», «Համաբնաբանության մասին», «Բարոյականի մասին» (ՄՄ 2828): Ըստ էության, Հովսեփ Արցախեցին համառոտել և խմբագրել է ֆրանսիացի



Լուսանկարը՝ Մլախ Սարգսյանի







86

դմինիկյան աստվածաբան և փիլիսոփա Անտուան Գուդենի (1639-1695) փիլիսոփայական երկը, որը հայերեն էր թարգմանվել Մխիթարյան միաբան Հայր Վրթանես Ասկերյանի կողմից և հրատարակվել Վենետիկում 1750-1751 թթ.: 1816 թվականին Հովսեփ Արցախեցու և նրա աշակերտի համատեղ ընդօրինակությամբ ստեղծվում է այս աշխատության մեկ այլ օրինակ (ՄՄ 2525): 1835 թ. երկու օրինակ հեղինակն ինքն է անձամբ արտագրում Բաղդասար Հասան-Չալայան արքեպիսկոպոսի խնդրանքով (ՄՄ 3619, 4038): Հովսեփ Արցախեցու կազմած համառոտ տարբերակի առաջին մասը՝ «Տրամաբանության մասին» լույս է տեսել Շուշիում 1840 թ.¹⁶⁵:

Ձեռագրերում առկա է Հովսեփ վարդապետի ընդարձակ առաջաբանը (բացակայում է հրատարակության մեջ), որում հեղինակ-խմբագիրը բացատրում է Գուդենի երկի խմբագիր տարբերակի ստեղծման նպատակը, ինչպես նաև՝ փիլիսոփայության և տրամաբանության նշանակությունը աստվածաբանության, և գիտելիքի կարևորությունը հավատի համար:

86. Տյառնըդառաջ, մանրանկարիչ՝ Ջաքարիա Ավանցի, 1594 թ. (ՄՄ 5507 էջ 3բ)

87. Դժոխքի ավերումը, մանրանկարիչ՝ Ջաքարիա Ավանցի, 1594 թ. (ՄՄ 5507 էջ 9ա)

Հովսեփ Արցախեցին 1839-ին գրում է «Քերականություն Հայկազյան լեզվի» աշխատությունը (ՄՄ 2563): Հայտնի է նաև քերականությանը վերաբերող նրա մեկ այլ աշխատանք (ՄՄ 3620): Հովսեփ վարդապետը 1817 թ. կազմում է Հովհան Ոսկերեքանի Մատթեոսի Ավետարանի մեկնության խմբագիր տարբերակը՝ «Ծաղկաքաղ մեկնություն Աւետարանին Մատթեոսի, զոր արարեալ է Յօհաննու Ոսկերեքանին» (ՄՄ 3618): 1830 և 1840 թվականներին Շուշիում տպագրվում են նրա երկու՝ «Համառօտ բառգիրք գրաբարից աշխարհաբար» և «Առաջին մասն փոքր քերականութեան գրաբառ լեզուի ի հայոց» աշխատությունները: Այս երկու երկերն էլ օգտագործվել են որպես դասագրքեր:



87

Ծանոթագրություններ

- 155 Դիվան, պրակ V, էջ 12:
- 156 **Հ. Պետրոսյան, Ն. Երանյան**, Արցախի կոթողային մշակույթը, Երևան, 2022, էջ 28:
- 157 Դիվան, պրակ V, էջ 12:
- 158 Նույն տեղում, էջ 11:
- 159 **Մ. Հասարթյան**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, էջ 83:
- 160 Նույն տեղում, էջ 83-84:
- 161 Դիվան, պրակ V, էջ 13:
- 162 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 798:
- 163 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 263:
- 164 Նկարչի մասին տես **Ա. Ավետիսյան**, Մանրանկարիչ Ջաքարիա Ավանցի, Երևան, 2023:
- 165 Առաջին մասն փիլիսոփայության որ ասի Տրամաբանութիւն՝ համառօտեալ ի բուն Տրամաբանութենէ աստուածաբան վարդապետին Կովորոյ ի 1830 ամի: Աշխատասիրութեամբ հօր Յովսէփայ գիտնական վարդապետի Տեր-Աւագեան Արցախեցոյ, որ է միաբան սրբոյ վանիցն Գանձասարու՝ եղելոյ ի Խաչէն գաւառակին Արցախայ: Ի հայրապետութեան տեառն եւ տեառն Յովհաննու Կարբեցոյ սրբազնասուրբ կաթողիկոսի անենայն Հայոց եւ ասպետի, հրամանաւ տեառն Բաղտասարայ ասպետափառ մետրապօլտի եւ բարձր սրբազան արհիեպիսկոպոսի Հասան Ջալալեանց, ի տպարանի վիճակաւոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան Սետրապօլտին Բաղտասարայ: 1840 ի Շուշի, ՈՍՁԹ.: Հովսեփ Արցախեցու գրական ժառանգության մասին տես՝ **A. Melkonyan**, The literary heritage of the philosopher, theologian and philologist Hovsep' Arts'akhets'i (18th–19th centuries), "Das kulturelle Erbe von Arzach", Kiel University Publishing, 2024, pp. 511-524.





ԵՂԻՉԵ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ

Արցախի Ջրաբերդի գավառում նշանավոր են եղել Եղիշե (Եղիշա) առաքյալի և Երից մանկանց վանքերը: Գավառը տարածվում է Մռավի լեռնաշղթայի, Թարթառ գետի

և նրա Թրդի վտակի ձախ և Կուրակ գետակի աջ ափերին, Պարտավ քաղաքի հանդիպակաց կողմում: Այն անունն ստացել է իշխանանիստ համանուն բերդի անունից: 17-րդ դարում գավառը բաժանվում է երկու մասի՝ Ջրաբերդ և Գյուլիստան՝ առանձին մեղիքական տներով¹⁶⁷:

Գավառում հայ դպրությանը վերաբերող ամենավաղ տեղեկությունները 5-րդ դարից են և կապվում են Վաչագան Գ Բարեպաշտ թագավորի անվան հետ, երբ նա Գյուլիստան բնակավայրում, որն արքունի ամառանոցն էր, հիմնում է դպրոց, որտեղ քրիստոնեություն էին ուսուցանում քրմերի որդիներին¹⁶⁸:

Եղիշե առաքյալի վանքը, որ նաև ժողովրդախոսական Ջրվշտիկ անունն ունի, գտնվում է Մռավ լեռան լանջին՝ մի գեղատեսիլ, անտառապատ ու ժայռոտ բարձունքի վրա (*նկար 88*): Այն վաղագույն ժամանակներում հեթանոսական սրբավայր է եղել՝ Միհր Ներսեհեա կամ Ներսմեհա ուխտանունով¹⁶⁹: Ջրվշտիկ է կոչվել մոտակայքում գտնվող ջրվեժի անունով:

Մենաստանն առաքյալի անունով է կոչվում 5-րդ դարից, երբ, ըստ ավանդության, Աղվանից Վաչագան Բարեպաշտ թագավորը Հռեկա վանքից բերում և այստեղ է ամփոփում Եղիշե առաքյալի մասունքները, վրան կառուցում մատուռ-դամբարան, որտեղ էլ վախճանվելուց հետո թաղվում է նաև ինքը¹⁷⁰: 1286 թ. Վաչագան թագավորի գերեզմանի վրա Սիմեոն վանահայրը կառուցում է եկեղեցի: Այդ մասին վանքի հյուսիսարևելյան կողմում գտնվող մատուռի վրա, որը կառուցվել է տեր Սիմեոնի առաջնորդության ժամանակ՝ 1286 թ. արձանագրություն է պահպանվել. «Այս է հանգիստ Վաչագան թագաւորին»¹⁷¹: Տեր Սիմոնը մահացել է 1298 թվականին և թաղվել վանքի գավիթում¹⁷²:

Նրանից հետո հաջորդաբար վանքի առաջնորդներ են եղել Հովհաննեսը, Վարդանը, Մատթեոսը, Կարապետ և Դավիթ եպիսկոպոսները, Մելքիսեդը, որ սպանվել է թուրքերի կողմից, Կիրակոսը, Ավագ Դալի Մահրասա վարդապետը: Վանքի գերեզմանատանն են ամփոփված վանքի առաջնորդների ու միաբանների աճյունները¹⁷³, 1750-ական թթ. ինքնապաշտպանական մարտերի կազմակերպիչ նշանավոր մելիք Ադամը¹⁷⁴: Եղիշե առաքյալի վանքը գավառի եպիսկոպոսանիստն էր և որպես սրբատեղի, հոգևոր ու մշակութային կենտրոն՝ համախմբել է շատ հայտնի հոգևոր և

աշխարհիկ անձանց: Որոշ ժամանակ վանքում են ապաստանել նաև Գեղարքունիքի Մաքենյաց ուխտի միաբանները¹⁷⁵:

Վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց, գավիթից, սեղանատնից, յոթ մատուռներից, որոնք ծառայել են որպես դամբարաններ, վանական և առաջնորդական շինություններից, մելիքական պալատ-ապարանքից և օժանդակ այլ շինություններից, բակում կան 12-13-րդ դարերի խաչքարեր¹⁷⁶:



88

Վանքից մեզ հասած ձեռագիր մատյանները 16-17-րդ դարերից են, թեպետ ենթադրելի է, որ այստեղ ձեռագրեր են ընդօրինակվել նաև ավելի վաղ շրջանում: Ըստ մի ձեռագրի հիշատակարանի՝ 1554 թվականին՝ Կարապետ և Դավիթ եպիսկոպոսների աթոռակալության տարիներին «Ջրաբերդի երկրի Սբ. Եղիշե առաքյալի և Երից մանկանց և Ավագ Սբ. Նշանի հովանու ներքո» ծաղկազարդվել ու կազմվել է մագաղաթյա մի Ավետարան, որ գրվել է Շուլավերի Ս. Մեսրոպ եկեղեցում¹⁷⁷: Ձեռագրի ծաղկազարդումն ավարտվել է Աղվանից Սարգիս կաթողիկոսի մահվան տարում՝ 1555 թ. (ձեռագրի գտնվելու տեղն անհայտ է):

16-րդ դարի երկրորդ կեսին Ջրաբերդում ձեռագիր մատյաններ էր գրում ու ծաղկում Աթանասը, որի մասին տեղեկություններ ենք ստանում իր հիշատակարաններից: 1551 թ. Աթանասը նկարում է Սանահինում 1534 թ. Տերունական գրչի օրինակած

Ավետարանի անվանաթերթերը, լուսանցազարդերն ու զարդագրերը (ՄՄ 217): 1559 թվականին Կարապետ եպիսկոպոսի խնդրանքով՝ Աթանասը Ջրաբերդի երկրի մեծապայծառ և գերահռչակ կոչվող Եղիշե առաքյալի վանքում Հովհաննեսի կաթողիկոսության և Կարապետի ու Դավիթի եպիսկոպոսության տարիներին Հայսմավուրք է գրում ու ծաղկազարդում (ՄՄ 4477): Գլխավոր հիշատակարանում, որը վերջից թերթեր ընկած լինելու պատճառով թերի է, գրիչը խնդրում է հիշել ստացողին, նրա ծնողներին, եղբայրներին և քույրերին: Ստացողի անունից հիշատակագրություններ կան ձեռագրի բազմաթիվ էջերում, որտեղ հիշվում են ուխտի միաբաններ՝ Կարապետ եպիսկոպոսի մորեղբայր տեր Հովհանը և տեր Մաղաքիան:



88. Եղիշե առաքյալի վանքը
(լուսանկարը՝ Չրայր Բազի, 2015 թ.)


89. Դավիթ մարգարե, Սաղմոսարան,
1576 թ., Եղիշե առաքյալի վանք,
նկարիչ՝ Աթանաս (ՄՄ 1923, էջ 7բ)



1312



Աթանաս արեղան երկու տարի հետո՝ 1561 թ., «Ջրաբերդի երկրի Սբ. Եղիշե առաքյալի և Երից մանկանց Ավագ Սբ. Նշանի և Թումա առաքյալի հովանու ներքո» նկարազարդում է 1560 թ. Ղուկաս բարունապետի խնդրանքով Մարգարա քահանայի և Եղիա եպիսկոպոս Բերկրացու՝ Այրարատում օրինակած Հայսմավուրքը (ՄՄ 6282): Ծաղկողը հիշատակարանում նշում է, որ կատարելապես չի տիրապետում մանրանկարչության արվեստին, ուստի խնդրում է անմեղադիր լինել, որովհետև իր հնարավորության սահմաններում է կատարել աշխատանքը: Այս ձեռագիրը եղել է հայ մեծ գրող Հովհաննես Թումանյանի (1869-1923) անձնական գրադարանում (թերթերից մի քանիսում դրված է նրա անձնական կնիքը): Աթանասը մի ձեռագիր էլ գրել է 1565 թ. Երից մանկանց վանքում, որին կանդրադառնանք ստորև:



90

1576 թ. Աթանասը կատարում է կաթողիկոսական պատվեր. ծաղկազարդում է Հովհաննես Աղվանից կաթողիկոսի խնդրանքով Կարապետ գրչի՝ Գանձասարում օրինակած Սաղմոսարանը (ՄՄ 1923): Աթանասը բնագրի սկզբում պատկերել է Դավիթ մարգարեին (նկար 89): Չեռագրի նկարազարդումը հիմնականում զարդանկարչական է՝ հարուստ զարդագրերով, թռչնազարդերով ու լուսանցազարդերով (նկար 90):

1681 թվականին Եղիշե առաքյալի վանքում Ահարոն Մայեկացին Հակոբ քահանայի խնդրանքով արտագրել է մի Մաշտոց (ՄՄ 8125): 1682 թվականին՝ Հովհաննեսի արքեպիսկոպոսության տարիներին, Եղիշե առաքյալի վանքում Մարգարի կին Մարիամը Հովսեփ քահանային պատվիրել ու նրանից ստացել է մի Ավետարան և նվիրել Ջրաբերդի Սբ. Աստվածածին եկեղեցուն, «որ մերձ է Ս. Երից մանկանց եւ Չարաբերդին»¹⁷⁸: 1787 թվականին վանքում գրված մի Բարոզգիրք տիրացու Հովհաննեսը նվիրել է Մեծշենցի տեր Մելիքսեթի որդի Սողոմոն վարդապետին¹⁷⁹:

90. Ջարդագիր և լուսանցազարդ, Սաղմոսարան, 1576 թ., Եղիշե առաքյալի վանք, նկարիչ՝ Աթանաս (ՄՄ 1923, էջ 110ա)

Վանքի գրատունը հարստացել է նաև նվիրատվություններով: Համաձայն գավթի արձանագրությունների՝ ուխտի միաբաններից Գրիգորը կառուցել է Ուղտապատ եկեղեցին, գնել է մի Ավետարան և Փերթ կոչվող հողատարածքի հետ ընծայել ուխտի առաջնորդ տեր Սիմոնին և միաբանների հետ երկու ժամ պատարագ է տվել Համբարձման տոնին: Սերոբ քահանան երեք գիրք է նվիրել տեր Սիմոնին, իսկ միաբանները Բարսեղի տոնին՝ երկու պատարագ: Դավիթը և նրա կինը միաբանությանը նվիրել են մի խաչ, Առաքելոց տոնին ստացել են երեք պատարագ¹⁸⁰: 1607 թվականին մի քանի ձեռագրեր է նվիրել նաև վանքի առաջնորդ Ավագ Դավի Մահրասա վարդապետը¹⁸¹:

Ծանոթագրություններ

- 167 **Մ. Բարխուդարեանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, էջ 145:
- 168 Դիվան, պրակ V, էջ 102:
- 169 **Ստեփանոս Օրբելեան**, էջ 159, Մովսես Կաղանկատուացի, էջ 41:
- 170 Յ. Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանցի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 60:
- 171 Դիվան, պրակ V, էջ 110:
- 172 Նույն տեղում էջ 108:
- 173 Նույն տեղում, էջ 108-110:
- 174 **Յ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 117:
- 175 **Ստեփանոս Օրբելեան**, էջ 119:
- 176 Դիվան, պրակ V, էջ 106:
- 177 **Մեսրոպ արք. Սմբատեանց**, Նկարագիր Աբ. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից, Տփլիս, 1904, էջ 146:
- 178 **Յ. Ոսկեան**, Արցախի վանքերը, էջ 116, 123:
- 179 **Մ. Բարխուդարեանց**, Աղվանից երկիր և դրացիք, էջ 192:
- 180 Դիվան, պրակ V, էջ 106-107:
- 181 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 261, Յ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 123:





ԵՐԻՅՑ ՄԱՆԿԱՆՑՑ ՎԱՆՔ

Մ

ռավի լեռնաշղթայի հարավային անտառածածկ լանջին՝ նշանավոր Ջրաբերդ ամրոցի մոտ է գտնվում Երից մանկանց վանքը (*նկար 91*): Եղիշե առաքյալի

վանքին մոտ գտնվելու պատճառով այս երկու վանքերը հիշատակարաններում հաճախ միասին են հիշվում: Գլխավոր եկեղեցին, հավանաբար՝ հնում եղած եկեղեցու տեղում, 1691 թ. եղբոր՝ Իզնատիոսի հետ կառուցել է տվել Սիմեոն Ա Խոտորաշենցի կաթողիկոսը: Վերջինս էլ այն դարձրել է Գանձասարի հակաթոռ կաթողիկոսության կենտրոն, և այդ ժամանակից սկսած մինչև 1819 թվականը շարունակվել են հակամարտությունները երկու կաթողիկոսությունների միջև, ինչը ստիպել է Ամենայն հայոց կաթողիկոսներին հանդես գալ հաշտարար միջնորդությամբ: 1664 թվականի մի արձանագրության մեջ Իզնատիոսը բաբունապետ է կոչվում:

Այն, որ վանքը գոյություն ուներ մինչև 1691 թ. եկեղեցու կառուցումը, երևում է այն բանից, որ Եղիշե առաքյալի վանքից մեզ ծանոթ Աթանասը 1565 թ. Երից մանկանց վանքում օրինակել է Ավետարան (ՄՄ 2928), որի մասին հիշատակարանում նշվում է. «գրեցաւ սուրբ Աւետարանս՝ ի յերկիրս Ջրաբերթ, ընդ հովանեաւ Երից Մանկանց սուրբ վկայիցս եւ Սուրբ Կարապետիս եւ Եղիշէի՝ սուրբ առաքելոյն ի հայրապետութեանն տեառն Գրիգորիսի կաթողիկոսին Աղուանից» (ՄՄ 2928, էջ 226ա) (*նկար 92*): Մատյանի ստեղծման նախապատմությունն այն է, որ Ռստակես մենակյացը երկիցս գնացել էր Երուսաղեմ՝ երկրպագության, եղբոր՝ անգավակ Քարինշիմի հետ: Նա այդ առիթով Աթանասից խնդրում և ստանում է Ավետարանը՝ որպես հիշատակ իրենց գերդաստանի: Պարզ ու ճաշակով նկարագարողունը կատարել է գրիչ Աթանասը (*նկար 93*): Ստորին լուսանցքներում տեղ-տեղ նա կարմրագրով ցուցումներ է տվել, ուղղումներ արել: Աթանասը գլխավոր հիշատակարանում առաջին անգամ նշում է ծնողներին՝ Վրթանես քահանային և Գուլպահարին, և ուսուցչին՝ Դուկաս վարդապետին, որից հետո հիշում է նաև Հովհաննես վարդապետին:

Գրիչ Իզնատիոսը, որ Մեծշենում ծնված լինելու համար կոչվում էր Մեծշենցի, կրթությունը ստացել է Երից մանկանց վանքում, աշակերտել է դպրապետ Անդրեաս Ջուղայեցուն: Իզնատիոսը 1661 թվականին (դարձյալ՝ 1691 թ. եկեղեցու կառուցումից առաջ) ընդօրինակել է «Գիրք Պիտոյիցը»՝ Տաթևից Երից մանկանց անապատ բերված բաբունապետ Հովհան Տաթևացու ստույգ և ընտիր օրինակից (ՄՄ 3446): Գլխավոր հիշատակարանում Իզնատիոսը հիշում է իր ուսուցչին՝ Անդրեասին, պապին՝ Հանճարին, հորը՝ տեր Սարգսին, մորը՝ Մավարին, հորեղբայրներին, եղբայրներին ինչպես նաև՝ վանքի միաբաններին:



91

Երից մանկանց վանքից մեզ հասած ձեռագիր մատյանների թիվը մեծ չէ: Եսայի գրիչը 1619 թվականին օրինակում է Ներսես Լամբրոնացու երկերի մի Ժողովածու և նվիրում Երից մանկանց վանքին¹⁸²:

Աբրահամ Շաքեցի եպիսկոպոսը, ով եղել է Աղվանից Ներսես հայրապետի աշակերտը, ապա դարձել նրա քարտուղարը, 1760 թվականին նրա համար Երից մանկանց վանքում ավարտում է Չեռնադրության Մաշտոցը, որի «ընտիր և ստույգ» օրինակն ու թուղթը շնորհել էր հայրապետը (ՄՄ 1078): Գլխավոր հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել հայրապետին, իր հանգուցյալ ծնողներին՝ խոջա Չաքարիային և Խաթունին: Աբրահամ Շաքեցի եպիսկոպոսն Աղվանից Աթանաս կաթողիկոսի խնդրանքով մի Չեռնադրության Մաշտոց էլ օրինակել է Գանձասարում 1766 թվականին (ՄՄ 3971):

1725 թվականին Ալլահվերդի Պանագուրգին այլազգիների ձեռքից փրկել և ուխտին է նվիրել մի Ավետարան, շուրջառ ու թագ¹⁸³:

91. Երից մանկանց վանքը (լուսանկարը՝
Հրայր Բազեի, 2015 թ.)



Լուսանկարը՝ Սյակա Սարգսյանի

Վերոնշյալ վանքերից բացի, Ջրաբերդի գավառում են պահվել բացառիկ արժեք ունեցող երկու հնագույն մատյաններ: Առաջինը ՄՄ 6202 ձեռագիրն է և հայտնի է Մեծշենի Կարմիր Ավետարան անունով: Ավետարանը հաստ մագաղաթի վրա բոլորագիծ երկաթագրով 909 թվականին Կոստանդնուպոլսում գրել է Թութայել գրիչը: Պատվիրատուն Հայոց Սմբատ Ա թագավորի եղբորորդի Աշոտ սպարապետն է¹⁸⁴: Ձեռագիրը նկարագարով էլ է ավելի ուշ՝ Իգնատիոս Հռոմոսցու ձեռքով¹⁸⁵: Նա շուրջ 1236-1242 թթ. ձեռագրի սկզբում ավելացրել է մագաղաթյա վեց թերթ և կատարել խորանների և Մատթեոսի ու Ղուկասի անվանաթերթերի նկարագարդունը՝ խորանների հորիզոնական երիզներին թողնելով մի քանի հիշատակագրություններ, որոնցում ակնարկվում է մոնղոլական արշավանքների մասին: Իգնատիոսը գրել է նաև Մատթեոսի և Մարկոսի ավետարանառաջները:



93

գրի գործն ի հայոց լուս
 առնչեն. ու. մ. ծե.
 Տայսմամի գրեցաւ
 սբաւետարանս. ի
 յերկիրս Ջրաբերդ.
 Ընդհովանեաւ երից
 մանկանց սբվկայիցս.
 Եւսբկար սյտիս. Եւ
 եղիչէի սբ առաքելոյ
 ն. ի հայր ապետումն
 սնն գրի գորիս ի կանոն
 ի կոստն աղվանից -

92

- 92. Հիշատակարանի հատված՝ գրված 1565 թ. Երից մանկանց վանքում, գրիչ՝ Աթանաս (ՄՄ 2928, էջ 226ա)
- 93. Ղուկաս ավետարանիչ, Ավետարան, 1565 թ., գրիչ-մանրանկարիչ՝ Աթանաս (ՄՄ 2928, էջ 109բ)
- 94. Խաչապատկեր Մեծշենի Կարմիր Ավետարանից, նկարիչ՝ Իգնատիոս (ՄՄ 6202, էջ 6բ)
- 95. Մատթեոս ավետարանիչ, Բեգյունց Ավետարան, 11-րդ դ., նկարիչ՝ Յովհաննես Սանդղկավանցի (ՄՄ 10099, էջ 1ա)



94

Խորանների հորիզոնական երիզների վրա Իզնատիոսը թողել է մի շարք կարճ հիշատակագրություններ (էջ 2ա, 3ա, 3բ, 5ա, 6ա, 6բ), որոնք վկայում են ժամանակի ծանր կացության և նվաճող մոնղոլների դաժանության մասին: Դիմելով Բարձրյալին՝ նկարիչը գրում է. «Ողորմեա Իզնատիոս նկարչի... յորժամ գայցես ի սոսկալի ատուրն:... Ո՛հ թաթար, վայ ատուրն, որ եկիր անցուցիր զաշխարհս: Ո՛հ ներեցեր Աստուած անչափ արիւնահեղութիւնս...», իսկ խորանները եզրափակող վերջին էջում (6բ) գույգ մոնակալներով մոմերի արանքում նկարված է բարձրացող մի մեծ խաչ, որի տակ գրված է. «Սուրբ նշան, ազնեա մեղաւորիս Իզնատիոսի»¹⁸⁶ (նկար 94): Խորանների գունաշարում գերակշռում է կարմիր գույնը, որն էլ, հավանաբար, պատճառ է դարձել, որ ձեռագիրը հետագայում «Կարմիր Ավետարան» կոչվի:

Ձեռագիրը 1252 թ. Վանա լճի առափնյա Ոստան քաղաքում այլազգիներից 25 կարմիր դահեկանով գնել է Հայրապետ արեղան և իր ծնողների՝ Խաչիկի և Տիկնոց հիշատակին նվիրել Սուրբ Խաչ եկեղեցուն¹⁸⁷: Թե ինչպես է մատյանը Վասպուրականից հասել Արցախ, հայտնի չէ, բայց երկար ժամանակ պահվել է Մեծշեն գյուղում, որտեղ այն 19-րդ դ. վերջերին տեսել ու համառոտ նկարագրել է Մակար Բարխուդարյանը¹⁸⁸:

Երկրորդ մատյանը Բեգյունց Ավետարանի մագաղաթյա թերթերն են: Ավետարանի գրության թվականը հայտնի չէ: Գրվել է 10-11-րդ դարերում, գրիչը Ստեփանոսն է, որը կատարել է նաև ավետարանիչների պատկերները և լուսանցազարդերը: 1060 թ. Ավետարանը Կանչնուտ անապատում նորոգվել և լրացվել է հայտնի գրիչ և նկարիչ Հովհաննես Սանդղկավանեցու ձեռքով (նկար 95)¹⁸⁹: Ավետարանը 1243 թ. մոնղոլական զորքի կազմում՝ Ռումի սուլթանության դեմ արշավանքի մասնակից, Մեծկվենքի տեր Ուզի որդի Հասանի ձեռքով փրկվել ու Կեսարիայից Արցախ է բերվել: Երկար ժամանակ այն գտնվել է Ջրաբերդի Թալիշ գյուղում՝ Բեգյունց ընտանիքի մոտ, որի պատճառով էլ ստացել է Բեգյունց Ավետարան անունը¹⁹⁰: Այս երբեմնի գեղեցկագիր մատյանից մնացել է 18 թերթ: Այդ վիճակով այն այժմ պահվում է Մատենադարանում և կրում է ՄՄ 10099 թվահամարը:



95

Ծանոթագրություններ

182 **Յ. Աճառեան**, Յուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի, էջ 81:
 183 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 43, Յ. Ոսկեան, Արցախի վանքերը, էջ 126-127:
 184 **Գ. Յովսեփեան**, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 106-108:
 185 **Գ. Յովսեփյան**, Իզնատիոս մանրանկարիչ և Շոռթկանց տոհմը (Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983), էջ 234-250: Կ. Մաթևոսյան, Անի, էջ 282:
 186 Չայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 195:

187 Նույն տեղում, էջ 267: 188 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 220-221:
 188 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 220-221:
 189 Չայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 100: Նկարչի և նրա ձեռագրերի մասին տես **Ա. Մաթևոսյան**, Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողու Ավետարանը»), «Բանբեր Մատենադարանի», N 10, Երևան, 1971, էջ 379-400:
 190 Չայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 426: **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 226:





ԳՏՉԱՎԱՆՔ

Գատմական Դիզակ գավառը կազմավորվել է 16-րդ դարավերջին՝ Աշխարհացույցի Մյուս Հաբանդ գավառի հարավային մասում: Դիզակում են գտնվում

իշխանանիստ Գորոզ ամրոցը, Գտիչ բերդը, մելիքանիստ Տող ավանը, Տունի գյուղը: Դիզակում էր իշխում Գտիչի Եսայի Աբու Մուսեի (825-855) ժառանգներից սերող Առանշահիկ իշխանական տոհմի մի ճյուղը: Իշխանական այդ տոհմն իր գոյությունը պահեց մինչև 1271 թվականը, իսկ 16-րդ դարի վերջից դարձավ Դիզակի մելիքության տերը:

Դիզակի եկեղեցական կենտրոնն է Գտչավանքը (աղբյուրներում կոչվում է նաև Քթիչ կամ Քթիստ վանք), որը հիմնադրվել է վաղ միջնադարում, իբրև եպիսկոպոսանիստ՝ հիշատակվում է 5-րդ դարից, իսկ 8-րդ դարից համանուն բերդի հետ Առանշահիկ իշխանական տոհմի Դիզակի ճյուղի հովանավորության տակ էր: Ըստ Մովսես Կաղանկատվացու՝ 8-րդ դարում Պարտավի եկեղեցական ժողովին մասնակցել է նաև Գտչավանքի տանուտերը¹⁹¹: Հետագայում եղել է Ամարասի եպիսկոպոսական վիճակի կազմում (*նկար 96*):

Վանքից վերև կառուցված բերդն Արցախի հնագույն և հզոր բերդերից մեկն էր: 9-րդ դարում արաբ Բուղա ոստիկանը պաշարում է բերդում ամրացված հայոց Եսայի Աբու Մուսե իշխանին, պահանջում իջնել Քթիչի լեռներից և հանձնվել: Երկար դիմադրությունից հետո Բուղան ստիպված հաշտություն է կնքում: Պահպանվել է Բուղային ուղղված՝ Եսայի իշխանի նամակը, որն Ասատուր Մնացականյանը համարում է 9-րդ դարից մեզ հասած գրականության ամենաուշագրավ նմուշներից մեկը¹⁹²:

Գտչավանքի վանական համալիրը բաղկացած է միմյանց կից միանավ և գմբեթավոր եկեղեցիներից, գավթից և բնակելի սենյակներից: Ամարասի Սարգիս և Վրթանես վանական եղբայրները 1241-1248 թթ. կառուցում են գլխավոր եկեղեցին, որը հաստատվում է վանքի հյուսիսային պատի արձանագրությամբ, որտեղ նշված են նաև վանքին արված բազմաթիվ նվիրատվություններ¹⁹³: Գտչավանքը 15-րդ դարում արդեն հայտնի մշակութային կենտրոն էր: Այն առավել նշանավորվեց 17-18-րդ դարերում՝ մելիք Եզանի իշխանության տարիներին:

Այս վանքից պահպանված մատյանները սակավաթիվ են, որոնք հիմնականում գործնական նպատակներով և ծիսական արարողությունների համար գրված մատյաններ են՝ Ավետարաններ, Մաշտոց, Շարակնոց: Այս գավառից մեզ հասած ձեռագրերը գրվել ու նկարագրվել են, ինչպես նաև պահպանվել են հիմնականում

Գտչավանքում, սակավ թվով՝ Հաղորոթի շրջանի Թաղասեռ, Շախկախ, Դիզափայտ, Տող և Թաղար գյուղերում:

Դիզակի գավառում ձեռագրերի մասին վկայող ամենավաղ տեղեկությունները 1428 թվականից են: Այժմ կորած մի ձեռագրի պահպանված հիշատակարանից տեղեկանում ենք, որ Ամարասի եպիսկոպոս Մանուել գրիչը Գտչավանքում ընդօրինակում է մի Ավետարան՝ Ասադի որդի Մելքիսեդ արեղայի խնդրանքով՝ 1428 թվին՝ «ձեռամբ մեղապարտ գրչի Մանուելայ ի վիճակս Ամարասայ ի վանքս Քթիսոյ»¹⁹⁴:

Մանուել գրչին հանդիպում ենք դարձյալ 1428 թվականին՝ Ամարասի շրջանի Շուշու գյուղում Ավետարան ընդօրինակելիս, որը, բարեբախտաբար, հասել է մեր օրերը, ունի չորս ավետարանիչների պատկերները: Հիշատակարանում գրչության վայրի մասին ասվում է՝ «ի յաշխարհիս Աղուանից ի վիճակս Ամարասայ ի գեղս Շուշու կոչեցեալ ընդ հովանեաւ Ս(ուր)բ Ա(ստուա)ծածնի» (ՄՄ 8211, էջ 359բ-360ա) (նկար 97):




1464 թ. Վայոց ձորի Երերան վանքում (Հերիեր) մահտեսի Մուրատի և նրա կնոջ՝ Դիլշատի խնդրանքով Մաղաքիա կրոնավոր գրիչը օրինակել է Ավետարան (ՄՄ 3701): Ստացողի անունից գրիչը հիշատակարանում խնդրում է հիշել Մուրատին, նրա ծնողներին, եղբորը և քրոջը: Ձեռագիրն ընծայվել է Գտչավանքին:

Վարանդայի Ռմավանս անապատում Ջաքարիա արեղայի գրչագրած Ավետարանն (ՄՄ 9792) Ալեքսիանոս արքեպիսկոպոսը 1477 թ. փոխադրում է Գտչավանք (նկար 98): Այստեղ գրել է տալիս հիշատակարանը՝ խնդրելով հիշել իր ծնողներին ու

մյուս արյունակից հարազատներին, ինչպես նաև ուսուցչին՝ Ամարասի Մանուել եպիսկոպոսին և նորաբողբոջ քահանա Գրիգորիսին: Ալեքսիանոսը մեծ ցավ է ապրում երկրում տիրող ծանր իրավիճակի համար և խնդրում է չմոռանալ նաև իրեն ու իր եղբորը, որ Գտչավանքի միաբաններ են: Հիշատակարանում նշում է՝ «միաբանեցաք եւ եկաք ի Քրիշոյ վանքս, զի թուրք ազգս բազմացեալ է, եւ հայս՝ նուազեալ, եւ չարիքն՝ շատացեալ, եւ մեր յոյսն Քրիստոս է»¹⁹⁵:

Ալեքսիանոս արքեպիսկոպոսի հիշատակարանը պարունակում է պատմական փաստեր նաև Վրաստանի վերաբերյալ: Իբրև ականատես՝ հիշատակագիրը դառնացած է այդ խռովահույզ ժամանակի իրականությունից, թե ինչպիսի մեծ կորուստներ ունեցավ Հայաստանի հարևան երկիրը, որոնց պատճառը Ռուզուն Հասանի գործած ավերածություններն էին:



97


Պետրոս կրոնավորը 1575 թվականին՝ Գտչավանքի վանահայրը Գալուս եպիսկոպոսի առաջնորդության տարիների «Դիզակի երկրի Պայկայթաղ գիւղի Քրիշու վանքի Սբ. Աստուածածին եկեղեցում» Մաշտոց է ընդօրինակել (ՄՄ 6834): Ձեռագրի ստացողն է Բեկին, որը հիշատակարանում նշում է իր կենդանի ու հանգուցյալ բազմաթիվ մերձավորների անունները:

1653-1675 թվականներին Գտչավանքի միաբան է եղել Աղվանից կաթողիկոս Պետրոս Խանձբեցու եղբայր Մատթեոս քահանան, որի համար 1668 թ. մի Ավետարան է ընդօրինակվել¹⁹⁶:

Գտչավանքում է ապրել ու գործել Առաքել Կոստանյանցը, որը 1853 թ. նշանակվել է վանքի վանահայր և երկար տարիներ զբաղվել վանքի բարեկարգման հարցերով, ինչպես նաև հայոց լեզու և կրոն է դասավանդել, գրել է պատմություններ, որոնք, բարեբախտաբար, հասել են մեզ¹⁹⁷: Մատենադարանի երկու ձեռագիր (ՄՄ 7822 և 7823) Առաքել վարդապետի «Պատմութիւն Արցախի» աշխատության երկու հատորներն են, որոնք հեղինակը գրել է 1858-1880 թվականներին և նվիրել իր հոգևոր ծնող Հակոբ վարդապետի հիշատակին: Հեղինակն իր մատյանում արժեքավոր աշխարհագրական տեղեկություններ է հաղորդում Արցախի, հատկապես՝ Դիզակի մելիքության պատմությունից: «Պատմութիւն Արցախի» երկն իրենից ներկայացնում է Արցախի մասին աշխարհագրական մի ինքնատիպ ձեռնարկ և աղբյուր է հանդիսացել Րաֆֆու «Խանսայի մելիքությունները» աշխատության համար:

1884 թ. Առաքել Կոստանյանցը գրում է Գտչավանքի պատմությունը (ՄՄ 3966)¹⁹⁸: Ինչպես հիշատակարանում խոստովանում է հեղինակը, այս երկը լրացումն է

96 Գտչավանք (լուսանկարը՝ Զրայր Բազկի, 2015 թ.)
97 Իշատակարանի հատված՝ գրված 1428 թ. Ամարասի Շուշու գյուղում, գրիչ՝ Մանուել (ՄՄ 8211, էջ 359բ-360ա)



98

նախորդ երկու հատորների: Ձեռագիրը կարևոր սկզբնաղբյուր է և հավաստի տեղեկություններ է հաղորդում վանքի միաբանության կյանքի մասին: Հեղինակը ներկայացնում է իրեն նախորդած վանահայրերին¹⁹⁹, միաժամանակ տեղեկություններ է հաղորդում Գտչավանքի հողային սեփականության սահմանների վերաբերյալ, որը հաստատվում է վանքի կալվածքների մասին 1856 թ. դեկտեմբերի 1-ին Ղարաբաղի կոնսիստորիային ուղղված տեղեկագրով²⁰⁰: Տեղեկություններ ենք ստանում նաև Սելիք-Եզանյանների մահմեդականացված ճյուղի մասին²⁰¹: Հեղինակը հաղորդում է նաև ինքնակենսագրական տեղեկություններ:

98 Մի էջ Վարանդայի Ոմավանս անապատում գրված և 1477 թ.-ից Գտչավանքում պահված Ավետարանից, գրիչ՝ Ջաքարիա (US 9792, էջ 7բ)

Գտչավանքից մեզ հասած հաջորդ մատյանը դարձյալ Առաքել Կոստանյանցի գրչին պատկանող պատմական նյութերի ժողովածու է, գրվել է 1886-1888 թթ. (ՄՄ 3881): Այստեղ հեղինակը զետեղել է տարաբնույթ պատմական նյութեր, տալիս է նաև Մելիք-Շահնազարյան տոհմի ժամանակագրությունը, հաղորդում է, որ Մելիք Եսային սպանվել է 1781 թ. Շուշիի Իբրահիմ խանի կողմից:

Այսպիսով՝ Դիզակ գավառի ձեռագրական ժառանգության մեջ նշանակալից տեղ են գրավում Գտչավանքում գրված կամ այս կենտրոնին առնչվող ձեռագրերը:

Ծանոթագրություններ

- | | |
|---|--|
| <p>191 Մովսէս Կաղանկատուացի, էջ 372:</p> <p>192 Աս. Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, Երևան, 1966, էջ 181-182:</p> <p>193 Դիվան, պրակ V, էջ 183:</p> <p>194 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, էջ 385:</p> <p>195 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 460:</p> <p>195 Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 460:</p> <p>196 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 270:</p> <p>197 ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթ. 168, վավ. 41:</p> | <p>198 Բնագիրը ընդարձակ առաջաբանով հրատարակել է Արտակ Մաղալյանը: Ա. Մաղալյան, Առաքել Կոստանյանցի «Պատմութիւն Գտչայ վանուց» աշխատությունը, «Բանբեր Մատենադարանի», N 18, Երևան, 2008, էջ 283-304:</p> <p>199 Առաքել Կոստանյանցը նշում է, որ Գտչավանքի վանահայրն է եղել Մելիք Եզանի հայր Ղուկաս վարդապետը, որին հաջորդել է Մեսրոպ եպիսկոպոսը: Նա առաջնորդ է նշանակվել Մելիք Եզանի կողմից 1723 թվականին և շուրջ 25 տարի ղեկավարել վանքի միաբանությունը: Նրանից հետո վանքի առաջնորդ է նշանակվում նրա որդի Սիմեոն եպիսկոպոսը: Վերջինիս էլ հաջորդել է Զովհաննես վարդապետը: Ապա պատմագիրը ներկայացնում է տեր Սիմեոն եպիսկոպոսի և Զովհաննես վարդապետի վանահայրության տարիների իրադարձությունները:</p> <p>200 ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթ. 182, վավ. 449:</p> <p>201 Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, Գիրք 2, Երևան, 1973, էջ 364:</p> |
|---|--|





ՇՈՒՇԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՊԼՔՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ

18

- թղ դարից սկսած վերելք է ապրել Վարանդա գավառում գտնվող Շուշին, որն իր բնական անառիկ դիրքի շնորհիվ ռազմական հենակետ էր, հայկական զինուժի գորակայան, կամ ինչպես այն ժամանակ էին անվանում՝ սղնախ: 1724 թ. Ավան հարյուրապետն այն ամրացնում է պարիսպներով, որի շնորհիվ շուտով Շուշին վերածվում է բերդաքաղաքի, իսկ 19-րդ դարից դառնում է Այսրկովկասի հայության նշանավոր մշակութային կենտրոններից մեկը: Բնակավայրը եղել է նաև ռազմաքաղաքական իրադարձությունների թատերաբեմ, որին չենք անդրադառնում:

Ծաղկման շրջանում Շուշիում գործում էին մի շարք եկեղեցիներ՝ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ, Ագուլեցոց Ս. Աստվածածին, Մեղրեցոց Ս. Աստվածածին, Ներքին թաղի Ս. Աստվածածին, Նոր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ)²⁰², Ջրաբերդոցոց թաղի և Կուսանաց անապատը: Շուշիի եկեղեցիների երկանվանության մասին կարևոր տեղեկություն է հաղորդում Մակար եպիսկոպոս Բարխուդարյանը՝ գրելով, որ հայ բնակչությունը «հաւաքուած է քաղաքս՝ չորս տեղերից, որոնք են՝ Ղազանչի, Ագուլիս, Մեղրի եւ Արցախի գիւղերն, վասն որոյ եկեղեցիք, բացի իւրեանց օծման անուններից, սովորաբար ունին եւ երկրորդական անուններ, որոնք նախապատիւ տեղ բռնած են՝ Ղազանչեցոց եկեղեցի, Ագուլեցոց եկեղեցի, Մեղրեցոց եկեղեցի, եւ Նոր եկեղեցի, եւ Անապատ կուսանաց»²⁰³:

19-րդ դարում Շուշիում գործում էին կրթական կենտրոններ՝ Հայոց թեմական դպրոցը (1838), Մարիամյան օրիորդաց դպրոցը (1864), Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը (1876), Գայանե Դանիելյանի երկսեռ դպրոցը (1881), «Մարիամ-Ղուկասյան» օրիորդաց արքունական գիմնազիան (1913), Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցու արական դպրոցը (1873), «Թաղևոսյան» արական դպրոցը (1895), Ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցու երկսեռ դպրոցը (1908), Քաղաքային ուսումնարանը (1875), Ռեալական ուսումնարանը (1881), Մարինսկու ռուսական իգական դպրոցը (19-րդ դարի վերջ): 1830-ականներին տպարանը գնում է Բաղդասար մետրոպոլիտ ՀասանՋալալյանը և անվանում «Հայոց հոգեւոր տեսչութեան տպարան»: 1881 թ. Շուշիում բացվում է Միրզաջան Մահտեսի Հակոբյանցի տպարանը, 1905 թ.՝ Բագրատ Տեր-Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները: Շուշին նաև հայկական տպագրության խոշոր կենտրոն էր, տարածաշրջանում երրորդը՝ Սուրբ Էջմիածնից և Թիֆլիսից հետո: 1827 թ. Բագելի քարոզչական ընկերությունը Շուշիում բացում է առաջին տպարանը: 1828 թ. այստեղ հրատարակվում է մետրոպատառ առաջին գիրքը՝ «Պատմութիւն Սուրբ Գրոց» վերնագրով: 1830-ականներին տպարանը գնում է Բաղ-



դասար մետրոպոլիտ Հասան Ջալալյանը և անվանում «Հայոց հոգեւոր տեսչութեան տպարան»: 1881 թ. Շուշիում բացվում է Միրզաջան Մահտեսի Հակոբյանցի տպարանը, 1905 թ.՝ Բագրատ Տեր-Սահակյանի և Մելքոն Բաբաջանյանի տպարանները: Շուշիի տպարաններում հրատարակվել են կրոնական, բարոյական, ուսումնական, գիտական, պատմական և գեղարվեստական բնույթի 170 անուն գիրք և 28 անուն թերթ ու պարբերական, որից 25-ը հայերեն, 3-ը՝ ռուսերեն: Պարբերականներից հատկապես հայտնի են եղել «Մուրճ», «Փորձ», «Արաքս», «Տարագ», «Հանդես գրական եւ պատմական» հրատարակությունները:

Վերադառնալով մեր բուն նյութին՝ նշենք, որ Շուշիից տասնինը ձեռագիր մատյան է հասել, որոնք գրվել են 18-19-րդ դարերում: Դրանցից վաղագույնը 1791-1792 թթ. գրված Ժողովածու է (ՄՄ 7428, գրիչ՝ Միքայել Աստապատեցի): Մյուս ձեռագրերը հիմնականում բառարաններ են, կրոնական, փիլիսոփայական, բարոյագիտական, տոմարական, բժշկական նյութերի ժողովածուներ և այլն, բոլորն էլ այժմ պահվում են Մատենադարանում²⁰⁴:

Բավական թվով ձեռագրեր պահվել են Շուշիի եկեղեցիներում: Արժեքավոր հավաքածու ուներ քաղաքի ամենամեծ ու փառահեղ Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին (*նկար 99*): Այդ ձեռագրերից մեկը (ՄՄ 9431) ստեղծվել է Վայոց ձորի Հերմոնի վանքում, որտեղ 1338-1356 թթ. գործել էր Գլաձորից այստեղ տեղափոխված համալսարանը: Եսայի անունով գրչի ընդօրինակած և ծաղկած մագաղաթյա Ավետարանը ստեղծվել է 1473 թ., զարդարված է չորս ավետարանիչների պատկերներով և համապատասխան անվանաթերթերով: Դրանք ցույց են տալիս, որ այս նշանավոր վանքում 15-րդ դարի վերջերին դեռ պահպանվում էին վայոցձորյան ծաղկուն գրքարվեստի ավանդները (նկար 100, 101):

Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցում են եղել Նիկողայոս գրչի 1658 թվականին ստույգ և ընտիր օրինակից Կաֆայում գրված և ճաշակով նկարազարդված մագաղաթյա Ավետարանը²⁰⁵, Վարդանի 1460 թվականին Վանում օրինակած Ավետարանը²⁰⁶: 1656 թվականին Կոստանդնուպոլսում Ղազար գրչի օրինակած տասնմեկ նրբաճաշակ և ընտիր պատկերներով մագաղաթյա Ավետարանը Ամենափրկիչ եկեղեցում ստացել է Ղուկասը²⁰⁷: Այս և ստորև թվարկվող ձեռագրերը ժամանակին տեսել և համառոտ նկարագրել է Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցը և դրանք հրատարակել 1895 թ. լույս տեսած իր «Արցախ» գրքում, բայց դրանց մեծ մասի գտնվելու վայրն այժմ անհայտ է²⁰⁸: Ղազանչեցոց եկեղեցում նա նշում է 12 մատյան:

Ագուլեցոց Ս. Աստվածածին եկեղեցում Մակար Բարխուդարյանցը նշում է 5 մատյան: Դրանք են 1645 թ. Տավուշի Թովուզ գյուղում Սարուխանի խնդրանքով Եսայի գրչի օրինակած Ավետարանը²⁰⁹, Չարեքա անապատի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսի աշակերտ Սարգիս կրոնավորի 1641 թ. նորոգած Ավետարանը²¹⁰, Գանձակի մոտ գտնվող Քարահատում Բարսեղ քահանայի 1680 թ. ընդօրինակած Ավետարանը²¹¹, 1308 թ. Ասպիսնկայում Ղազարի օրինակած Ավետարանը, որ հետո նկարազարդել է Ծերուն ծաղկողը, և նորոգել՝ վերջին ստացող Կիրակոս քահանան²¹²:

Մեղրեցոց Ս. Աստվածածին եկեղեցում պահվել է 4 մատյան. 1414 թ. Վանա լճի Կոուց կղզու անապատում Հովսեփ քահանայի ձեռքով ընդօրինակված Ավետարանը, 1473 թ. մոկացի հայտնի գրիչ Իսրայելի օրինակած Ավետարանը, 1778 թ.՝ տեր Մեսրոպի գրած, ավելի ուշ՝ Հակոբի ձեռքով նորոգված Ավետարանը, և փոքրադիր մի Ավետարան, որ պատվիրել է Մարիամը Հովհաննես արեղային²¹³:

99 Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին (*լուսանկարը՝ Կարեն Մաթևոսյանի, 2017 թ.*)




100

Շուշիի Նոր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն (Կանաչ ժամ) շուշեցի Ավագ Դանիելյան-Ղազարյանը նվիրել է Գեղվաձորի Կից գյուղում ընդօրինակված մագաղաթյա մի Ավետարան²¹⁴:

Վերը նշված ձեռագրերի վերաբերյալ մենք տեղեկություններ ունենք ժամանակին արտագրված և հրատարակված՝ դրանց հիշատակարանների միջոցով, սակայն, մեծագույն մասի ճակատագիրն անհայտ է: Յավոք, նկատի ունենալով 1920 թ. քաղաքում ծավալված հրեշավոր իրադարձությունները՝ աղբյուրանցիների կողմից հայ բնակչության կոտորածը և գույքի կողոպուտն ու ոչնչացումը, կարելի է ենթադրել, որ այդ մատյանների մեծ մասն այժմ գոյություն չունեն:

100 Մատթեոսի ավետարանի անվանաթերթը, գրիչ-ծաղկող՝ Եսայի, 1473 թ., Չերմոնի վանք (ՄՄ 9431, էջ 8ա)

101 Հովհաննեսի ավետարանի անվանաթերթը, գրիչ-ծաղկող՝ Եսայի, 1473 թ., Չերմոնի վանք (ՄՄ 9431, էջ 263ա)



101

Ծանոթագրություններ

- 202 Այս եկեղեցին աղբյուրաբանական իշխանությունների կողմից հիմնահատակ ավերվել է 2024 թ.: Այս մասին կարելի է կարդալ monumentwatch.org կայքում:
- 203 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 138:
- 204 ժողովածու, 1822 թ., գրիչ՝ Մեսրոպ Թաղիադեանց (ՄՍ 8212), ժողովածու, 1828 թ. (ՄՍ 3351), Պատմութիւն Սուրբ Գրոց, 1828 թ., գրիչ-թարգմանիչ՝ Յարութիւն Դաւթեան Ջուղայեցի (ՄՍ 9275), ժողովածու, 1831 թ., գրիչ՝ Գրիգոր Տեր-Աւագեան Նախիջեւանցի (ՄՍ 2835), Ռիջինալդ Պաղեստին, 1833 թ. (ՄՍ 3690), ժողովածու, 1840 թ., գրիչ՝ Մովսէս (ՄՍ 10166), Աղօթագիրք, 1841 թ.-ից առաջ, գրիչ՝ Մովսէս, ստացող՝ Յակոբ Մահտեսի (ՄՍ 10160), Պօղոս Ներսիսեան, Քերականութիւն, 1842 թ., գրիչ՝ հեղինակը (ՄՍ 9688), Յարութիւն Ալամդարեանց, Զամառօս բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ, 1846 թ., գրիչ՝ Յովհաննէս Մախնուրեանց (ՄՍ 10106), Դուրան, 1848 թ., գրիչ՝ Մնացական Յովհաննիսեան Յարութիւնեան (ՄՍ 2968), Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից, 1848 թ., գրիչ՝ Ներսէս Տեր-Բարսեղեան Արովեանց Օծնեցի (ՄՍ 8035), Յարութիւն Մելքոնեանց, Սրբազան պատմութիւն Զին եւ Նոր օրինաց, 1851 թ., գրիչ՝ հեղինակը (ՄՍ 9133), Յարութիւն Մելքոնեանց, Քերականութիւն Զայկազեան լեզուի, 1851 թ., գրիչ՝ հեղինակը (ՄՍ 9132), Բառգիրք Զայկազեան լեզուի, 1852 թ.-ից առաջ, գրիչ՝ տիրացու Նահապետ Յովհաննիսեան (ՄՍ 9349), ժողովածու, 1804-1856 թթ., վայր՝ Կապադովկիա, Շուշի, Կ. Պօլիս, գրիչ՝ Գրիգոր Կոստանդ-

- նուպոլսեցի, Յովսէփ Արցախեցի, Յովհաննէս Թազուրեան, Աբէլ Մխիթարեանց, Գրիգոր Շաքարճեան, ստացող՝ Մատթէոս վրդ., Բաղդասար Ջալալեան, Թաղէոս Միհրդատեանց, Դաթէոս աղա (ՄՍ 2622), ժողովածու, 1863 թ.-ից առաջ (ՄՍ 3869), ժողովածու, 1868 թ., գրիչ՝ Անդրէաս Մուսայլեան Շուշեցի (ՄՍ 10107), Յովսէփ Փինաչեանց, Քնար սրտի, 1883 թ., գրիչ՝ հեղինակը (ՄՍ 3038):
- 205 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 139:
- 206 Զայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Բ, էջ 146:
- 207 Զայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Գ, էջ 701:
- 208 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 139-150:
- 209 Զայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԵ դ., հ. Գ, էջ 181-182:
- 210 Նույն տեղում, էջ 47:
- 211 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 144:
- 212 Զայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1950, էջ 57:
- 213 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 147-148:
- 214 Նույն տեղում, էջ 147:



ԵՐԿՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ, ԵՐԿՈՒ ՉԱԿԱՏԱԳԻՐ



այերեն ձեռագրերից շատերի պատմությունը կամ ճակատագիրը՝ ստեղծման պահից սկսած և մինչև մեր օրերը, երբեմն ողիսական է հիշեցնում: Եթե ձե-

ռագրերի գլխավոր հիշատակարանները կարելի է համարել նրանց ծննդյան վկայականները, որոնցում նշվում են գրչության տեղը, վայրը, գրչի ու ստացողի անունները (հաճախ նաև՝ այլ տվյալներ), ապա հետագայի հիշատակարանները մատյանների կենսագրության էջերն ու հանգրվաններն են, որտեղից կարելի է տեղեկություններ իմանալ, թե մատյանները երբ և որ վայրերում են պահվել, ինչ մարդկանց միջավայրում, երբ և ում ձեռքով են նորոգվել, վերստին կազմվել, եթե գողացվել կամ գերեվարվել են, ում միջոցով են փրկագնվել և այլն: Վերևում մենք արդեն ծանոթացանք մի շարք նման մատյանների՝ տեսնելով, թե ինչպես են տարբեր ճանապարհներով հասել Արցախ և այնտեղից՝ նոր ժամանակներում հանգրվանել ձեռագրական տարբեր հավաքածուներում, մեծ մասամբ՝ Մատենադարանում:

Ստորև կանդրադառնանք ևս երկու նման ձեռագիր, որոնք պատմական և մշակութային առումով մեծ արժեք են ներկայացնում:

Արցախի հնագույն բնակավայրերից է Գարդման գավառի Մեծ Բանանց գյուղը, որի մերձակայքում պահպանված դամբարանաբլուրների պեղումները վկայում են, որ տեղանքը բնակեցված է եղել նախապատմական ժամանակներից²¹⁵: Գյուղում մի շարք ձեռագրերի պահպանման մասին վկայություններ կան դեռ 16-17-րդ դարերից, իսկ 19-րդ դարի վերջերին Ս. Լուսավորիչ եկեղեցում դրանց թիվը հասել է 13-ի՝ բոլորն էլ Ավետարաններ, որոնք այդ ժամանակ տեսել ու համառոտ նկարագրել է Մակար Բարխուդարյանցը²¹⁶:


Այդ մատյանների թվում է եղել հայ ձեռագրական ժառանգության ամենաարժեքավոր մատյաններից մեկը՝ հնագրական տվյալներից դատելով՝ հնությանը մինչև 7-րդ դար հասնող բոլորագիծ երկաթագրով գրված Ավետարանը, որը 1625 թ. հիշատակարանում «Ծեր Ավետարան» է կոչվում²¹⁷ (ՄՄ 10680): Ցավոք, մատյանը գլխավոր հիշատակարան չունի (ձեռագրից թերթեր են պակասում), ուստի անհայտ են ձեռագրի գրիչը, գրչության վայրն ու ստույգ ժամանակը: Ըստ վաղագույն հետազայի հիշատակարանի՝ 13-րդ դարի վերջերին Ավետարանը պահվել է Հավուց թառի վանքում (գտնվում է Գառնիի և Գեղարդի միջև՝ Ազատ գետի ձախ կողմում): Հատկապես 11-րդ դարի սկզբներին բռուն ծաղկման հասած այս վանքը եղել է նաև գրչության կենտրոն²¹⁸:

Հարկ է նշել, որ Հավուց թառը Հայաստանի հնագույն վանքերից է, որի հիմնադրումը եկեղեցական ավանդույթը կապում է Սուրբ Սահակ Պարթև (348-439) կաթողիկոսի և Սուրբ Մեսրոպ Մաշտոցի (360-440) անվան հետ: Ըստ 14-րդ դարի մի հիշատակարանի՝ վանքի հիմնադրումը տեղի է ունեցել 426 թ. Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի ձեռամբ²¹⁹: Վանքի՝ այդքան վաղ հիմնադրման մասին կան նաև այլ վկայություններ, որոնցում նշվում է, թե Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցն, այս կողմերում հաստատվելով, զբաղվել են թարգմանություններով²²⁰:

Այս տվյալները վկայակոչում ենք, քանի որ հավանական ենք համարում վերոնշյալ հնագույն Ավետարանի՝ հենց Հավուց թառում ստեղծված լինելը: 1294 թ. ձեռագիրը ձեռք է բերել ոմն Ամենավագը, որի վերաբերյալ պահպանվել է երկու հիշատակարան: Առաջինը գրել է կազմող Գևորգը. «Աստուած ողորմի կազմողի սուրայ Գե(ո)րգայ եւ իւր ծնողացն, ամէն: Ի թուականութիւնս Հայոց ՉԽԳ (1294) զպատուական քահանայէ զԱմենաւագ, որ հալալ վաստակոց իւրոց ըստացաւ սայ յիշատակ իւր եւ ծնողաց»²²¹: Սա նշանակում է, որ Ամենավագը ձեռագիրը գնելուց առաջ այն կազմել է տվել, հավանաբար՝ հին կազմի խիստ մաշվածության պատճառով:


Երկրորդ հիշատակարանն արդեն Ամենավագինն է, որտեղ ասվում է. «Ես անարժան եւ մեղուցեալ սուտանուն կոչեցեալ Ամենաւագ, ի հալալ արդեանց իմոց գնեցի զսուրբ զԱւետարանս, ի գաւառէն Գառնու, ի վանացն Հաւու Թառու, ի բարեխաւսութիւն ինձ եւ ծնողաց իմոց»²²²: Ինչպես տեսնում ենք, ստացողը հստակ նշում է, որ ձեռագիրը գնել է Հավուց թառի վանքից, այսինքն՝ այն վանքի սեփականությունն է եղել, որը վաճառել են, հավանաբար, նյութական դժվարությունների պատճառով:

Ձեռագրի հաջորդ հանգրվանների մասին են վկայում հետագայի մյուս հիշատակարանները: 15-րդ դարում Ավետարանը պահվել է Մաքենյաց վանքում (գտնվում է Սևանա լճի արևելյան կողմում), իսկ 16-րդ դարից սկսած՝ Մեծ Բանանց գյուղում: Այստեղ արդեն երկու անգամ նորոգված մատյանը (1453 թ. և 1511 թ.) 1625 թ. երրորդ անգամ գյուղացիների միջոցներով նորոգել է Հովհաննես երեց Շատախեցին: Այդ մասին վկայող հիշատակարանում ասվում է, որ ջերմեռեադ սրտով և փափագով «նորոգիլ տուին Պանանցա ժողովուրդն եւ քահանայքն, մեծ եւ փոքր, յիշատակ իւրեանց եւ ննջեցելոցն, բարեխաւս լինի ի հող տապանին, Սուրբ Աւետարանս աւզնական եւ պահապան լինին Պանանցա»²²³: Ավետարանի կազմը զարդարված է կենտրոնական մեծ խաչով՝ ընդելուզված հինգ կիսաթանկարժեք քարերով, տասնինը մետաղական փոքր խաչերով և զամերով (*նկար 102*):



102

Բանանցի բնակիչները մատյանը «Պահապան» կամ «Բանանցի Ավետարան» են անվանել: Նրանց համոզմամբ՝ Ավետարանն ունեցել է բուժիչ ուժ, և դրա միջոցով հիվանդներ են ապաքինվել: Ավելի ուշ մատյանը տարվել է Գանձակի Ս. Գրիգոր եկեղեցի, որտեղից էլ Հայ եկեղեցու Աղբրեջանի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս



Տեղյանը բերել է Ս. Էջմիածին և նվիրել Ամենայն Հայոց հայրապետ Վազգեն Ա-ին: Վազգեն Վեհափառը, մեծապես արժևորելով Ավետարանը, 1975 թ. հուլիսի 25-ին այն նվիրում է Մատենադարանին՝ ի հիշատակ իր մոր՝ 1974 թ. մահացած Սիրանուշ Պալճյանի, որի համար մատյանն ստանում է «Վեհամոր Ավետարան» անունը²²⁴:

1991 թ., երբ Հայաստանում անկախության վերականգնումից հետո պետք է տեղի ունենար հանրապետության առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի երդմնակալությունը, Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերից՝ որպես հնագույն և նշանավոր, հենց Վեհամոր Ավետարանն է ընտրվել: Այս Ավետարանի վրա են երգվել նաև ՀՀ հաջորդ նախագահները:

Վեհամոր Ավետարանի մասին հարկ է ավելացնել, որ այն համարվում է ամբողջությամբ պահպանված ամենաախին հայկական ձեռագիրը, ունի հնագրական առանձ-

102 Վեհամոր Ավետարանի (Բանանցի Ծեր Ավետարանի) կազմը (ՍՄ 10680)

103 Բոլորագիծ երկաթագիր գրչության նմուշ Վեհամոր Ավետարանից (ՍՄ 10680, էջ 198բ)

նահատկություններ: Պարզվել է, որ ձեռագիրը գրվել է երկու գրչի կողմից՝ տարբեր ձեռագրերով (առաջինը՝ էջ 1-121, երկրորդը՝ էջ 122-256): Թեև մատյանը չունի պատկերային հարդարանք, սակայն վաղ շրջանի վիմագրերից ու հնագույն ձեռագրական պատառիկներից հայտնի տառաձևերով կատարված՝ նրա երկաթագիր գրչությունն ինքնին տպավորիչ է (*նկար 103*):

Հաջորդ Ավետարանը 13-րդ դարից է, ստեղծվել է Կիլիկյան Հայաստանում որպես արքունական մատյան, հետագայում թափառումների երկար ճանապարհ է անցել՝ որոշ ժամանակ հանգրվանելով նաև Արցախ-Ուտիքում:

Հայկական ձեռագրական ժառանգության մեջ փոքրաթիվ, սակայն չափազանց արժեքավոր մի խումբ են կազմում թագավորական կամ արքունական ձեռագրերը²²⁵: Այդպիսի մի նմուշ է Մատենադարանում 6764 թվահամարի տակ պահվող Ավետարանը՝ գրված 1283 թ. Կիլիկիայի նշանավոր Սկևռայի վանքում, Ստեփանոս գրչի ձեռքով: Ձեռագրի պատվիրատուն էր Լևոն Գ (II) (1269-1289) թագավորի կինը՝ Կեռան թագուհին:

Ընդհանրապես, Կիլիկիայի Հայոց արքունիքում ընդունված սովորություն էր ձեռագիր պատվիրելը: 1262 թվին Լևոնն իր և Լամբրոնի իշխանադուստր Կեռանի պատկառության առիթով պատվիրում է Ավետարան ժամանակի ամենանշանավոր վարպետին՝ Թորոս Ռոսլինին, որը մատյանում պատկերում է նաև նրանց դիմանկարները: Իսկ 1272 թվին Կեռանն իրենց ամուսնության տասնամյակը նշանավորում է մեկ այլ Ավետարան պատվիրելով՝ դարձյալ ամուսինների դիմանկարով, միայն թե այստեղ նրանք պատկերված են իրենց հինգ զավակների հետ: Այս երկու մեծարժեք ձեռագրերն էլ այժմ պահվում են Երուսաղեմի Հայոց Ս. Հակոբյանց վանքի ձեռագրատանը (ձեռ. 2660, 2563):


Կեռանի պատվիրած հաջորդ մատյանը Մատենադարանում գտնվող՝ վերը նշված Ավետարանն է, որի գրության շարժառիթը Հեթում արքայորդու «ձիավարության» աստիճանի (զինվորական պահվի) արժանանալն էր: Այս մասին Ստեփանոս գրիչը ձեռագրի հիշատակարանում հայտնում է. «Արդ, գրեցաւ... ի թուականիս Հայոց ՉԼԲ (1283)... յորում ամի բարենշան եւ բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաորութեան աստիճան ընկալաւ... Յիշեսջիք զստացաւ սորին զբարեպաշտ թագուհին Կեռան»²²⁶:

Քանի որ Երուսաղեմում պահվող ձեռագրերից մեկը (1272 թ. Ավետարանը) արդեն կոչվում է Կեռան թագուհու Ավետարան²²⁷, ապա մեր մատյանը նրանից զանազանելու համար նպատակահարմար է կոչել Կեռանի և Հեթումի Ավետարան՝ նկատի ունենալով պատվիրատուի և ձեռագիրը ստացող արքայորդու անունները:

Ավետարանը գրված է նուրբ մագաղաթի վրա, ունի 270 թերթ, գրչությունը՝ բոլորագիր: Նկարազարդումն ամբողջական չի պահպանվել: Ձեռագրի սկզբնական նկարազարդումից մնացել են միայն երկու խորան, անվանաթերթերն ու լուսանցազարդերը՝ նկարված հայ մանրանկարչության կիլիկյան դպրոցի ավանդներով (*նկար 104*):

Ձեռագրում ավետարանիչների պատկերները (Մատթեոս՝ 7բ, Մարկոս՝ 79բ, Ղուկաս՝ 126բ, Հովհաննես և Պրոխորոս՝ 203բ) նկարվել են հետագայում: Այն, որ ավետարանիչների նկարներն ստեղծվել են ավելի ուշ, երևում է ոչ միայն խորանների ու անվանաթերթերի հետ դրանց ունեցած ոճական ու գունաչափի տարբերությունից, այլև՝ այն բանից, որ ձեռագրի երկրորդ կազմման ժամանակ թերթերը վերևից բավա-

104 Խորան, Կեռանի և Հեթումի Ավետարան, 1283 թ. (ՄՄ 6764, էջ 5բ)



ԱՅՏՈՒՄԻՆ՝ ԱՅՏՈՒՄԻՆ՝ ԶՈՒՄՈՒ
 ԶՈՒՄՈՒՄԻՆ՝ ԱՅՏՈՒՄԻՆ՝ ԱՅՏՈՒՄԻՆ՝

ԱՅՏՈՒՄ Ա	ԱՅՏՈՒՄ ԱՅՏՈՒՄ	ԱՅՏՈՒՄ ԱՅՏՈՒՄ	ԱՅՏՈՒՄ ԱՅՏՈՒՄ	ԱՅՏՈՒՄ ԱՅՏՈՒՄ
Ա Լ ԱՅՏ	ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	Լ Գ Ե Զ	Ճ Դ Ե Զ	ԱՅՏ
ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	Ճ Դ Ե Զ	Դ Ե Զ Է	Ճ Դ Ե Զ	ԱՅՏ
ԱՅՏ Ճ	ԱՅՏ Դ	Ե Զ Է	Ճ Դ Ե Զ	ԱՅՏ
Ճ Դ Ե Զ	Ճ Դ Ե Զ	Դ Ե Զ Է	ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	Դ
Ճ Դ Ե Զ	Ճ Դ Ե Զ	Դ Ե Զ Է	ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	ԱՅՏ
Ճ Դ Ե Զ	ԱՅՏ ԱՅՏ	Ճ Դ Ե Զ	ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	ԱՅՏ
Ճ Դ Ե Զ	ԱՅՏ ԱՅՏ	Ճ Դ Ե Զ	ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	ԱՅՏ
Ճ Դ Ե Զ	ԱՅՏ ԱՅՏ	Ճ Դ Ե Զ	ԱՅՏ ԱՅՏ ԱՅՏ	ԱՅՏ



105

կան խորքից են կտրել, որի պատճառով վնասվել են գլխազարդերի վերնամասերը (նկար 105), մինչդեռ ավետարանիչների պատկերների վերնամասերն անվնաս են (աննշան կտրվածք է եղել ավելի ուշ շրջանի կազմման հետևանքով):

Թե երբ է Հեթում արքայորդուն (որը հետո թագավորեց) պատկանած մատյանը դուրս եկել Կիլիկյայի սահմաններից, դժվար է ասել: Ենթադրելի է, որ դա տեղի է ունեցել նրա մահից (1307 թ.) հետո: Համենայն դեպս, ձեռագրի ժամանակագրորեն հաջորդ հիշատակարանը գրվել է Անիում՝ 1357 թ. (հիշատակարանին կանդրադառնանք քիչ հետո): Մակայն մինչև Անի հասնելը, ձեռագրում արդեն ավելացված են եղել չորս ավետարանիչների պատկերները, որոնց ոճական առանձնահատկությունները հուշում են դրանց ստեղծման վայրի մասին, որը Վայոց ձորն է, կամ ավելի ճիշտ՝ այդ գավառում գործող Գլաձորի համալսարանը:

Հարկ է նշել, որ ինչպես Արցախում, այնպես էլ նրան սահմանակից Սյունիքում մոնղոլական տիրապետության շրջանում տեղի հայ իշխանները, որոնք Օրբելյաններն ու Խաղբակյաններն էին, ընդունել էին նվաճողների գերիշխանությունը, իրենց գորախմբերով մասնակցում էին նրանց արշավանքներին, որի շնորհիվ իրենց տիրույթները գերծ էին պահել ավերածությունից, ավելին, բարգավաճման նպաստավոր պայմաններ ապահովել: Այս պայմաններում էր ստեղծվել Գլաձորի համալսարանը, որը գործել է 1282-1338 թթ., և միջնադարյան Հայաստանի կրթական, գիտական, մշակութային ամենաշանավոր կենտրոններից էր: Այնտեղ ուսանելու համար շատերն էին գալիս նաև Կիլիկյայից, այդ թվում՝ նկարիչներ (ինչպես Պողոս և Վարդան Կիլիկեցիները), իրենց հետ բերելով այնտեղ ստեղծված պատկերազարդ մատյաններ: Դրա շնորհիվ Գլաձորում ձևավորվեց մանրանկարչական մի ոճ, որտեղ համատեղվում էին տեղական և կիլիկյան հայ մանրանկարչության ավանդույթները: Այս ուղղության ակնառու կրողն էր մանրանկարիչ Թորոս Տարոնացին, մասամբ նաև՝ գրիչ, մանրանկար-

105 Հովհաննու ավետարանի անվանաթերթի գլխազարդը, Կեռանի և Հեթումի Ավետարան, 1283 թ. (ՍՍ 6764, էջ 204ա)


րիչ, ճարտարապետ և քանդակագործ Մոմիկը (մահ. 1333 թ.)²²⁸: Վերջինիս նկարազարդած գույգ Ավետարաններում (1292 և 1302 թթ.) ավետարանիչների պատկերները հորինվածքով ու ոճով զգալի նմանություն ունեն Կեռանի և Հեթումի Ավետարանի ավետարանիչների նկարների հետ: Հայ արվեստաբանության մեջ վաղուց է նկատվել այդ նմանությունը (Ա. Ավետիսյան, Ս. Տեր-Ներսեսյան, Ս. Մանուկյան)²²⁹: Մանրամասների մեջ չմտնելով՝ նշենք, որ, ցավոք, համապատասխան հիշատակարանի բացակայությունը թույլ չի տալիս հստակ պատկերացում կազմելու, թե ինչպես կարող էր Կեռանի և Հեթումի Ավետարանը հայտնվել Գլաձորում կամ Մոմիկի մոտ (Նորավանքում), սակայն սա այն դեպքերից է, երբ հարկադրված ենք ապավինել միայն արվեստաբանական տվյալներին: Իսկ դրանք համոզում են, որ մեր մատյանի ավետարանիչների նկարները պատկանում են Մոմիկի վրձնին: Այս հանգամանքը մի լրացուցիչ արժեք է տալիս սույն մատյանին, որպես ոչ միայն արքունական Ավետարան, այլև՝ հայ միջնադարյան արվեստի ամենահայտնի վարպետներից մեկի ստեղծագործություններն իր մեջ ամփոփող ձեռագիր: Կարծում ենք, որ առաջիկայում Մոմիկի արվեստին նվիրված հետազոտություններում այդ չորս պատկերները (որոնք բոլորը միասին այստեղ առաջին անգամ են ներկայացվում գունավոր վերատպուրյամբ) ավելի մեծ ուշադրության կարժանանան (*նկար 106, 107, 108, 109*):

Վերադառնանք Ավետարանի ճակատագրին, որն, ինչպես նշվեց, 1357 թ. Անիում էր: Այստեղ Ներսես գրչի (իրեն կոչում է քարտուղար) գրած երեք էջ զբաղեցնող (էջ 264ա-265ա) և պատմական արժեք ներկայացնող հիշատակարանը վկայում է, որ անեցի պարոն Ասիլն ու նրա կին Ընուզ խաթունը «հրաշափառ Ավետարանը» նորոգել ու նվիրել են Անիի Ս. Առաքելոց եկեղեցուն: Հիշատակարանը կարևոր տեղեկություններ է պարունակում Անիի կացության՝ ասպատակիչների՝ 1350-ական թթ. կեսերի քաղաք ներխուժման, Շահնշահ Գ իշխանի մագապործ փախուստի մասին և այլն (այս տեղեկությունը հայտնի է միայն սույն հիշատակարանի շնորհիվ): Նշվում է նաև, որ Ասիլը, լինելով Չաքարյան իշխանների իրավասու պաշտոնյան՝ «իրաւարար եւ արդարադատ ամենայն քաղաքին», այստեղ ծավալել է որոշ շինարարական գործեր²³⁰: Նկատենք, որ Անիի՝ 14-րդ դարի կեսերի մասին տեղեկությունները խիստ սակավաթիվ են, քանի որ դա երբեմնի ծաղկուն քաղաքի մայրամուտի ժամանակաշրջանն էր: Հասկանալի է, որ Կեռանի և Հեթումի Ավետարանը երկար ժամանակ չէր կարող մնալ այստեղ:

Ձեռագրի 5ա էջի համառոտ հիշատակարանը, որ հավանաբար 15-րդ դարից է, վկայում է՝ «...Սիմեոն սրբասէր արեղաս փակակալ Սուրբ Կարապետին սպասատր... ետ վերստին կազմել զսուրբ Աւետարանս...»: Թե որ վանքի մասին է խոսքը, դժվար է ստույգ ասել, բայց սովորաբար առանց որոշակի տեղեկությունների՝ միայն վանքի անվամբ, հիշվում էին առավել նշանավոր վանքերը (հատկապես՝ Մշո Ս. Կարապետը, երբեմն՝ Հովհաննավանքը և այլն):

Ավետարանի 6բ-7ա էջերում թերի պահպանված մի հիշատակարանում նշվում է, որ մատյանը գերեվարված («գերեցուցած») է եղել Ուղե բնակավայրում (Չավախք), և 1563 թ. պարոն Փարցման անունով մեկն այն փրկագնել ու նվիրել է Սիմեոն արքեպիսկոպոսին, որը կոչվում է «Սամցխու թեմին հովիւ եւ առաջնորդ»:


Ձեռագրի անցած ուղու ամենահուզիչ հատվածը ներկայացնում է Օգսենդ անունով մեկի 1626 թ. հիշատակարանը (էջ 126ա), որը չի կարող անտարբեր թողնել ընթերցողին: Ինչպիսի դժվարություններ ու զրկանքներ է տեսել այդ մարդը, թվում է՝



106



107




108



109

կորցրել է ամեն ինչ, բայց պահել, փրկել է «վերջին հիշատակ» սուրբ Ավետարանը: Օգսենդի հիշատակարանը մեկնաբանությունների կարիք չունի, ավելի լավ է ընթերցել այն. «Յիշեցէք զանարժան սուկանուն Արսէնդիս սուտանուն: Վերջին յիշատակ է սուրբ Աւետարանս, յիշատակ ինձ եւ ծնաւոյաց իմոց... եւ եղբարն իմոյ, եւ կողակցին իմոյ... եւ որդոցն իմոյ...: Եւ ով որ կարդայ, կամ տեսանէք (սուրբ Աւետարանս), լիակատար սրտիւ որդրմի ասացէք սոցա հոգուն... որ վիշ դառն ժամանակ պահեցի ի հարամէ՝ ի տաճկէ. Լ (30) տարի սար ու ձոր մաշեցայ, կին ու որդիս կորուցի, զայս սուրբ Աւետարանս պահեցի» (նկար 110):



110

Ժամանակագրական առումով հաջորդ հիշատակարանը 18-րդ դարից է: Մատյանի 4ա և 266բ էջերում նշվում է, որ 1740 թվին Հակոբի որդի Հովակիմը Ավետարանը նվիրել է Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին: Հիշատակարանում նշվածը, հավանաբար, Արաքսի աջ ափին գտնվող Ս. Ստեփանոս Նախավկայի վանքն է (այժմ՝ Իրանի տարածքում):

Եվս վեց տասնամյակ, և Կեռանի ու Հեթումի Ավետարանը հնամյա Գողթնից անցնում է պատմական Ուտիք՝ Գանձակ: Ձեռագրի 268ա էջում ոմն Հարություն Երեմյան նշում է, որ Ավետարանը 1807 թվին նվիրում է «ի դուռն Սուրբ Յոհաննէս ի հնոյ կառուցեալ եկեղեցուն... Ելիսաբեթայօլ քաղաքիս» (էջ 268ա): Հիշատակագիրը հայտնում է, որ տասը տարի պանդխտության մեջ է եղել, բայց ոչ մի տեղ հաջողություն ու հոգևոր անդորր չի գտել: Վերադառնալով հայրենի երկրամաս՝ նա Ս. Հովհաննէսին է նվիրել մեծագին ձեռագիրը՝ ուխտելով մեկընդմիջտ կապվել հարազատ հող ու ջրին: Այդուհետև Ավետարանը հարյուր տարուց ավելի ապահովաբար պահվել է Գանձակում: Մակար եպիսկոպոս Բարխուդարյանցն իր «Արցախ» գրքում տեղի եկեղեցական զանձերն ու սրբությունները նկարագրելիս նշում է այս Ավետարանն ու Կեռանի հիշատակարանից մի հատված է մեջբերում:

Արքունական մատյանի շուրջ վեց դար տևած դեգերումներն ավարտվում են Հայոց նոր մայրաքաղաքում: 1920-ական թթ. ձեռագիրը Գանձակի Ս. Լուսավորիչ եկեղեցուց բերվում է Սուրբ Էջմիածին, իսկ որոշ ժամանակ անց՝ Երևան: Այսօր Կեռանի և Հեթումի Ավետարանը մեկն է Մատենադարանի 11 365 հայերեն ձեռագրերից, որոնցից յուրաքանչյուրի ճակատագիրը դեգերումների ու տառապանքի, հույսի ու հավատի, Հայոց գոյամարտի մի բյուրեղացած պատում է, հայ ժողովրդի պատմության անբաժան մասը:

- 106 Մատթեոս ավետարանիչ, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՍՍ 6764, էջ 7բ)
- 107 Մարկոս ավետարանիչ, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՍՍ 6764, էջ 79բ)
- 108 Ղուկաս ավետարանիչ, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՍՍ 6764, էջ 126բ)
- 109 Հովհաննէս ավետարանիչ և Պրոխորոն, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՍՍ 6764, էջ 203բ)
- 110 Օգսենդի 1626 թ. հիշատակարանի հատված, Կեռանի և Հեթումի Ավետարան (ՍՍ 6764, էջ 126ա)

Ծանոթագրություններ

- 215 Գերմանացի հնագետ Էմիլ Ռյոսլերը 1889 թ. այստեղ կատարել է առաջին հնագիտական հետազոտությունները: Դամբարանաբլուրների պեղումների արդյունքները ցույց են տվել, որ գերեզմանները պատկանում են բրոնզե դարից երկաթե դարին անցնելու ժամանակաշրջանին: Տե՛ս Ա. Կարապետյան, Յուսիսային Արցախ, Երևան, 2004, էջ 139:
- 216 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 279-284, **Օ. Եգանեան**, Աշխատութիւններ, էջ 76, Թ. Մինասյան, Արցախի գրչության կենտրոնները, էջ 69, 74:
- 217 **Մ. Բարխուդարեանց**, Արցախ, էջ 279:
- 218 **Կ. Մաթևոսյան**, Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 13-44:
- 219 «Շինեացաւ սուրբ եւ հռչակաւոր բազմաժողով մեծ մենար[ան]ն Հայոց Թառի սուրբ թարքմանչացն՝ ի Սահակ հայրապետ Հայոց եւ ի Մեսրոպ վարդապետ Դճ եւ ԻԳ (426) ամի ծնընդեանն Քրիստոսի, ի թագաւորութեանն Հայոց Վռանշապ[ի]ոյ, ի թագաւորութեան Հռոմոց Արկաղէոսի եւ Ոմերիոսի, եւ ի պատրիարգութեան Յոհաննու Ոսկեբերանի» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 351):
- 220 **Կ. Մաթևոսյան**, Հավուց թառի վանքը, էջ 8-12: Վանքի անվան մեջ «հավ» բառը կիրառում է պապ, նախահայր նշանակությամբ («Հաւ – Նախահայր, պապ, հայր հօրն կամ մօրն... նախնիք», տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Բ, Վենետիկ, 1837, էջ 71), որով «Հավուց թառը» ստուգաբանվում է Պապոնց կամ Մեծ հայրերի, այսինքն՝ Սահակի և Մեսրոպի օրևան:
- 221 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 741:
- 222 Ձեռագրի մի քանի թերթեր, որոնք անջատված են եղել նրանից, հայտնաբերվել են Մատենադարանի մեկ այլ ձեռագրում (ՄՄ 10668), և հիշատակարաններն այդ թերթերի վրա են: Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 741, Ա. Մաթևոսյանի ծանոթագրությունը:
- 223 Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ, Կ. Բ, կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1978, էջ 186:
- 224 **Ա. Մաթևոսյան**, Վեհափառական երկու Ավետարան, «Էջմիածին», Թ-Ժ, 1994, էջ 32-34: Կարծում ենք, որ այս Ավետարանի համար պետք է պահպանվի նաև ավանդական «Բանանցի Ծեր Ավետարան» անունը:
- 225 Այս մասին տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Հայ թագավորների ու թագուհիների ձեռագիր մատյանները, «Գարուն», 1990, N 11-12, էջ 114-116:
- 226 Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 538:
- 227 Տե՛ս **Է. Չուգասյան**, Կեռան թագուհու Ավետարանը, Երևան, 2024:
- 228 Արվեստագետի մասին տե՛ս **Կ. Մաթևոսյան**, Մոմիկ, Երևան, 2010:
- 229 Արամ Ավետիսյանը Գլաձորի մանրանկարչությանը նվիրված գրքում, ավետարանիչների պատկերների նմանությունը նկատի ունենալով, ողջ մատյանը վերագրել է Մոմիկին՝ միաժամանակ կարծելով, թե նա 1283 թ. ողջ ձեռագիրը նկարագրող է Կիլիկիայում (Ա. Ավետիսյան, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971, էջ 50-51, 75-79): Սեյրանուշ Մանուկյանը հստակ ցույց է տալիս, որ ձեռագրում ավետարանիչների պատկերները նկարվել են ավելի ուշ: Նա նշում է, որ ձեռագիրը «հայտնվել էր Գլաձորում... որի ավետարանիչների դիմանկարները, ըստ երևույթին, ավելացրել է Մոմիկը կամ իր արվեստին շատ հարազատ մի նկարիչ» (**Ս. Մանուկյան**, Անվանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրերում, Մոմիկ-750 հոբելյանական գիտաժողովի (15 հոկտ. 2010) զեկուցումների ժողովածու, Երևան, 2011, էջ 55):
- 230 Հիշատակարանի ամբողջական հրատարակությունը տե՛ս **Կ. Մաթևոսյան**, 14-րդ դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 3, էջ 108-114:



Լուսանկարը՝ Սյակա Սարգսյանի



ՊԱՏԿԵՐԱՑԱՆԿ

1. Թարթառ գետի աջակողմյան անտառածածկ լեռնալանջը և Խաղավանքը (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)
2. Խաղավանքի եկեղեցին և զանգակատունը հյուսիս-արևմուտքից (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2016 թ.)
3. Խաղավանքի եկեղեցու գմբեթը ներսից (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)
4. Մարկոս ավետարանչի խորհրդանիշ առյուծի քանդակը եկեղեցու հարավարևմտյան սյան խարսխին (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2016 թ.)
5. Խաչքարեր եկեղեցու և զանգակատան միջև (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2016 թ.)
6. Խաղավանքում ձեռագրեր հավաքելու մասին 1204 թ. արձանագրությունը (այժմ՝ Մաշտոցի անվ. Մատենադարանի ցուցասրահ)
7. Հաղբատի Ավետարանի 1223 թ. հիշատակարանի հատված՝ ձեռագիրը Մեծկողմանց եպիսկոպոսարանին նվիրաբերման մասին (ՄՄ 6288, էջ 359ա)
8. Հաղբատի Ավետարանը՝ Արցախում պատրաստված կազմով
9. Հաղբատի Ավետարանի խորան՝ Շերանիկի պատկերով, նկարիչ Մարգարե, 1211 թ., Անի (ՄՄ 6288, էջ 8բ)
10. Մուտք Երուսաղեմ, Հաղբատի Ավետարան, նկարիչ՝ Մարգարե, 1211 թ., Անի (ՄՄ 6288, էջ 16բ)
11. Ձեռագրի էջ՝ Տյառնընդառաջի շեղադիր մանրանկարով, Վեհափառի Ավետարան, 10-րդ դ. (ՄՄ 10780, էջ 136ա)
12. Ձեռագրի պատվիրատուն և նրա ազգականները, Վեհափառի Ավետարան, 10-րդ դ. (ՄՄ 10780, էջ 136ա)
13. Ընծայական, Հռոմկլայի Ավետարան, նկարիչ՝ Կոզմա, 1166 թ., Հռոմկլա (ՄՄ 7347, էջ 11բ)
14. Խորաններ, Հռոմկլայի Ավետարան, նկարիչ՝ Կոզմա, 1166 թ., Հռոմկլա (ՄՄ 7347, էջ 9բ-10ա)
15. Գրիգոր Դոփյանի հիշատակարանի հատված, որտեղ գրված է Կարևո քաղաքից Խաղավանք ձեռագրեր բերելու մասին (ՄՄ 7347, էջ 342բ)
16. Մատթեոսի ավետարանի անվանաթերթը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր ծաղկող (1232 թ.), ավետարանչի խորհրդանիշը լրացնող՝ Գրիգոր Արցախեցի (13051311 թթ.), ՄՄ 2743, էջ 12ա
17. Հովհաննեսի ավետարանի անվանաթերթը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր ծաղկող (1232 թ.), ավետարանչի խորհրդանիշը լրացնող՝ Գրիգոր Արցախեցի (13051311 թթ.), ՄՄ 2743, էջ 12ա
18. Հովհաննես ավետարանիչ և Պրոխորոն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 295բ
19. Ավետում, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 188բ
20. Ծնունդ, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 15ա

21. Սկրտություն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 20ա
22. Վերջին ընթրիք, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի, (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 170ա
23. Գժոխքի ավերումը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 184ա
24. Հարություն, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 114ա
25. Աստվածամոր նինջը, Թարգմանչաց Ավետարան, Գրիգոր Արցախեցի (1305-1311 թթ.), ՄՄ 2743, էջ 294ա
26. Հրեշտակները Դաղիվանքի որմնանկարում (1297 թ.) և պատկերման նույն սկզբունքով դիմապատկերներ Թարգմանչաց Ավետարանում (1305-1311 թթ.)
27. Դաղիվանքը հյուսիս-արևելքից (լուսանկարը՝ Արա Ջարյանի, 2015 թ.)
28. Դաղիվանքի Կաթողիկե եկեղեցին, 1214 թ. (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2017 թ.)
29. Վանքի ընդհանուր տեսարանը (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2007 թ.)
30. Բազիլիկը առաջին պլանում (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)
31. Ջանգակատունը, Կաթողիկե եկեղեցին և փոքր գմբեթավոր եկեղեցին (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)
32. Դաղիվանքի մեծ խաչքարերը, 1283 թ. (լուսանկարը՝ Կարեն Գաբրիելյանի, 2018 թ.)
33. Կաթողիկե եկեղեցու հյուսիսային փակված մուտքը (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2017 թ.)
34. Արզու Խաթունի որդիների՝ Հասանի ու Գրիգորի քանդակները, 1214 թ. (լուսանկարը՝ Կարեն Մաթևոսյանի, 2017 թ.)
35. Արզու Խաթունի ամուսին Վախթանգի և Սուրբ Դաղիի քանդակները, 2014 թ. (լուսանկարը՝ «Դաղիվանք» գրքից)
36. Սուրբ Նիկողայոս Սքանչելագործի՝ հայրապետական իշխանություն ստանալու վարքագրական պատկերը (լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի, 2017 թ.)
37. Սուրբ Մարիամ Աստվածածին (որմնանկարի հատված)
38. Դաղիվանքի որմնանկարի՝ 1297 թվականը կրող ներկագիր արձանագրությունը (լուսանկարը՝ Արա Ջարյանի, 2016 թ.)
39. Սուրբ Ստեփանոս Նախավկայի քարկոծման տեսարանը (լուսանկարը՝ Արա Ջարյանի, 2016 թ.)
40. Հրեշտակների խումբը (որմնանկարի հատված)
41. Գրչության նմուշ, գրիչ՝ Վառվառե (ՄՄ 2067, էջ 109ա)
42. Դաղիվանքում գրված հիշատակարան, գրիչ՝ Բարսեղ, 1684 թ. (ՄՄ 7232, էջ 322ա)
- 43-44. Խորաններ, Ավետարան, նկարիչ՝ Բարսեղ, 1684 թ., Դաղիվանք (ՄՄ 7232, էջ 10բ-11ա)
- 45-46. Հովհաննես ավետարանիչ և Պրոխորոն, Հովհաննու ավետարանի անվանաթերթը, Ավետարան, նկարիչ՝ Բարսեղ, 1684 թ., Դաղիվանք (ՄՄ 7232, էջ 248բ-249ա)
- 47-53. Տերունական պատկերներ՝ Ավետում (էջ 162բ), Հրեշտակի հայտնությունը Հովսեփին (Փախուստ Եգիպտոս) (էջ 19ա), Պայծառակերպություն (էջ 60ա), Ղազարոսի հարությունը (էջ 286ա), Հաղորդություն (էջ 191բ), Համբարձում (էջ 246բ), Հոգեգալուստ (էջ 296ա), Ավետարան, նկարիչ՝ Բարսեղ, 1684 թ., Դաղիվանք (ՄՄ 7232)
54. Հիշատակարանի հատված՝ գրչության վայր Բարվաճառ գյուղի հիշատակությամբ, գրիչ՝ Թումա Սյունեցի, 1402 թ. (ՄՄ 3578, էջ 293բ)
55. Գանձասարի վանքը հարավից (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
56. Գանձասարի Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցին (1238 թ.) և գավիթը (1261 թ.) հյուսիս-արևելքից (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2016 թ.)

57. Գանձասարի եկեղեցին և զավիթը հարավից (լուսանկարը՝ Կարեն Մաթևոսյանի, 2017 թ.)
58. Շինարարական արձանագրության հատված (1240 թ.) (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
59. Համալիրը գավթի կողմից (լուսանկարը՝ Սասուն Դանիելյանի, 2016 թ.)
60. Գավթի շքամուտքը (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
61. Եկեղեցու գմբեթը արևմուտքից (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
62. Հասան Ջալալը եկեղեցու մանրակերտով (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
63. Վախտանգ Տանգիկը եկեղեցու մանրակերտով (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2019 թ.)
64. Խորիշահի և Մամբանի քանդակները՝ արծվակերպ հրեշտակների հետ (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
65. Ադամ և Եվա (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2019 թ.)
66. Խորիշահը և արծվակերպ հրեշտակը (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2019 թ.)
67. Եկեղեցու արևմտյան ճակատի հարդարանքը (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
68. Խաչելություն՝ եկեղեցաշինարարների քանդակներով (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2017 թ.)
69. Հովհաննեսի ավետարանի անվանաթերթը, Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարան (ՄՄ 378, էջ 259ա)
70. Աստվածածինը՝ Մանկան, Գաբրիել հրեշտակի և երկու ավետարանչի հետ, Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարան (ՄՄ 378, 5բ)
71. Խորան, Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարան (ՄՄ 378, էջ 1բ)
72. Հասան Ջալալի թռռ, Ումեկի որդի Վախթանգի դիմանկարը (ՄՄ 155, էջ 106բ)
73. Մատթեոս վարդապետի 1417 թ. հիշատակարանի հատված, որտեղ նշվում է գրչության վայր Գանձասարը (ՄՄ 8689, էջ 89բ)
74. Ղազար քահանայի՝ 1551 թ. Գանձասարում ընդօրինակած Ավետարանի հիշատակարանի հատված (ՄՄ 6513, էջ 280բ)
75. Ղուկաս ավետարանիչ (ՄՄ 6513, էջ 83բ)
76. 1275 թ. Գանձասարում գրված հիշատակարանի հատված, որտեղ ձեռագիրը կոչվում է Կարմիր Ավետարան (Չիկագո, ձեռ. 949, էջ 15բ)
77. Ավետում, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949, էջ 1բ)
78. Ծնունդ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949, էջ 3բ)
79. Մուտք Երուսաղեմ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949, էջ 6բ)
80. Մատթեոս ավետարանիչ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949)
81. Մարկոս ավետարանիչ, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949)
82. Մարկոսի ավետարանի անվանաթերթը, Գանձասարի Կարմիր Ավետարան, նկարիչ՝ Աբաս (Չիկագո, ձեռ. 949)
83. Քրիստոսի ազգաբանությունը՝ 1599 թ. Ավետարանից, մանրանկարիչ՝ Ջաքարիա Ավանցի, պահվել է Գանձասարում (ՄՄ 5794, էջ 24բ)
84. Հակոբավանքի ընդհանուր տեսքը հարավ-արևմուտքից (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2015 թ.)
85. Հակոբավանքի սյունասրահը (լուսանկարը՝ Ռուբեն Հովսեփյանի, 2021 թ.)
86. Տյառնընդառաջ, մանրանկարիչ՝ Ջաքարիա Ավանցի, 1594 թ. (ՄՄ 5507 էջ 3բ)
87. Դժոխքի ավերումը, մանրանկարիչ՝ Ջաքարիա Ավանցի, 1594 թ. (ՄՄ 5507 էջ 9ա)
88. Եղիշե առաքյալի վանքը (լուսանկարը՝ Սլավա Սարգսյանի, 2019 թ.)

89. Գավիթ մարգարե, Սաղմոսարան, 1576 թ., Եղիշե առաքյալի վանք, նկարիչ՝ Աթանաս (ՄՄ 1923, էջ 7բ)
90. Ջարդագիր և լուսանցազարդ, Սաղմոսարան, 1576 թ., Եղիշե առաքյալի վանք, նկարիչ՝ Աթանաս (ՄՄ 1923, էջ 110ա)
91. Երից մանկանց վանքը (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2015 թ.)
92. Հիշատակարանի հատված՝ գրված 1565 թ. Երից մանկանց վանքում, գրիչ՝ Աթանաս (ՄՄ 2928, էջ 226ա)
93. Ղուկաս ավետարանիչ, Ավետարան, 1565 թ., գրիչ-մանրանկարիչ՝ Աթանաս (ՄՄ 2928, էջ 109բ)
94. Խաչապատկեր Մեծշենի Կարմիր Ավետարանից, նկարիչ՝ Իգնատիոս (ՄՄ 6202, էջ 6բ)
95. Մատթեոս ավետարանիչ, Բեգյունց Ավետարան, 11-րդ դ., նկարիչ՝ Հովհաննես Սանդղկավանեցի (ՄՄ 10099, էջ 1ա)
96. Գտչավանք (լուսանկարը՝ Հրայր Բազեի, 2015 թ.)
97. Հիշատակարանի հատված՝ գրված 1428 թ. Ամարասի Շուշու գյուղում, գրիչ՝ Մանուել (ՄՄ 8211, էջ 359բ-360ա)
98. Մի էջ՝ Վարանդայի Ոմավանս անապատում գրված և 1477 թ.-ից Գտչավանքում պահված Ավետարանից, գրիչ՝ Ջաքարիա (ՄՄ 9792, էջ 7բ)
99. Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին (լուսանկարը՝ Կարեն Մաթևոսյանի, 2017 թ.)
100. Մատթեոսի ավետարանի անվանաթերթը, գրիչ-ծաղկող՝ Եսայի, 1473 թ., Հերմոնի վանք (ՄՄ 9431, էջ 8ա)
101. Հովհաննեսի ավետարանի անվանաթերթը, գրիչ-ծաղկող՝ Եսայի, 1473 թ., Հերմոնի վանք (ՄՄ 9431, էջ 263ա)
102. Վեհամոր Ավետարանի (Բանանցի Ծեր Ավետարանի) կազմը (ՄՄ 10680)
103. Բողոքագիծ երկաթագիր գրչության նմուշ Վեհամոր Ավետարանից (ՄՄ 10680, էջ 198բ)
104. Խորան, Կեռանի և Հեթումի Ավետարան, 1283 թ. (ՄՄ 6764, էջ 5բ)
105. Հովհաննու ավետարանի անվանաթերթի գլխազարդը, Կեռանի և Հեթումի Ավետարան, 1283 թ. (ՄՄ 6764, էջ 204ա)
106. Մատթեոս ավետարանիչ, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՄՄ 6764, էջ 7բ)
107. Մարկոս ավետարանիչ, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՄՄ 6764, էջ 79բ)
108. Ղուկաս ավետարանիչ, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՄՄ 6764, էջ 126բ)
109. Հովհաննես ավետարանիչ և Պրոխորոն, 14-րդ դ., Կեռանի և Հեթումի Ավետարան (ՄՄ 6764, էջ 203բ)
110. Օգսենդի 1626 թ. հիշատակարանի հատված, Կեռանի և Հեթումի Ավետարան (ՄՄ 6764, էջ 126ա)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Չեռագրեր

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան՝

38, 155, 217, 316, 378, 1078, 1136, 1301, 1626, 1923, 2067, 2776, 2277, 2399, 2519, 2525, 2561, 2563, 2622, 2743, 2776, 2828, 2835, 2968, 3446, 3601, 3038, 3196, 3351, 3578, 3592, 3616, 3618, 3619, 3620, 3647, 3690, 3701, 3780, 3829, 3881, 3966, 3971, 4004, 4023, 4038, 4051, 4053, 4048, 4176, 4185, 4383, 4477, 4820, 5507, 5669, 5794, 6202, 6288, 6306, 6319, 6513, 6764, 6834, 7232, 7347, 7347, 7482, 7821, 7822, 7823, 8035, 8124, 8125, 8211, 8212, 8245, 8504, 8505, 8689, 9133, 9132, 9150, 9275, 9349, 9431, 9688, 9792, 9923, 10099, 10106, 10107, 10166, 10668, 10680, 10780

Երուսաղեմի Հայոց պատրիարքարան՝ 81, 2208, 2273, 2660, 2563

Վենետիկի Մխիթարյան միաբանություն՝ 129

Չիկագոյի համալսարանի գրադարան՝ 949

Սկզբնաղբյուրներ

1. **Աճառեան Հ.**, Յուզակ հայերեն ձեռագրաց Թարիզի, Վիեննա, 1910: Առաքել Դարիժեցի, Գիրք պատմութեանց, Երևան, 1990:
2. **Գիրք քղթոց**, Տփլիս, 1901:
3. Դիվան հայ վիմագրության, Վայոց ձոր, պրակ III, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1967:
4. Դիվան հայ վիմագրության, Գեղարքունիք, Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ, պրակ IV, կազմեց՝ Ս. Բարխուդարյան, Երևան, 1973:
5. Դիվան հայ վիմագրության, Արցախ, պրակ V, կազմեց՝ **Ս. Բարխուդարյան**, Երևան, 1982:
6. Ժամանակագրութիւն Տեառն **Միխայէլի Ասորոց պատրիարգի**, յԵրուսաղեմ, 1871:
7. Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ՝ **Կ. Մելիք-Օհանջանյանի**, Երևան, 1961:
8. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դար, աշխատասիրութեամբ՝ **Ա. Մաքևոյանի**, Երևան, 1988:
9. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց՝ **Ա. Մաքևոյան**, Երևան, 1984:
10. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դ., կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1950:
11. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԴ դար, մասն Ա, կազմողներ՝ **Լ. Խաչիկյան, Ա. Մաքևոյան, Ա. Ղազարոյան**, Երևան, 2018:
12. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Ա, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1955:
13. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Բ, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1958:
14. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց՝ **Լ. Խաչիկյան**, Երևան, 1967:

15. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Ա, կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1974:
16. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Բ, կազմեցին՝ **Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան**, Երևան, 1978:
17. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց՝ **Վ. Հակոբյան**, Երևան, 1984:
18. Հայրեններ, աշխատասիրությամբ՝ **Աս. Մնացականյանի**, Երևան, 1995:
19. Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ **Օ. Եզանեան, Ա. Ջէյրունեան, Փ. Անթաթեան, Ա. Քէրշկերեան**, Երևան, 2004:
20. Մանր ժամանակագրություններ, կազմեց՝ **Վ. Հակոբյան**, հ. Բ, Երևան, 1956:
21. Մատենագիրք Հայոց, հ. Ի, **Մխիթար Գոշ**, գիրք Բ, Երևան, 2014:
22. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Կաթողիկոսական դիվան, թղթ. 168, վավ. 41, թղթ. 182, վավ. 449:
23. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից, Երևան, 1982:
24. **Մովսէս Կաղանկատուացի**, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխատասիրությամբ՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1983:
25. **Յովհաննէս Ղրիմեցի**, Պատմութիւն հռչակաւոր վանից Հաղբատայ Սուրբ նշանին, Վիեննա, 1965:
23. **Յովսէփեան Գ.**, Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951:
27. **Պողարեան Ն.**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Գ, Երուսաղէմ, 1968:
28. **Պողարեան Ն.**, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Է, Երուսաղէմ, 1974:
29. **Սարգիսեան Բ.**, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, հ. Ա, 1914:
30. **Ստեփանոս Օրբէլեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910:
31. Վազգեն Վեհափառի Ավետարանը, Ժ դար, նմանահանություն, (հնագրական և ձեռագրագիտական ուսումնասիրությունը՝ **Ա. Մաթևոսյանի**, մանրանկարչական ուսումնասիրությունը Տ. Իզմայլովայի) Երևան, 2000:
32. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԹ., Երևան, 2017:
33. **Տաշեան Յ.**, Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:
34. Տեառն **Մխիայելի պատրիարքի** Ասորոց Ժամանակագրութիւն, յԵրուսաղէմ, 1870:
35. Տեառն **Ներսէսի Շնորհալոյ** Բանք չափաւ, Վենետիկ, 1830:
36. Տեառն **Անանիայի հայոց կաթողիկոսի** Յաղագս ապստամբութեան տանն Աղուանից, «Արարատ», 1896, էջ 42:
37. Տետրակ համառօտ եւ լի իմաստնախոսի բանիք, արարեալ հոգելից եւ իմաստուն վարդապետի **Յօհաննիսի Երզնկացոյե** ի խնդրոյ զուարթամիտ պատանոյ Վաղթանգայ՝ կրտսեր որդոյ հռչակաւոր իշխանին Հայոց Ումէկայ, յամի տեառն 1284, Նոր-Նախիջևան, 1792:
38. Chronique de **Michael le Syrien**, Traduite en francais par J.-B. Shabot, Tom III, Paris, 1905.

Գրականություն

1. **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893:
2. **Ալիշան Ղ.**, Հայապատում. պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901: **Այվազյան Ս.**, Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Երևան, 2015:
3. **Աւգերեան Սկրտիչ**, Լիակատար վարք եւ վկայաբանութիւն սրբոց, հ. Թ, Վենետիկ, 1813:
4. **Ավետիսյան Ա.**, Հայկական մանրանկարչության Գլաձորի դպրոցը, Երևան, 1971:
5. **Ավետիսյան Ա.**, Մանրանկարիչ Ջաքարիա Ավանցի, Երևան, 2023:
6. **Ավետիսյան Թ., Հակոբյան Ջ.**, Գանձասարի վանքի Ս. Հովհաննես Սկրտիչ եկեղեցու քմբուկի քանդակային հարդարանքը (Ջ. Հակոբյան, Լ. Միքայելյան, Ա. Ասրյան, Թ. Ավետիսյան, Հայաստանի 12-14-րդ դդ. խոնարհված և քիչ ուսումնասիրված եկեղեցական կառույցների քանդակային հարդարանքը (մաս առաջին), Երևան, 2023:
7. **Բարխուդարեանց Մ.**, Պատմութիւն Աղուանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902:
8. **Բարխուդարեանց Մ.**, Աղուանից երկիր եւ դրացիք, Արցախ, Երևան, 1999:
9. **Բոզոյան Ա.**, Հայ-բյուզանդական եկեղեցական քանակցությունների վավերագրերը, Երևան, 1995:
10. **Եգանեան Օ.**, Աշխատութիւններ, Երևան, 2014:
11. **Թորամանյան Թ.**, Հայկական ճարտարապետության փոխազդեցության շուրջ, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հ. Բ, Երևան, 1948:
12. **Լեո**, Երկերի ժողովածու, հ. 3, Գիրք 2, Երևան, 1973:
13. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, 1999:
14. Կարապետյան Ս., Հյուսիսային Արցախ, Երևան, 2004:
15. Հակոբյան Հ., Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը XIII-XIV դդ., Երևան, 1989:
16. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998:
17. **Հասրաթյան Մ.**, Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան, 1992: **Հասրաթյան Մ.**, Խաղավանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 419:
18. **Հովսեփյան Գ.**, Իգնատիոս մանրանկարիչ և Շոռոթկանց տոհմը, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Ա, Երևան, 1983:
19. **Մաթևոսյան Ա.**, Գրիչ Հովհաննես Սանդղկավանեցի («Մողմու Ավետարանը»), «Բանբեր Մատենադարանի», N 10, Երևան, 1971, էջ 379-400:
20. **Մաթևոսյան Ա.**, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի», N 14, Երևան, 1984, էջ 106-134:
21. **Մաթևոսյան Ա.**, Թարգմանչաց Ավետարանը, «Էջմիածին», 1992, Թ-Ժ-ԺԱ, էջ 102-114, 1993, Ա-Բ-Գ, էջ 105-118:
22. **Մաթևոսյան Ա.**, Վեհափառական երկու Ավետարան, «Էջմիածին», Թ-Ժ, 1994, էջ 32-34:
23. **Մաթևոսյան Կ.**, Նկարիչ մարգարեի «Մուտք Երուսաղեմ» մանրանկարը, ՀՍՍՀ ԳԱ Լ-րաբեր հաս. գիտ., 1982, N 9, էջ 52-63:
24. **Մաթևոսյան Կ.**, Հայ թագավորների ու թագուհիների ձեռագիր մատյանները, «Գարուն», 1990, N 11-12, էջ 114-116:
25. **Մաթևոսյան Կ.**, 14-րդ դարի հիշատակարանները Անի քաղաքի և անեցիների մասին, Պատմա-բանասիրական հանդես, 1985, N 3, էջ 108-114:

26. **Մաթևոսյան Կ.**, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Էջմիածին, 1997:
27. **Մաթևոսյան Կ.**, Մոմիկ, Երևան, 2010:
28. **Մաթևոսյան Կ.**, Հաղբատի Ավետարանը, Երևան, 2012: Մաթևոսյան Կ., Հավուց թառի վանքը, Երևան, 2012:
29. **Մաթևոսյան Կ.**, Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը, Ս. Էջմիածին, 2013:
30. **Մաթևոսյան Կ.**, Նորավանքի վիմագրերը և հիշատակարանները, Երևան, 2017:
31. **Մաթևոսյան Կ.**, Հռոմկլան որպես Հայոց կաթողիկոսանիստ և տեղի ձեռագրերի հիշատակարանները (ԺԲ. դար), «Էջմիածին», 2023, N 8, էջ 42-68:
32. **Մաթևոսյան Կ., Ավետիսյան Ա., Զարյան Ա., Լամուրե Ք.**, Դաղիվանք. վերածնված հրաշալիք, Երևան, 2018:
33. **Մաղալյան Ա.**, Առաքել Կոստանյանցի «Պատմություն Գտչա վանուցե աշխատությունը»,
34. «Բանբեր Մատենադարանի», N 18, Երևան, 2008, էջ 283-304:
35. **Մանուկյան Ս.**, Անվանաթերթերը Մոմիկի ծաղկած ձեռագրերում, Մոմիկ-750 հոբելյանական գիտաժողովի (15 հոկտ. 2010) զեկուցումների ժողովածու, Երևան, 2011:
36. **Մինասյան Թ.**, Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015:
37. **Մինասյան Թ.**, Ուտիքի գրչության կենտրոնները, Երևան, 2020:
38. Սյրոտյան Շ., Լեռնային Գարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980:
39. **Մնացականյան Աս.**, Աղվանից աշխարհի գրականության հարցի շուրջ, Երևան, 1966:
40. **Մնացականյան Ստ.**, Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը IX-XIV դարերում, Երևան, 1976:
41. **Յովսէփեան Գ.**, Համառօտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911, 5Հ6:
42. **Յովսէփեան Գ.**, Հաղբատի դպրոցի մի գլուխգործոց (Գետաշենի Աւետարանը), Նիւթեր եւ ուսումնասիրություններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան, պր. Ա. Երուսաղէմ, 1935:
43. **Ոսկեան Հ.**, Արցախի վանքերը, Վիեննա, 1953:
44. **Չուգասյան Է.**, Կեռան թագուհու Ավետարանը, Երևան, 2024:
45. **Չուգասյան Լ.**, Գրիգոր ծաղկող, Երևան, 1986:
43. **Պետրոսյան Հ., Երանյան Ն.**, Արցախի կոթողային մշակույթը, Երևան, 2022:
47. **Սմբատեանց Մ.**, Տեղագիր Գեղարքունի Ծովագարդ գաւառի, որ այժմ Նոր Բայազետ գաւառ, Վաղարշապատ, 1896:
48. **Սմբատեանց Մեսրոպ արք.**, Նկարագիր Սր. Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից, Տիփլիս, 1904:
49. **Սոխակյան Ա.**, Հանրագիտակ Հայոց պատմության աղբյուրագիտության, Երևան, 2019:
50. **Սվազյան Հ.**, Հայ-աղվանական եկեղեցական հարաբերությունները 2-8-րդ դարերում, Ս. Էջմիածին, 2019:
51. **Տէր Մովսիսեան Մեսրոպ Մագիստրոս**, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի եւ Դաղի եկեղեցիները եւ վանական շինությունները, Երուսաղէմ, 1938:
52. **Ուլուբաբյան Բ.**, Խաչենի իշխանությունը X-XVI դդ, Երևան, 1975:
53. **Ուլուբաբյան Բ.**, Գանձասար, Երևան, 1981:
54. **Ուլուբաբեան Բ., Հասարթեան Մ.**, Խաղավանք-Խաթրավանք, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ժ., Բեյրութ, 1982-1984, էջ 21-50:
55. **Дурново Л.**, Очерки изобразительного искусства средневековой Армении, Ереван, 1979.

56. **Свирин А. Н.**, Миниатюра древней Армении, М., 1939.
57. **Лазарев В. Н.**, История византийской живописи, М. 1947.
58. **Якобсон А.**, Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский монастырь XIII в.). Исследования по истории культуры народов Востока, сборник в честь И. А. Орбели, М.-Л., 1960.
59. **Der Nersessian S.**, Armenian art, Paris, 1977.
60. **Gabrielyan V.**, Artskh the people and land of Kharabagh, Yerevan, 2011.
61. **Накобыан Н.**, Minasyan T., Torosyan V., Manuscript heritage of Artsakh and Utik, Yerevan, 2022.
62. **Melkonyan A.**, The literary heritage of the philosopher, theologian and philologist Hovsep' Arts'akhets'i (18th-19th centuries), "Das kulturelle Erbe von Arzach", Kiel University Publishing, 2024, pp. 511-524.
63. **Tumanyan L.**, Evangelization of the Apostles Yegisha and Dad in Artsakh and Utik according to the Armenian tradition, "Das kulturelle Erbe von Arzach", Kiel University Publishing, 2023, p. 143-156.





Karen Matevosyan
Tamara Minasyan

ARTSAKH

MONASTERIES, CHURCHES, AND MANUSCRIPTS

SUMMARY

The medieval period of Armenia's centuries-old history is extraordinarily rich in cultural heritage, architectural and artistic monuments, and manuscript culture. The Artsakh and Utik provinces in northeastern Armenia were among the most important centers for the creation of Armenian manuscripts.

This book presents Artsakh, with its monasteries and churches, as one of the major spiritual and cultural centers of the Armenian Middle Ages, inseparably connected with other regions of Armenia. In addition to the manuscripts created in Artsakh, due to the fact of being preserved in the monasteries and settlements of this region, which remained intact for centuries, the ancient complete Armenian manuscript Gospel of Catholicos' Mother (7th century) and a number of other valuable manuscripts, presented in this book, have reached our days.

Most of the manuscripts written in Artsakh or kept there for a long time are now preserved in the Mesrop Mashtots Matenadaran in Yerevan. In the last decade, several important books dedicated to the manuscript heritage of Artsakh and Utik (in Armenian, English, and French) have been published by the Matenadaran. In this new book, the materials from those publications were partially used, but they were supplemented and enriched with new historical and sourceological information, analyses related to the history of monasteries, as well as sculptures and wall paintings.

This book does not aim to present all the monasteries and churches of Artsakh. Instead, it focuses on those whose manuscript culture is well-documented and that hold significant historical and cultural interest.

Khadavank and its depository are featured separately in the book. Manuscript collection at Khadavank began in the early 13th century, a fact documented by an inscription. In 1223, a local priest purchased a Gospel dating back to 1211 in Ani and sent it to his native monastery. This manuscript is now known as the "Gospel of Haghbat" (Mat. MS 6288) and stands out as a masterpiece of miniature painting of Ani that has survived to the present day. It is interesting that Prince Grigor Dopyan of Artsakh, who acquiesced to Mongol dominance and joined their

campaigns with his army, rescued several valuable manuscripts and took them to Khadavank during the raids on Karin and Caesarea in 1242-1243. He recorded this act in the colophon of Mat. MS 7347, a manuscript dating back to 1166 and originating from

Hromkla, the seat of the Armenian Catholicos. It is from there that the earliest extant Gospel has come down to this day.

Dadivank flourished particularly during the 13th and 14th centuries, marked by the construction of magnificent churches. Among them, Katoghike (1214) stands out for its remarkable architecture, sculptural decorations, and frescoes. Additionally, Dadivank was a prolific center for manuscript production.

The Gandzasar Monastery holds exceptional cultural significance due to its rich history, architecture, and sculptures. The local church of St. John the Baptist was constructed by the great prince Hasan Jalal Dola in 1238, with its consecration occurring in 1240.

In the book, particular attention is given to the sculptures adorning the dome of the Gandzasar church. These sculptures depict Hasan-Jalal Dola and his father, Vakhtang, holding a model of the church above their heads, alongside the prince's mother, Khorishah, and his wife, Mamkan. This composition symbolizes the salvation of their souls.

Gandzasar is renowned for its manuscripts, notably the "Gospel of Vakhtang and Khorishah" (Mat. MS 378), created locally, and the "Red Gospel of Gandzasar," written in Ani.

In the book, Hakobavank (Monastery of Metsaran), Yeghishe Apostle Monastery, Yerits Mankants Monastery, Gtchavank, as well as Shushi, recognized as a place and cultural center for the preservation of Armenian manuscripts, are presented alongside a concise history of these monasteries and the manuscripts they housed. A separate section features two significant manuscripts: the "Gospel of Catholicos' Mother" (Mat. MS 10680), preserved in the village of Mets Banants, considered the oldest complete extant Armenian manuscript, and the Gospel commissioned by the Armenian queen of Cilicia, Keran, for her son Hethum (Mat. MS 6764).

Unfortunately, due to the tragic events of 2023, involving the deportation of the entire Armenian population from their ancestral home of Artsakh, many significant Armenian historical and cultural monumentsshvaluable not only to Armenians but also to world cultural heritagehare now under threat of existence.

Translated by Sona Baloyan

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 8 ՆԱԽԱԲԱՆ
 - 11 ԽԱԴԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ
 - 20 Հռոմկլայի հնագույն Ավետարանը Խադավանքում
 - 24 Գրիգոր Դոփյանի՝ Խադավանքի հիշատակարանը
 - 26 Թարգմանչաց Ավետարանի նկարավարումը Խադավանքում
 - 35 Ավնվականական պատվերով երկու հուշարձանների առնչության շուրջ

 - 39 ԴԱԴԻՎԱՆՔ
 - 42 Դադիվանքի եկեղեցիներն ու շինությունները
 - 50 Դադիվանքի որմնանկարը
 - 53 Դադիվանքի ձեռագրերը

 - 67 ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՁԵՌԱԳՐԵՐԸ
 - 73 Եկեղեցաշինարարների քանդակները Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում
 - 86 Վախթանգ Տանգիկի և Խորիշահի Ավետարանը
- 91 Գանձասարի Կարմիր Ավետարանը և այլ ձեռագրեր

- 103 ՀԱԿՈՐԱՎԱՆՔ
(ՄԵԾԱՐԱՆԻՑ ԿԱՄ ՄԵԾԻՐԱՆԻՑ ՎԱՆՔԸ)
- 111 ԵՂԻՇԵ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔ
- 119 ԵՐԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՎԱՆՔ
- 125 ԳՏՉԱՎԱՆՔ
- 131 ՇՈՒՇԻԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՊԱՀՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԸ
- 137 ԵՐԿՈՒ ԱՎԵՏԱՐԱՆ, ԵՐԿՈՒ ՃԱԿԱՏԱԳԻՐ
- 146 Պատկերացանկ
- 153 Օգտագործված գրականության ցանկ
- 160 Summary

Կարեն Մաթևոսյան
Թամարա Մինասյան

ԱՐՑԱԽ

ՎԱՆՔԵՐ, ԵԿԵՂԵՑԻՆՆԵՐ ԵՎ ՋԵՌԱԳՐԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Ս. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչության գլխավոր խմբագիր՝ Արփինե Չանթիկյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝ Ս. Սկրտիչ եպս. Պռոշյան
Ս. Գևորգ եպս. Մարոյան
Ս. Շահե Ծ. վրդ. Անանյան
Ս. Ռուբեն վրդ. Չարգարյան
Ս. Հուսիկ արդ. Սմբատյան
Ա. Բոգոյան
Վահե Թորոսյան
Կարեն Մաթևոսյան

Ձևավորումը՝ Արամ Ուռուտյանի
Սրբագրիչ՝ Սիրանուշ Գրիգորյան
Տեխնիկական խմբագիր՝ Դևոնդ ավագ քահանա Մայիլյան

Կազմի Ա երեսին՝ Եղիշե (Եղիշա) առաքյալի վանքը (լուսանկարը Սլավա Մարգարյանի)
Բ երեսին՝ «Վերջին ընթրիք», Ավետարան, 14-րդ դ. (ՄՄ 316, էջ 11ա):

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ - 2025
ԱՆՏԵՆՈՐ տպագրատուն

